



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

241

U-17

1903/06

2226

241

4

W-1204

АНДРОПОВСКАЯ ГОР.  
1825

А. ЕНКАНДРОП. ГОРОДСКАЯ  
Цѣна кн. ..... р. 70 к., пер. 10 к.  
БИБЛИОТЕКА ЧИТАЛЬНЯ

2010

В 2001



241

30

4-17

Ծ Ր Ա Գ Ի Ր

Կ Ե Ն Ա Յ



«Լա. նկարագիրը ամեն  
բանէ գեր է վերոյ ե»

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ  
ՍԵՐՈՎԲԷ ՎՐԳ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ  
ՅԱԼԱՍՅԻ  
Ի Միաբանութիւն Ս. Մուսաղէմի



Կ. ԳԱԼԵՆՏ  
4-MOLHU CONSIPLE  
B. BALENTZ  
LIBRAIRE-EDITEUR

Կ. ԳԱԼԵՆՏ  
4-MOLHU  
ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ Յ. ՄԱՅՈՒՍՅԱՆ  
1903

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՆՆԱԿԱՆ  
Կ. ԳԱԼԵՆՏ  
Կ. ԳԱԼԵՆՏ

10003



ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ  
Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինանսնըչար եօզուշու, Կ. Պոլիս

معارف صومعه نظارت جلاله سنك ٤ رجب ١٣٢١ و ١٣ ايلول ١٩١٩

تاریخی و ١٢٥ نومردی رخصتنامه



78268-ակ

1407-87



ՅԱՌԱՋԱԲԱՆ

44

Հեղինակութիւն կամ թարգմանութիւն մը չէ՛ որ 'իւրյս կը հանենք այսօր մեր ԾՐԱԳԻՐ ԿՆՆԱՑԻ հրատարակութեամբ, այլ պարզապէս աշխատասիրութիւն մը: Գրական չէնքի մը ճարտարպետը կը հանդիսանանք անարժանարար, որուն նիւթերը կամ ատաղձները մեծագոյն մասամբ օտարներէն գնեցինք, կը խոստովանիմք. — բայց սակայն այդ նիւթերն ու ատաղձները գտնալ ու հաւաքել, թարգմանիլ կամ հայացնել, մաքրել ու կոկել, տաշել ու տեղաւորել՝ ըստ յարմարութեան, տանն և հինգ երկար տարիներու յամառ և անընդհատ ընթերցանութեան և աշխատութեան կարօտացան, որքան ալ ըստ ինքեան բան մը չերեւան կամ չհամարուին:

Սկսեալ 1887 թուականէն, երբ տակաւին ուսանող էինք Երուսաղէմի Վանուց կղերանոցին մէջ, մեզի սովորութիւն ըրինք տետրակ մը ունենալ միշտ մեր գրասեղանին վրայ, որոյ մէջ՝ մեր կարգացած գրքերէն, հանդէսներէն և ըրա-



գիրներէն կը հաւաքէինք կամ կը նօթէինք բարոյական, կրօնական, իմաստասիրական և այլն օգտակար և շինիչ գրութիւններու ծուծերը. երբեմն ալ կ'արձանագրէինք միեւնոյն տետրակին մէջ մեր մասնաւոր խորհրդածութեանց և սպաւորութեանց արդիւնքը և որովհետեւ մինչև ցայսօր ալ կը շարունակենք միեւնոյն սովորութիւնը, հիմա ունինք մեր գրասեղանին վրայ թիւ 26 տետրակը, իսկ մեր հաւաքածոներուն — մեծ թէ փոքր — թիւը հասած է մինչև 2728 : Ամէն մէկ խօսքի քով թիւ կը դնենք, իսկ ուրիշ տետրակի մը մէջ ալ թուահամարով կ'արձանագրենք մեր հաւաքածոներուն նիւթերը. — Օրինակի համար թիւ 1. — Առաքինութիւն, թիւ 2. — Խոհեմութիւն, թիւ 1721. — Հաւատարմութիւն և ըն. և ըն. :

Միեւնոյն բարի սովորութիւնը ունէին մեր դպրոցական ընկերներէն ոմանք ինչպէս և վանքին մէջ մէկ երկու ընթերցասէր կրօնաւորք : Մասնաւորապէս կը յիշենք Մշեցի Տ. Աւետիս Վարդ. Յովհաննէսեանը, որ — 1897 Մայիս ամսուան մէջ երբ պաշտօնով կը գտնուէինք Բեթլէհեմի Ս. Ծննդեան վանքը և երկուքնիս ալ ըստ մեր սովորութեան կ'աշխատէինք մեր հաւաքածոները ձոխացնելու — բարևարտութիւն ունեցաւ յանձնել ինձ իւր տետրակները՝ որպէս զի օգտուիմ անոնցմէ. փոխադարձաբար ես ալ իմ տետրակներս իրեն յանձնեցի՝ միեւնոյն նպատակաւ, և համոզուած եմ թէ երկուքնիս ալ հաւասարապէս օգտուեցանք իրարու աշխատութեանն : Անկէ յետոյ յիշեալ բարեջան վարդապետը, ձերութեան

և աչաց տկարութեան պատճառաւ այլեւս չշարունակեց իւր հաւաքելու գործը, այլ միայն հաւաքածոները ըստ նիւթին համահաւաքելով և կարգադրելով բաւականացաւ : Իսկ մենք ալ աւելի եռանդով և փութաշանութեամբ շարունակեցինք մեր գործը, առանց սակայն որոշ նպատակ մը ունենալու. և կրնանք ըսել թէ հայերէն լեզուա գրեթէ չկայ, գրաբար կամ աշխարհաբար, բարոյական, իմաստասիրական, խրատական և մեկնարանական գիրք մը, զոր — տասն և հինգ տարիներու ընթացքին մէջ — այսպէս կամ այնպէս ձեռք ձգած, կարգացած, օգտուած և նօթեր հաւաքած չըլլանք. թողունք բազմաթիւ հին և նոր թերթերու և հանդէսներու յօդուածները, և պատահաբար մեր կարգացած թուրքերէն և ֆրանսերէն գիրքերը :

Հասաւ 1900 տարեգլուխի թուականը, երբ մենք Հոգեւոր պաշտօնով Յոսպէի Վանքը կը գտնուէինք, և ինչպէս ամէն տեղ նոյնպէս հոն ալ, օգտուելով ամէն առիթէն՝ կը շարունակէինք մեր գրական աշխատութիւններն ու հաւաքումները : Հոն մտադրութիւն ունեցանք և սկսանք մեր Ծրագիր Կեանքի պատրաստութեան, և հազիւ թէ ծրագիրին ծրագիրը պատրաստած էինք՝ երուսաղէմ վերագառնալով Վանուց Գրատուն-Ընթերցարանին տեսուչ կարգուեցանք (1901 Մարտ 5) :

Այդ պաշտօնը թէպէտեւ մեր գրասիրական փափաքներուն և նպատակներուն քաջայարմար գործ մը, սակայն դժբախտաբար պարտաւորուած էինք պաշտօնավարելէ առաջ պաշտօնավարու-



Թիւնը պատրաստել ու ընդարձակ գրատունը մաքրել և կարգադրել, հազարաւոր (տպուալ) գրքերու կանոնաւոր ցուցակը պատրաստել՝ թէ՛ ընդհանուր և թէ՛ այբուբենական կարգաւ, և նորահաստատ Ընթերցարանը կազմակերպել. այս ամէնը ամբողջ տարի մը տեւեցին, ըստ որում բոլորովին միայնակ էի: Եւ այս բոլոր կարգադրութեանց աւարտումէն անմիջապէս յետոյ (1902 Մարտ 3) Դամասկոսի Հայ Ժողովրդեան հովիւ ընտրուելով՝ մեկնեցայ Տէրունական քաղաքէն՝ առանց անձնապէս որեէ կերպով օգտուիլ կարենալու այդ կրկին հաստատութիւններէն:

Ինչպէս որ Գրատուն-Ընթերցարանի տեսչութեանս միջոցին պարտաւորուած կ'զգայի ինքզինքս ամէն ուրիշ զբաղում մէկ կողմ ձգելով՝ պաշտօնիս պահանջումները միայն գոհացնել, նոյն վիճակն ու կացութիւնը ունեցայ նաև, ի Դամասկոս, պաշտօնավարութեանս առաջին ամիսներուն մէջ. բայց հետզհետէ գործերը թեթեւալով, աւելի ճիշտը՝ մենք տեղական գործերու հմտանալով և ընտելանալով, կարողացանք փոքր ի շատէ ժամանակ գտնալ և մեր ի Յոսպէ սկսած Ծրագիր կենացը՝ յաջողութեամբ Տեառն աւարտել և հրատարակութեան տալ. — առաջի աջաց ունենալով միայն և միայն մեր համայնքի, մասնաւորապէս մեր — ամէն դաւանանքէ — երիտասարդութեան բարոյական, մտաւորական և նիւթական օգուտը:

Արդէն ըսինք ի վեր անդր թէ՛ Ծրագիր կենացի պարունակած խօսքերուն շատ քիչերը ուղ-

ղակի մեր ուղեղին ծնունդն են, միայն թէ քիչ յոգնութիւն պատճառած չէ մեզի՝ բազմաթիւ փիլիսոփաներու, իմաստուններու, բարոյախօսաներու և այլն շատ անգամներ խրթին և դժուարահասու կընալի խօսքերն ու բացատրութիւնները թարգմաննէն, պարզ և դիւրամարտելի ընելն ու բարեփոխելը, որպէս և ըստ նիւթին շարադասելը:

Չուզեցինք, մանաւանդ թէ աւելորդ համարեցինք, իմացնել մեր ընթերցողաց թէ՛ այս ինչ կամ այն ինչ խօսքը ով ըսած է կամ գրած. — Սողոմն թէ Պղատոն, Նարեկացի թէ Շնորհալի, Հիւլիօ թէ Փասքալ, Շոբենհաւեր թէ Պօսիւէ: Ինչ հարկ կայ այս առթիւ մտքեր ծանրաբեռնելու. շատ մեծ մարդ մը կրնայ շատ պզտիկ խօսք մը խօսած կամ գրած ըլլալ և շատ պզտիկ մարդ մ'ալ շատ մեծ և նշանաւոր խօսք մը. — մեզի համար կարեւորը այն չէ թէ ով է խօսողը, այլ այն թէ ինչ է խօսածը:

Ծրագիր կենացը մեր հաւաքածոյին միայն մէկ երրորդ մասն է: Եւ ինչպէս կը տեսնայ յարգելի ընթերցողը՝ մեր գործը ամսուան օրերուն թուովը երեսուն և մէկ գլուխներու, այսինքն նիւթերու բաժնած, և մեր տեսարակներու մէջէն այդ նիւթերու վրայ եղած խօսքերու և գրութիւններու լաւագոյններն ու ընտիրները միայն զատած և ի մի հաւաքած ենք. ի վերջոյ կցած ենք նաև, «յաւելուած» մը: Տեսնա՛նք, եթէ մեր այս գործը յաջողութիւն և ընդունեւելութիւն գտնայ մեր հասարակութեան մօտ,



երկրորդ տպագրութեան ժամանակ կ'աշխատինք կրկնապատիկ ճոխացնել մեր ծրագիրը այսինքն փոխանակ Յի 62 նիւթ ընտրել մեր տետրակներէն :

Երբեմն հանդիպած ենք անանկ խօսքերու , որոնք երկու կամ աւելի նիւթերու միանգամայն կը յարմարէին . — օրինակի համար « երջանիկ է այն , որ ունի ճշմարիտ բարեկամներ » խօսքը կարելի էր դնել թէ՛ բարեկամութեան մասին մէջ և թէ երջանկութեան . բայց մենք միայն մէկին — երջանկութեան — մէջ դնելով բաւականացանք , նոյնպէս ուրիշ խօսքեր :

Մենք մեր մասին այս հաւաքածոյ գեղեցիկ խօսքերէն մեծապէս օգտուած . ամէն ժամանակ և ամէն վիճակի մէջ մեր կացութեան յարմար խօսք մը գտած տետրակներուն մէջ , անոր վրայ խորհրդածած և մխիթարուած ենք : Չենք կարող ըսել կամ պարծենալ թէ՛ այսօր մեր ՅՅ ամեայ երիտասարդ հասակին մէջ բարի և գովելի նկարագրի տէր մէկն ենք . մեր կողմէն այդպիսի խօսք մը իսկ բաւական պիտի ըլլար իմացնելու ընթերցող հասարակութեան թէ՛ այնպիսի նկարագրէ մը զուրկ կը գտնուինք . — բայց և այնպէս կը խոստովանինք թէ ազէկ գէշ մեր ներկայ նկարագրին համար շատ բան կը պարտինք մեր տետրակներուն : Եթէ այսօր չունինք այն բարձր և ուղիղ նկարագիրը , որուն կը ձգտինք սակայն օր ըստ օրէ , հաւանականաբար աւելի ցած նկարագիր մը պիտի ունենայինք , առանց մեր տետրակներու օգնութեան :

Մենք համոզմամբ գիտենք թէ՛ այսպիսի օգտակար գեղեցիկ և շինիչ խօսքեր — որոնք աւելի ակորթելի են իմաստասէր մարդու սրտին , քան որեւէ երաժշտութիւն մեր ականջներուն , և որոնք զոհարհներէ աւելի անգին են հասկցող մարդուն համար — պարբերաբար թերթերու մէջ այնպէս տարակուելով հաճելի եղած են ընթերցողաց : Կը յիշենք որ 1897—98 թուականներուն երբ մենք սկսանք մեր հաւաքածոն անկարգ կերպով (ինչպէս որ հաւաքած էինք) հրատարակել Մանգումե Շարաթաթերթին մէջ , ընթերցողներէն շատեր զոհունակութեան նամակներ գրեցին մեզի , ոմանք ալ հրապարակաւ իրենց շնորհակալութիւնը յայտնեցին միեւնոյն թերթին մէջ , Հիմա որ միեւնոյն խօսքերը՝ կոկուած , մաքրուած և կանոնաւորուած , առանձին հատորով լոյս կը տեսնան , անշուշտ շատեր պիտի փափաքին մէյմէկ օրինակ ունենալ իրենց գրասեղանին վրայ և ուշադիր ընթերցմամբ օգտուիլ :

Թերեւս դիտողներ և մտածողներ ըլլան թէ՛ աւելի լաւ չէ՛ր ըլլար , փոխանակ նիւթի մը վրայ իրարմէ անկապ խօսքեր շարելու , այդ խօսքերէն օգտուելով ամփոփ ձևեր կամ յորդորականներ գրուէր . — մենք այդ գաղափարէն չենք մեր մասնաւոր համոզումով՝ սլաքական կարծ խօսքեր աւելի ուժով կազդեն մեր սրտին և մտաց , քան թէ երկար բարակ քարոզներ և խրատականներ : Սողոմին « Ծանիր զեց » ը ինքնաճանաչութեան վրայ գրուած քառասուն հատ ճառ կ'արժէ , իսկ Նիւսացւոյն « Գրիստոնէի պարտ է այլ ոմն Գրիս-



տոս լինել» հռչակաւոր խօսքը՝ ամբողջ Աւետա-  
րանը կը պարունակէ իր մէջ . . . :

Ծրագիր կենացը օգտակարապէս գործածելու  
եղանակին գալով, պիտի խնդրենք մեր ազնիւ  
ընթերցողներէն, որ զայն իբրև պատմութիւն կամ  
վէպ միայն մէկ անգամ կարդալով՝ մէկ կողմ  
չնետեն, այլ պահեն զայն իրենց գրասեղանին  
վրայ և սովորութիւն ընեն իրենց համար օրը միայն  
մէկ գլուխ ամենայն ուշադրութեամբ և մտաուշ  
թեամբ կարդալ, իսկ կիրակի օրը սովորական  
գլուխէն զատ նաև Յաւելուածը ամբողջովին կար-  
դալ. — որով մէկ ամսուան մէջ ամբողջ ծրագիրը  
միայն մէկ անգամ, իսկ յաւելուածը չորս կամ  
հինգ անգամ կարդացած կ'ըլլան: Բաց աստի  
պիտի խնդրեմ նաև որ ամէն օր իրենց կարդացած  
գլուխէն խօսք մը պահելով մտքերնին, օրը քանի  
մը անգամ խորհրդածեն այդ խօսքին վրայ. —  
այսպէսով գէշ խորհուրդներ ինքնին տեղի կուտան  
մեր մտքին մէջ բարի մտածումներու («ամօթ-  
անոր, որ գէշ խորհի») և այդ շինիչ ու օգտակար  
խօսքեր մեր մէջ մարմին և արիւն կը դառնան և  
մենք կը բարեխոխուինք յայր այլ:

Տայր Աստուած, որ մեր այս ծրագիրը եւս  
առաւել մօտեցնէր մեր սիրելի ընթերցողները  
կեանքի մեծ ծրագրին — Աւետարանին — և կեանքի  
մեծ օրինակին — Քրիստոսին:

Եթէ օր մը գործնականապէս համոզուինք թէ՛  
մեր այս փանաքի աշխատութիւնը օգտակար ար-  
դիւնքներ յառաջ բերած է մեր սիրելի համայնքին  
մէջ, եթէ համոզուինք թէ՛ մեր այս աշխատու-

թեամբ գոնէ մէկ հատ Հայ-Քրիստոնեայ (գաւա-  
նութիւններու հետ գործ չունինք) երխտասարդի մը  
բարի և առաքինի նկարագիր ունենալուն պատ-  
ճառ եղած ենք, այն ժամանակ և միայն այն ժա-  
մանակ մեր ուրախութիւնը կատարեալ պիտի ըլ-  
լայ և մենք զմեզ լիովին և առատապէս վար-  
ձատրուած պիտի համարինք:

Ս. ՎՐԴ. ՍԱՄՈՒԷԼՅԱՆ

1 Դեկտ. 1902  
Դամասկոս



# ԾՐԱԳԻՐ ԿԵՆԱՑ

ԳԼՈՒԽ Ա.

## Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ

### ՅԻՍՈՒՍ ԿՐԻՍՏՈՍ

**Ս**ՈՎՈՐԱՄՈԼՈՒՓԵԱՄԲ չպաշտենք  
զԱստուած՝ այլ զխտակցութեամբ :

\* \*

Ձիք ինչ ինձ այնպէս քաղցր՝ որպէս զլինկըն  
իմ ընդ Աստուծոյ :

\* \*

Աստուած յաճախ կուգայ մեզի, բայց ընդ-  
հանրապէս մենք տունը չենք գտնուիր :

\* \*

Ամէն ժամ, որ դէպի Աստուած չէ, աճում  
մ'է դէպի քայքայում և մահ :



Աշխարհիս քաղցրութեանը հետ Աստուած իմաստութեամբ խառնած է առողջացուցիչ դառնութիւններ :

\* \* \*

Լաւագոյն է մութի մէջ բնակիլ Աստուծոյ հետ, քան արեւուն միջօրէի պայծառ լուսովը ողողուիլ՝ առանց Աստուծոյ :

\* \* \*

Ամէն ճշմարիտ յաջողութեան արմատն է հաւատք և վստահութիւն յ'Աստուած :

\* \* \*

Ամէն բան զԱստուած կը քարոզէ: Չկայ տիեզերաց մէջ խոտի շիւղ մը, որ զԱստուած չապացուցանէ :

\* \* \*

Ոմանք զԱստուած նիւթի, ոմանք զօրութեան, ոմանք հանճարի մէջ կը փնտռեն. փոխանակ ամէն բան Աստուծոյ մէջ փնտռելու :

\* \* \*

Աստուած աղբիւր է ամենայն վայելչութեանց և բարութեանց, և մարդ անոր հետ հաղորդութիւն ունենալով կ'ըլլայ երանելի :

\* \* \*

Չեր գլխաւոր ուրախութիւնը փնտռեցէք Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ և Աստուծոյ կամքը հաստատապէս կատարելու մէջ :

Երեքսրբեան Աստուածութիւնը կը պահանջէ, որ ամէն տեղ ամէն ժամանակ և ամէն բանի մէջ սուրբ ըլլալու և սուրբ մնալու ջանքեր ընենք :

\* \* \*

Մի ըսէք չատերու պէս. — « այսօր ուտեմ, վաղը Աստուած ողորմած է » . — Աստուած ողորմեցաւ այն առեն երբ խելք տուաւ մեզի :

\* \* \*

Յիսուսի նմանելու ջանքով եղած գործնական Բրիստոնէութիւնը ո՛րչափ կ'ազնուացնէ, կը բարձրացնէ և կը կատարելագործէ մարդկային նկարագիրը :

\* \* \*

Մարդու սիրտը ստեղծուած է Աստուծոյ համար և այս է պատճառն, որ նա անհանգիստ է միշտ և չհանդարտիւր երբէք, մինչև որ չհանգըստանայ Աստուծոյ մէջ :

\* \* \*

Միակ մնայուն և անփոփոխ ուրախութիւն է Յիսուս Փրկիչն ունենալ մեր սրտին մէջ, և ամենօրեայ կեանքով Անոր ծառայել, Անոր սիրոյ լոյսին մէջ քալել :

\* \* \*

Առանց Աստուծոյ ապրիլը՝ քան զմահ դառնազոյն է: Մարդիկ միայն Աստուածային խնամոց և հովանւոյ ներքե կրնան մնալ կամ ապրիլ անփորձ և անդորր :



Եթէ ճշմարտապէս կը ճանչնամ զԱստուած, աւելի իմաստուն եմ՝ քան ամենամեծ գիտնականը. — եթէ կը լսեմ Աստուծոյ, աւելի բարեկիրթ եմ՝ քան ամենանուրբ ազնուականը:

\* \* \*

Եթէ Աստուած մեր ամբարշտութեան չափով կշռէր ու դատէր զմեզ, ո՛ր կը մնայինք և ի՞նչ կը լինէինք: Բայց կը խնայէ մեզի, յօգնութիւն կը ժամանէ մոլորեալ մարդոյն:

\* \* \*

Երբէք Աստուած չլքաներ իրենները: Իւր սէրը գաղտնիքներ ունի, որք անձանօթ են մեզ: Հաւատանք, յուսանք, սիրենք և խաղաղութեամբ յառաջ վարեմք մեր ճանապարհը:

\* \* \*

Հեշտութիւնները թէև մարդկանց սիրտը կը գրգռեն, բայց չեն յագեցնէր. ոչ աչքը տեսնելով կը յագենայ և ոչ ականջը լսելով. — ուրեմն միայն եւ միայն Աստուած է մարդկանց փափաքանաց լրումը:

\* \* \*

Չափազանց յոյսեր մի դնէք աշխատասիրութեան, չափաւորութեան և խոհեմութեան վրայ. — թէև ասոնք պատուական բաներ են, բայց առանց Աստուծոյ օրհնութեան՝ ամենայն ինչ կը մնայ ընդունայն:

\* \* \*

Թ'Աստուած հաւատալ՝ կը նշանակէ ճանապարհորդել դէպ յերջանկութիւն. — յԱստուծոյ երկնչիլ, աղօթել առ Աստուած՝ կը նշանակէ առաւել ևս մօտենալ երջանկութեան. — զԱստուած սիրել՝ կը նշանակէ բոլորովին երջանիկ ըլլալ:

\* \* \*

Մեր ամբողջ կեանքն ու գոյութիւնը, իւր բոլոր բարեմասնութիւններով և ստորագելեօք, Աստուծոյ ընդունած ենք և Աստուծոյ կը պարտիմք: Ուրեմն ապերախտ կը լինինք եթէ անթերի չհատարենք մեր պարտականութիւններն առ Նա:

\* \* \*

Որքան մարդիկ կան, թէ՛ հին ժամանակ և թէ՛ մեր ատեն, որ իրենց կարծիկ խելքով կը դատեն Աստուծոյ կամքին ըրած բաները, և զարմանալի կուրութեամբ մտաց՝ երբէք չեն տեսներ անոնց ոչ նպատակը և ոչ անթիւ ճամբաները:

\* \* \*

Մարդոց բոլոր հաշիւները պէտք է ջնջուին և բոլոր զօրութիւններն ընկճուին Աստուծոյ առջեւ. ամէն ինչ իրրև միջոց պէտք է ծառայէ Անոր սուրբ կամքը յառաջ տանելու համար. — ահա Աստուծոյ ճշմարիտ պաշտօնէի դաւանութիւնը:

\* \* \*

Եթէ լաւ ըմբռնենք Աստուծոյ էութիւնն՝ շուտ կը դադրին ի մեզ սին փափաքներ, մարմնասէր

1407-87

96





ձգտումներ և մոլեկան կիրքեր : Յայնժամ ինքնին կը տաղականամք հեշտական հաճոյքներէ և կշտացած կը լինիմք ամէն բանէ :

\* \*

Մարդուս իւր ձեռքն է իր անձնական վիճակը բարւոքել : Մարդուս ձեռքն է մինչև Աստուած բարձրանալ , ճշմարիտ անմահութեան արժանի ըլլալ , կամ բոյսերուն հաւասար գետնաքարչ կեանք մը վարել :

\* \*

Ամէն մարդ գիտուն լինելու բնական փափաք մը կը տածէ , բայց մարդոց համար պիտանի և կենսական գիտութիւնն է ճանաչել զԱստուած , սիրել զՆա և պահել Անոր հրամանները : Ի զուր կը ջանայ ոք երբ այս տարրական և բարոյական սկզբունքները չունի :

\* \*

Ո՛րչափ աւելի աշխատինք հոս Աստուծոյ համար նոյնչափ աւելի պիտի վայելենք զԻնք հանդերձեալին մէջ : Ձեր ականջները բացէ՛ք պարտականութեան ամէն ձայնի , ձեր հոգւոյն բոլոր դռները և պատուհանները բացէ՛ք Յիսուսի լոյսին և սիրոյն , ողողուեցէ՛ք անոնց ճառագայթներով , և ահա « ձեր ուրախութիւնը կատարեալ » պիտի ըլլայ :

\* \*

Ո՛վ Աստուած , Քեզի հետ խօսելու երջան-

կութիւնը մարդոց հետ տեսնուելու երջանկութենէն շատ աւելի անսահման է և քաղցր : Թէև բնակիչներով լեցուն քաղաքներէ հեռու ըլլանք , թէև ամայի անապատի և մութի մէջ ըլլանք , սակայն քանի որ Դուն մեր քոյլն ես՝ յանձունս ուրախ ենք , որով ամէն ժամ Քեզի հետ խօսելու երջանկութիւնը կը վայելենք :

\* \*

Մի՛ խորհիք այնպէս՝ ինչպէս կ'ուզէք , այլ խորհեցէ՛ք այնպէս՝ ինչպէս պարտիք : Մի ըսէ՛ք՝ « չեմ կրնար խորհուրդներս զսպել » . — Ձեր պարտքն է զսպել զանոնք : Դիւրին չէ , բայց գերադրապէս անհրաժեշտ է : Եթէ ձեր երեւակայութիւնը Բրիտտոսի կը հակառակի . — մերժեցէ՛ք : Եթէ ձեր խորհուրդները չեն հնազանդիր Անոր հրամանին . — նուաճեցէ՛ք , ճնշեցէ՛ք զանոնք : Թող ձեր միտքը անհնազանդ չըլլայ Բրիտտոսի :

\* \*

Որչափ որ մարդս յառաջադիմէ՝ այնքան աւելի պէտք է հաւատայ թէ՛ Աստուծոյ մօտենալը լաւագոյնն է : Ամէն բանի վերն Աստուած է , չի մոռնանք զԻնքը և ամէնուն քարոզենք : Պիտի չըլլար ապրելուն մէջ արժանապատուութիւն , և թերեւս չարժէր իսկ ապրիլ եթէ մահուամբ պիտի ոչնչանայինք : Այն որ , աշխատութիւնը կը սրբացնէ և զայն կը թեթեւցնէ , այն որ զմարդ բարի , խոհեմ , արդար , բարեացակամ , խոնարհ , մեծ կ'ընէ , արժանաւոր



միանգամայն իմացականութեան և հոգեւոր ազատութեան, է ունենալ աչացը դիմաց լաւագոյն աշխարհի մը կատարեալ տեսութիւնը, որ այս կենաց խաւարին մէջէն փայլի անմահ ճառագայթիւք:

\* \* \*

Եթէ կ'ուզենք գիտնալ Աստուծոյ ճշմարտութիւնը՝ յաջող միակ միջոցն է սերտիւ ճանչնալ զՔրիստոս: Ամէն հնարաւոր միջոցներով կրկին կրկին ուսումնասիրեցէ՛ք Յիսուսի կենաց և վաւրուց, խօսքերուն և գործերուն պատմութիւնը զոր ունինք, անոր ամբողջ կեանքն, հնազանդութեան մինչև այն վերջին խօսքերը զորս արտասանեց խաչին վրայ: Սերտեցէ՛ք Անոր պատմութիւնը և աղօթեցէ՛ք. աղօթեցէ՛ք և սերտեցէ՛ք դարձեալ մինչև որ Յիսուսի խօսքը ձեր մէջ կենայ և դուք Անոր մէջ:



ՓԼՈՒԽ Բ.

—

Ս Ս Տ ՈՒ Ս Ծ Պ Ս Շ Տ ՈՒ Թ Ի Ի Ն.

ԵՒ

Բ Ա Ր Ե Պ Ս Շ Տ ՈՒ Թ Ի Ի Ն.

Ուր կան բարեպաշտութեան սերմունք, անդ ի վեր կ'երեւին բարեկարգութեան ընձիւղք:

\* \* \*

Ճշմարիտ աստուածպաշտութեան դիւսաւոր ստորագելիք են. — խոնարհութիւն և հեղուցիւն:

\* \* \*

Ամբողջապէս բարեպաշտութեան նուիրուած կեանքը՝ չափազանց նպաստաւոր է երկարակեցութեան:

\* \* \*

Ճշմարիտ բարեպաշտութիւնը կը բարձրացնէ հոգին և կ'ազնուացնէ սիրտը:

\* \* \*

Առանց բարոյականի մարդկութիւնն անկեալ է, և առանց աստուածպաշտութեան՝ չիք ճշմարիտ բարոյական կեանք:

\* \* \*

Աշխարհային իմաստութիւնը անշահ և անօգուտ է, եթէ չունենայ իրեն լծակից ճշմարիտ աստուածպաշտութիւնը:



Եկեղեցականի մը առաջին ուսումը աստուած-  
պաշտութիւնն է . միւս բոլոր գիտութիւնք՝ այն  
գերագոյն իմացուածներն հասկնալու պիտի ծա-  
ռայեն :

\* \* \*

Ուրախութիւն , հանգստութիւն ու զուար-  
ճութիւն կ'ըսէք և կը սիրէք զանոնք . — անոնց  
ամէնուն ալ համն առի ու վայելցցի ընդ երկար .  
Աստուծոյ ծառայելուն պէս ուրախութիւն , հան-  
գըստութիւն և զուարճութիւն չկայ :

\* \* \*

Որչափ ալ ազդեցութիւն ընէ դաստիարակու-  
թիւնն ումանց մտքին վրայ , ո՛չ բանը և ո՛չ փոր-  
ձառութիւնը կը թողու մեզի յուսալ թէ՛ մարդ մը  
կրնայ աղէկ բարոյական ունենալ , եթէ աստուած-  
պաշտութեան սկզբունքը արմատացած չէ անոր  
սրտին մէջ :

\* \* \*

Երիտասարդ բարեկամներս , չար սովորու-  
թիւններէն զձեզ պահելու համար , որոնք ձեր  
պատանեկան հասակը կը խանգարեն և պատճառ  
կը լինին ձեր բոլոր կեանքը թշուառաբար անցը-  
նելու , աստուածպաշտութենէ ուրիշ աւելի օգ-  
տակար և ազդու միջոց չկայ :



ՊԼՈՒԽ ՊՅ.

Ա. Ղ. ՕԹ. Ք

Աղօթքն է վերացումն մտաց առ Աստուած :

\* \* \*

Աղօթքը հայելի մ'է , ուր հոգին կը տեսնէ  
իր բոլոր բիծերը :

\* \* \*

Խղճի անդորրութեան միակ դեղթափն է ա-  
ղօթքը :

\* \* \*

Ո՛վ որ աղօթքի չի դիմեր՝ փորձութեան կը  
դիմէ :

\* \* \*

Վա՛յ մեզ , եթէ մեր աղօթքները չընեն զմեզ  
աւելի խոնարհ , և աւելի արթուն մեր թերու-  
թեանց մասին :

\* \* \*

Ո՛վ որ աղօթքը կը ձգէ՝ քիչ ատենուան մէջ  
կամ անբան կը դառնայ կամ սատանայ :

\* \* \*

Ո՛վ որ ստէպ աղօթք չընէր՝ կը զրկուի այն  
կապէն որ զհոգին Աստուծոյ հետ կը կապէ :

\* \* \*



Ինչպէս որ խոունկը կրակը կ'արծարծէ, այնպէս ալ աղօթքը վառ կը պահէ առ Աստուած յոյսը, մարդու սրտին մէջ :

\* \* \*

Այն միակ աղօթքը, որ կրնայ Աստուծոյ հաճելի ըլլալ, խնդրելն է Աստուծոյն ո՛չ թէ մերը, ա՛յլ իւր կամքը, որ կատարուի :

\* \* \*

Մինչև իսկ ձեր թշնամիաց համար աղօթեցէ՛ք և քիչ ատենէն պիտի սիրէք զանոնք :

\* \* \*

Աղօթող և մտածող հոգին՝ աշխարհիս բոլոր փորձութեանցը մէջէն յաղթական կ'ելնէ :

\* \* \*

Տրտմութիւնը տանդ մէջ դիմացդ կեցած է . ցորչափ Աստուծոյ առաջ աղօթքի կենաս՝ անիկայ քեզ չկրնար մօտենալ :

\* \* \*

Աղօթքը ստուգիւ առաքինութիւն չէ, բայց ամէն առաքինութեանց սկիզբն է : Աղօթել, և բարւոք աղօթելն է՝ պատրաստ լինել աղէկ ապրելու :

\* \* \*

Աղօթքը՝ հոգւոյն վէրքը բուժող բալասանն է, երկիրն երկնից հետ միացնող նուիրական հան-

գոյցն, և մարդու ու Արարչին մէջ անտեսանելի միջնորդն :

\* \* \*

Շարունակէ՛ աղօթել միշտ առ Աստուած, սիրել բարին և կատարել պարտքդ, այն ժամանակ գո՛հ և երջանիկ պիտի լինիս երկրիս վրայ :

\* \* \*

Աղօթքը պայծառ արշալոյսի պէս է, որ մեր ցաւերուն վրայ կը ծագի, խաւարը անկէց փարատելու և հոն ցուցնելու համար երկինքը՝ մեր արտասուածքը աչքերուն :

\* \* \*

Աղօթքին երկարութիւնը չէ զայն արդիւնաւոր ընողը, այլ անոր հոգին, որով կը մատուցուի Շրթանց և բերնի խօսքերը չեն՝ այլ սրտին եռանդուն թախանձանքը :

\* \* \*

Ով որ կը յարատեւէ աղօթքի մէջ, ո՛րչափ մեղքի մէջ ալ ինչայ և գլտորի, ապահով եմ որ վերջապէս Աստուած այնպիսին փրկութեան նաւահանգիստը կ'առաջնորդէ :

\* \* \*

Նա որ կ'ուզէ աղօթել՝ պէտք է վտարէ մրտքէն չար խորհուրդները և ամէն երկրաւոր ցանկութիւն . պէտք է սիրտը երկինք բարձրացնէ, մոռնայ նախատինք և ներէ թշնամիներուն :



Աղօթքն՝ առաքինութեանց հիմը , երկնքի և երկրի բարութիւնն է . գործողութիւնն այն կամքին , որ Աստուծոյ կը դառնայ : Սրտի տրոփման պէս է , որ է կեանքի յայտարարն ու կապը : Ով որ չաղօթեր՝ մեռած է բոլորովին :

\* \* \*

Երբ կ'աղօթես չե՞ս զգար սիրտդ թեթեւագոյն , հոգիդ ալ աւելի հաճ : Աղօթքը՝ տառապանքը նուազ ցաւագին և ուրախութիւնն աւելի անբիծ կ'ընէ , մէկուն մէջ , չգիտեմ ինչ զօրաւոր և անուշ բան մը կը խառնէ և միւսին հետ՝ երկնային բուրում մը :

\* \* \*

Երբ աղօթք և բարեպաշտութիւն մարմնաւոր բարեաց յուսով կը լինին , Աստուծոյ հաճելի չեն . — այլ նկատելու եմք զայնս՝ բնական և անհրաժեշտ հարկ , ինչպէս զգեհուլ , ննջել , քաղցնուլ , ծարաւիլ և այլն : Անկեղծ սրտէ բղխած աղօթքը և առաքինի գործերն են , որ կը մերձեցնեն զմեզ առ Աստուած :

\* \* \*

Աղօթք Աստուծոյ , որ թէ՛ հոգեւոր մխիթարութիւն և թէ՛ բժշկութիւն պարգեւէ մեզի : Անիկա ամէնուս ալ հայրն է , ու գիտէ ինչ որ պէտք է մեզի : Ան միայն կարող է ամէնէն ուղիղ , ամէնէն օգտակար խորհուրդները թելադրել մեզ , և մեր կեանքին մեծ ճգնաժամերուն մէջ մանա-

ւանդ պէտք է գիտնանք մեր յոյսն Անոր վրայ դնել , և Անկէ սպասել ամէնէն բարի խորհուրդներն ու ընթացքի կանոնները :

\* \* \*

Կան մարդիկ որ կ'ըսեն . — «Ինչ չա՛ն և օգուտ աղօթելէն . միթէ Աստուած քան զմեզ լաւ չգիտե՞ր ինչ որ պիտոյ է մեզի» : Այո՛ , Աստուած քան զձեզ լաւ գիտէ ինչ որ պիտոյ է ձեզ , և անա ասոր համար կ'ուզէ որ խնդրէք զայն իրմէ . վասն զի Աստուած ինքն է ձեր առաջին պիտոյքը . և աղօթել Աստուծոյ , զԱստուած ունենալու սկսիլ կը նշանակէ : Հայրը գիտէ և կը ճանչնայ իր որդւոյն պիտոյքը . բայց ասոր համար պէտք է որ որդին առ իւր հայրն խնդրուածք մը կամ գոհութիւն մը չյայտնէ՞ երբէք : Երբ անասունները ցաւ մը կ'զգան , երբ կը վախնան , կամ երբ անօթի են՝ ցաւագին ճիչեր կ'արձակեն : Այս ճիչերն իրենց աղօթքն են , զոր առ Աստուած կ'ուղղեն , և Աստուած զայն կը լսէ : — Պէ՛տք է ուրեմն որ բովանդակ արարչութեան մէջ մարդը միակ էակն ըլլայ , որոյ ձայնը չբարձրանայ բնաւ յ'ունկն Սրարչին :





Կ Ի Օ Ն Բ

Կրօնք. — ահա սպեղանին իրական կեանքի մէջ անբուժելի համարուած հոգեկան վէրքերուն :

\* \*

Կրօնքը մարդկանց բարոյականութեան խաբխիսիս և կապն է :

\* \*

Կրօնքը գիտութեան մեծագոյն միջոցն է . — թէպէտ չէ կարող չունեցողին հանճար տալ , սակայն եղածն յանչափս կը բարձրացնէ :

\* \*

Արդարև առանց կրօնից խորին և զօրաւոր ազդեցութեան՝ ո՞ր տղան պիտի կարենայ անմեղ մնալ :

\* \*

Ամէն առաքինութիւններ կրօնքի վրայ յեցած են և անկէ կառնուեն ոյժ և հաստատութիւն :

\* \*

Մարդ որչափ Աստուծոյ մօտենայ , որչափ յարաբերութիւնը մտերմացնէ Ստեղծողին հետ , որչափ կրօնքին փարի , այնչափ կ'ազնուանայ :

\* \*

Առաքինի և բարեբարոյ ըլլալու համար՝ կարօտ եմք միշտ կրօնից ձեռնտուութեան , առանց որոյ չեմք կրնար դէմ կենալ մեր կրից սաստկութեան :

\* \*

Ով որ կը կարծէ թէ առանց կրօնի բարոյական կարելի է , նա վերացական մարդ մ'է միայն , որ զուրկ է գործունէութեան ուղղութենէն :

\* \*

Կրօնք և բարոյական՝ են երկու մեծ միջոցներ , մին աստուածային և միւսը մարդկային , որոնց միջոցաւ ներելի է մարդոց լինիլ լաւագոյն և հետեւաբար յոյժ երջանիկ :

\* \*

Աշխարհս կը պարծենայ թէ կրնայ զմեզ երջանիկ ընել . բայց կրօնքը միայն կարող է զմեզ մեծ պահել :

\* \*

Մայրենի լեզուէ զատ ո՞ր լեզուն աւելի իմանալի կրնայ ըլլալ մանկութեան : Եւ ահա կրօնքն մայր մ'է որ կը հանդարտեցնէ ակնարկով մը և սրտի հետ խօսող լեզուով խորհուրդներ կը յայտնէ :

\* \*

Անտեղի է ըսելն թէ կրօնական ուսումը պատշաճ է պահել հասունացեալ հասակի . — ո՞ր մի հասակ կարող չէ ըմբռնել արժանապէս Աստուծոյ գաղափարը , երբ ամէն ոք այս վսեմ գաղա-



փարով միայն կարող է մխիթարուիլ և ազնուանալ :

\* \* \*

Յուրտ և մեղկ սրտերը ազնուացնելու և շար-  
ժելու միակ միջոցն է կրօնասէր ընել զանոնք ,  
կրօնքը կուտայ մեզ ուժոյ մէջ՝ փափկութիւն ,  
սաստիկ յուզմանց մէջ՝ չափ , զորս մարդկային մի-  
ջոցք կը տկարացնեն և կ'անհետացնեն :

\* \* \*

Կրօնք մը ունենալ ամէն ինչ է , հաւատալը  
երջանկութիւն է . — և ուրիշ ի՞նչ բան մեզ պիտի  
գօտեպնդէ ընդդէմ կրից պայքարներու , որ կը  
գողան մեր մէջ , և ընդդէմ գոյութեան կուռոյն ,  
որ ամէն ժամանակ մեր կեանքին անբաժան ըն-  
կերն է տնտեսական պայմաններով :

\* \* \*

Ի վեր քան զամենայն , կրօնքը ըլլայ մեր  
տան թագուհին : Երբ կենաց երեկոն գայ և մեր  
երկրաւոր աշխատութիւնները մօտենան իրենց  
վախճանին , կրօնքը պիտի հրճուեցնէ զմեզ յաւի-  
տենական հանգստեան պայծառ ակնկալութեամբ :

\* \* \*

Պէտք է ամենքս ալ համոզուինք , որ առանց  
սրտի կրթութեան , մեր հոգեւոր յառաջդիմութեան  
բոլոր ծրագրերները դեղնած ու փոշելից թուղթե-  
բու վրայ մնալու դատապարտեալ են . և սրտի  
ճշմարիտ կրթութիւնն ալ միայն կրօնի մաքուր ու  
երկնային ազդեցութեամբ կարելի է ի գործ դնել :

Ամէն մարդ զիտնալու է որ քրիստոնէական  
կրօնքը եթէ սրտի մտօք ընդունուի՝ այս աշխար-  
հիս մէջ ալ զմեզ երջանիկ կ'ընէ : Մեր բռուրը  
կը թեթեւցնէ , արտութեանց մէջ կը մխիթարէ  
զմեզ , կը ընու մեր սիրտերը խաղաղութեամբ :

\* \* \*

Ինչպէս որ ճշմարտութիւնը գտնելու համար  
միայն մէկ մեթոտ կարելի է , նոյնպէս ալ ասպա-  
րէզի ընթացքին մէջ հոգեւոր յաջողութիւն գըտ-  
նելու համար միայն մէկ մեթոտ կայ , և այն բա-  
րոյական ուղղութիւնն է կրօնի հետ մարմնացած  
և նիւթականացած : — Անյողդողդ նկարագրի մը  
կազմութեան նկատմամբ ուրիշ շատ մը յատկու-  
թիւններ էական են , սակայն անոնք տակաւին  
երկրորդական են : Մարմնացեալ բարոյականն կամ  
կրօնն է բուն հիմնականը , միւսները անկէ կը  
բղխին :

\* \* \*

Երբ կրօնքը դաստիարակութեան մէջ իւր  
պահանջած գիրքը ստանայ , չի բաւականանար  
յանցանքը սրբագրելով , այլ և արմատախիլ կ'ընէ  
պակասութիւնները . — մաքրելով խիղճը՝ բնու-  
թիւնը կը նորոգէ , հաւատքը ուսուցանելով՝ կը  
զօրացնէ միտքը , սիրտը շարժելով՝ բարքը կ'ազ-  
նուացնէ : Ուրեմն կրօնքը միջոց մ'է , որ կը  
մտնէ դաստիարակութեան մէջ , կը սրբագրէ , կը  
լուսաւորէ , և կ'ոգեւորէ զայն . միւս ամէն ինչ  
կը խախտի , և ամէն ինչ տկար , ունայն , թիւր  
և անարգ է :



Ս Է Ր

Սիրէ թէ որ կ'ուզես սիրուիլ :

\* \*

Ան որ չի սիրեր չապրիր , և ան որ Աստուծով կ'ապրի չի մեռնիր :

\* \*

Երբ մեր մտքին մէջ Աստուած չի բնակիր , և և ոչ մէկ բան կարող ենք սիրել անկեղծ սիրով :

\* \*

Սէրը՝ սրտի , բարութիւնը՝ հոգւոյ , գիտութիւնը՝ մտքի ամէնաբնատր և թանկագին զարդերն են :

\* \*

Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , նա որ կը սիրէ՛ իւր սիրտը դրախտ մ'է յերկրի՝ զԱստուած ունի յինքեան , զի Աստուած սէր է :

\* \*

Սէրն անխոնջ է չի յոգնիր երբէք : Սէրն անսպառ է , կապրի ու կը վերածնի ինքեամբ , և ցորչափ աւելի զեղի՝ այնքան եւս կը յորդէ :

\* \*

Ծնողաց չափէ դուրս սիրած տղան կամ այն է որ աւագակ կ'ըլլայ եւ կամ մուրացկան :

\* \*

Աստուծոյ գիտումը եղած է մարդկութիւնը մեծ գերդաստան մը ընել , ուր ամէն մարդ սիրէ զԱստուած՝ առաւել քան զամենայն ինչ , և սիրէ զմարդիկ՝ իւր անձին նման :

\* \*

Ուղարկութենէ գեղեցիկ ի՛նչ կայ : Ճշմարտապէս համոզուած եմ որ , ատելութիւնն ու թշնամութիւնը դժողքէն ծագած են , իսկ սէրն ու բարեկամութիւնը՝ արքայութենէն :

\* \*

Սմէնաբովանդակ սէրը դէպ ի մարդկութիւն՝ մեր հոգւոյն մէջ ամէնալսեմ մի ձգտում կ'արթընցնէ . եւ այդ սիրոյ ազդեցութեան տակ ո՛չ միայն մենք ինքնին բախտաւոր կ'ըլլանք այլ եւ ուրիշներուն ալ բախտաւորութիւն կը հաղորդենք :

\* \*

Ոչ ոք կատարեալ է , ամէնքն իրենց թերութիւնը ունին . անձնիւր մարդ այլոց կը ծանրանայ , եւ սէրը միայն այս բեռը թեթեւ կը գործէ :

\* \*

Սիրուած լինելու երջանկութիւնը կատարեալ ըլլար առանց փոխադարձ սիրոյ : Աստուծոյ



բարձրագոյն շնորհը, Աստուածային սիրոյ վերջին խօսքը, Աւետարանի ամբողջ բովանդակութիւնը եւ փրկագործութեան վերջնական նպատակն այն չէ, որ սիրուած լինինք, այլ թէ «մենք սիրենք»:

\* \* \*

Ինչ խղճալի բան է մեր սրտերուն մէջ ամուր կղպուած պահել մեծ քանակութեամբ սէր, երբ մեր շուրջը այնքան անձեր կան սիրակարօտ: Եւ ի՞նչ պէս կարելի պիտի ըլլայ անոնց գուշակել տալ սիրոյ մեր այդ մթերքը, եթէ չբաշխենք զայն գեղեցիկ խօսքերով եւ գորովալիւր գործերով, որոնք սիրոյ դրամն են:

\* \* \*

Աստուծոյ սէրն եւ ընկերին սէրն միեւնոյն են. — երկու ակն են, որ կը բղխին միեւնոյն աղբիւրէ. երկու ծաղիկ՝ որ կը փթթին միեւնոյն ցողունի վրայ: Հետեւաբար ոչ միայն աստուած սիրութեան, այլ եւ ընկերսիրութեան համար ալ հող ունենալու ենք: Եւ արդէն ի՞նչ է կատարեալ աստուածսիրութիւն ըստւածը, եթէ ոչ վասն Աստուծոյ ընկերն սիրելը:

\* \* \*

Ճշմարիտ Քրիստոնէութիւնը բոլորովին հոգեկան կրօնքն է, որ, Աստուծոյ ու մարդոց մէջ, աղօթքն ու բարեգործութիւնը կ'ընդունի գերագոյն միջնորդ. — եւ Քրիստոս, նորա երկրպագելի հիմնադիրն՝ սէրը նշանակեց իրեւ յատկա-

նիչ իւր աշակերտաց: Ուրեմն ի՞նչու նոյն լայն ու բարձր ոգւով չմբռնել զայն եւ Քրիստոնէին ճշմարիտ նշանը չփնտուել վսեմ զգացմանց ու անոնց յայտարար մարդասիրական գործոց մէջ:

\* \* \*

Մարդիկ ալեկոծեալ կը ծփան այս կենցաղիս վրայ. մերթ մոլութեան եւ մերթ առաքինութեան, երբեմն բարեոյ եւ երբեմն չարի կը հետեւին, պահ մը երկրաւոր հաճելի առարկաներու, պահ մը մշտնջենաւոր սիրոյ հրդեհներու մէջ կը տառապին: Ի հարկէ իրենք զիրենք ազատող անոնք են, որ երկրաւոր բազմանքները նուաճելով, երկնային սիրոյն ետեւէն կ'երթան:

\* \* \*

Ճշմարիտ մարդասիրութեան երկնային ծաղիկը, անձնասիրութեան տղմոտ արմատներէն չկրնար ծլլլ. իր արմատն է մաքուր ու անմեղ սիրտ: Ճշմարիտ մարդասիրութիւնը՝ այն երկնային սիրոյն ցոլացումն է, որն որ մեր սուրբ կրօնին հիմն է: Այս սէրը նոյն ինքն Աստուած է: Մենք ալ պիտի նայինք, որ աս երկնային սիրոյն նմանութիւն մը ունենանք: Բոլոր մարդիկները եղբօր պէս պիտի սիրենք, մեր ձեռքէն եկածին չափ իրենց բարիք պիտի ընենք, և նոյն իսկ մեր թշնամիներն ու չարերն ալ մեր այս սիրոյն հաղորդ պիտի ընենք:





ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Ճշմարտութիւնը մտաց լոյսն է :

\* \* \*

Ճշմարտութիւն եւ անկեղծութիւն ամենայն առաքինութեանց հիմունք են :

\* \* \*

Ճշմարտութիւնն է բան մը , որու պէտք է յարիլ եւ որմէ պէտք է վարուիլ , եւ ինչ որ հակառակ է ճշմարտութեան , է այնպիսի բան մը , որմէ պէտք է խոյս տալ :

\* \* \*

Ճշմարտութիւնը թէեւ ատելի ըլլայ՝ մի քաշուիր խոստովանելէ :

\* \* \*

Աւելի լաւ է որ ես ինքս մնաս կրեմ ճշմարտութիւնը ըսելովս , քան թէ լռելովս ճշմարտութիւնը մնասուի :

\* \* \*

Հողւոյ սնունդն են ճշմարտութիւն եւ արդարութիւն :

\* \* \*

Ով որ ճշմարտութեան եւ առաքինութեան

համար կը տառապի , վեհ եւ նուիրական կը դառնայ :

\* \* \*

Մի՛ վիճիք վիճարանութեան համար , այլ անկեղծութեամբ փնտռեցէք ճշմարտութիւնը :

\* \* \*

Խօսէ՛ ճշմարտութիւնը , գործէ՛ բարին եւ ըրէ՛ ինչ որ մարդուս արժանապատուութեան կը պատկանի , յայնժամ աշխարհիս վրայ պարտականութիւնդ կատարած կը լինիս :

\* \* \*

Այն մարդը որ որոշած է ընել ինչ որ ճշմարիտ է , պատրաստ ըլլալու է երբեմն վտանգի մէջ դնել իր առողջութիւնը , պատիւը , հանգիստը , երբեմն նաեւ կեանքը :

\* \* \*

Ամէնէն աւելի սիրած անձինքս անոնք են որ ճշմարտութիւնը կը խօսին միշտ ինձ , մինչեւ իսկ երբ այդ ճշմարտութիւնն ինձ անախորժ երեւի :

\* \* \*

Ճշմարիտը խօսելու ա՛յնքան վարժեցուցէք ինքզինքնիդ , որ մինչեւ իսկ կատակով ալ սուտ չխօսիք :

\* \* \*

Աստուած զմեզ իրեն նման , այսինքն բանաւոր ստեղծած է , որպէս զի ճանչնանք զինքն



իրբ անեզր ճշմարտութիւն , եւ սիրենք՝ իրբեւ անշափ բարութիւն :

\* \* \*

Մի՛ վարուիք իրբ շնական յոռետեսք կամ իրբ անհոգ լաւատեսք , այլ իրբ ողջամիտ մարդիկ , որք սիրեն զճշմարտութիւն , զարդարութիւն եւ զգթութիւն :

\* \* \*

Ճշմարտախօսին դէմքն ալ ճշմարտախօս ըլլալը կը ցուցնէ , նենգաւորութեան այլայլութիւնը չունի եւ բարձրայօն ու արհամարհոտ պէրանքով չէ , այլ զուարթ , հեղահամբոյր ու անկեղծ է , մինչեւ անգամ իր պարզ ճակտին վրայ ներքին խորհուրդներն՝ ու աչաց բիբերուն վրայ , նորա սիրտը կ'երեւայ :

\* \* \*

Ամէն ճշմարտութիւնք յարմարաւոր չեն ի խօսիլ այլ միշտ բարւոք են ի լռել :

\* \* \*

Ձեր խօսակցութեան մէջ քաղցր եղէ՛ք , ճշմարտութիւնը սիրեցէ՛ք , ձեր սիրտերը հաշտեցուցէ՛ք ձեր լեզուներուն հետ եւ ամէն մարդու խընդում երես ցոյց տուէ՛ք :

\* \* \*

Պէտք է այնպէս ճշմարտութեամբ սիրտդ մաքուր ըլլայ , որ միշտ ցանկաս . — ո՛ւր էր թէ

քնութիւնը կուրծքիդ վրայ ապակիէ պատուհան մը բացած ըլլար , որպէս զի հետք գործ ունեցողները , կարենային տեսնել քու սրտիդ անկեղծութիւնն ու մաքրութիւնը :

\* \* \*

Ոչ ոք կատարեալ բարոյականի տէր եւ կատարելապէս ապահով կրնայ ըլլալ իւր էութեան մէջ , երբ մինչև որ ուղիղին սիրովը տողորուած չըլլայ եւ ճշմարտութեան ու ուղղութեան գեղեցկութիւնը զբաւած չըլլայ իր հոգին :



տուժոյ քաղցրութեամբը կամ մեղանշելու առիթ  
ընել զայն :

\* \* \*

Քանի որ Քրիստոնէի անունը կը կրենք, պէտք  
է որ ամէն ժամանակ ցոյց տանք Քրիստոնէի  
քաղցրութիւնը, խաղաղասիրութիւնը ու փա-  
փուկ կենցաղագիտութիւնը, մեկդի ընենք սպառ-  
նալիքն, յոխորտանքն ու ամբարտաւանութիւնը,  
որք մեզի չեն վայելեր :

\* \* \*

Քրիստոնէութիւնը մեզ կը սորվեցնէ թէ յա-  
ւիտենական բարին, կատարեալ բարին, ձեռք բե-  
րել կարելի է միայն բարի գործերով կամ բարո-  
յական լինելով : Իսկ բարոյական լինելու եւ բարի  
գործելու համար՝ ամէն քայլափոխին կը պահան-  
ջուի մեզմէ, զրկել զմեզ բոպէական վայելք-  
ներէն :

\* \* \*

Քրիստոնէի մը համար մեզք է հոգեւորապէս  
թշուառ ըլլալ : Յիշեցէ՛ք թէ ձեր տեղը չէ, այլ  
ձեր որպիսութիւնն է, որ ձեր երջանկութիւնը  
կ'որոշէ : Հոգեւոր ուրախութիւնը սրտի առողջու-  
թեան նշան է : Հոգեւոր տխրութիւնն ու տրտ-  
մութիւնը հիւանդութեան նշաններ են : Տխուր  
եւ դաժան, անձնասէր եւ դանգատող բնութիւնը  
նշան է թէ Յիսուսի սիրոյն մէջ չենք կենար : Կը  
յուսանք երջանիկ ըլլալ երկնից մէջ, ինչո՞ւ հիմա  
ալ չըլլանք : Քրիստոսի եւ մեր ընկերներուն

ՔԼՈՒԽ Է.

—

ՔՐԻՍՏՈՆԵՍԱԳ

ԵՒ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ

Քրիստոնէի պարտ է այլ ոմն Քրիստոս լինիլ :

\* \* \*

Քրիստոսէ օրինակ առէ՛ք դպրոցին մէջ, տան  
մէջ եւ ո՛ւր ալ որ երթաք : Վերջապէս ապրե-  
ցէ՛ք յօգուտ մարդկութեան եւ ի փառս Աստուծոյ :

\* \* \*

Քրիստոնեայ մը ի՞նչպէս կարող է ինքզինքը  
Քրիստոսի հետեւող համարիլ, երբ Քրիստոսի սի-  
րող եւ ներող ոգին իրմէ վաղուց հեռացած է :

\* \* \*

Երկինքը սիրոյ ու խնդութեան վայր մ'է,  
ամէն Քրիստոնեայ ջանալու է որ իւր տունը երկ-  
նից մէկ կտորը ընէ :

\* \* \*

Ճշմարիտ Քրիստոնեան չի զարհուրիր Աս-  
տուծմէ, այլ կը զարհուրի վշտացնել կամ բար-  
կացնել զԱստուած : Կը ջանայ չը գեղծանիլ Աս-



առանց անձնասիրութեան ծառայելը դրախտին սկիզբն է :

\* \* \*

Բնապաշտ դպրոցին պետ Ֆրանսայի վիպագիրը, Զոլա, ըսած է թէ, բազմաթիւ ֆրանսացիներ տեսած է որ կրօնքէ կը հեռանան և անասնական վիճակի մը կը դիմեն . նշանակած է այն ստորնացումը և վատթարացումը, որ ատկէ յառաջ կուգայ :



ՔԼՈՒԽ Ա.

—

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Նա է առաքինի որ ունի սէր առ մարդկութիւն :

\* \* \*

Մարդ մը այնքան մեծ է, որքան որ առաքինի է :

\* \* \*

Երջանկութեան տանող ամէնէն ապահով ճանապարհն՝ առաքինութիւնն է :

\* \* \*

Ամէնէն աւելի առաքինի մարդն այն է, որ ամէն օր կ'աշխատի առաքինի ըլլալու համար :

\* \* \*

Առանց առաքինութեան գեղեցկութիւնը, առանց անուշահոտութեան ծաղիկ մ'է :

\* \* \*

Առաքինի մարդը չչիոթիր ոչ գովասանքներէ և ոչ յանդիմանութիւններէ :

\* \* \*

Առաքինութիւնը կուուի վիճակ մ'է, վիճակ՝



որու մէջ ապրելու համար հարկ է որ շարունակ  
իւր անձին դէմ կռուի մարդ :

\*  
\* \*

Առանց առաքինութեան չկայ մի հաստատուն  
բախտ և շահ :

\*  
\* \*

Արեւը ցերեկի լոյսն է , լուսինն՝ գիշերի , իսկ  
առաքինի զաւակունք լոյս են իրենց ընտանեաց :

\*  
\* \*

Առաքինութիւններն են միայն որ կը բարձ-  
րացնեն զմարդ , իսկ մոլութիւնք կը նուաստա-  
ցընեն :

\*  
\* \*

Ոչ միայն տեղեկութիւն ունենալու ենք առա-  
քինութիւններու վրայ , այլ և այն առաքինու-  
թիւնները մեր նկարագրին մէջ ընդունելու ենք :

\*  
\* \*

Առաքինաբար և պարկեշտօրէն չապրող  
մարդը կատարեալ նախատինք մ'է մարդկային  
անուան :

\*  
\* \*

Ինչպէս առանձին անհատներու , այնպէս ալ  
ամբողջ մարդկութեան երջանկութեան միակ  
անսուտ երաշխաւորն առաքինութիւնն է :

\*  
\* \*

Բանի մը մի ցանկար երբ որ մէյ մը միտքդ

կը դարձնես կը նայիս որ ըրած գործքդ առաքինի  
և ազնուական գործք է :

\*  
\* \*

Առաքինի մարդն պէտք չէ մոռնայ թէ բո-  
վանդակ աշխարհ իւր տունն է և բոլոր մարդիկ  
իւր եղբարքն են :

\*  
\* \*

Վայելէ Նախախնամութեան բարիքն , ահա  
իմաստութիւն , տուր վայելել զայն և այլոց ,  
ահա առաքինութիւն :

\*  
\* \*

Երբ կեանքն առաքինութեան հետ համընթաց  
չքալեր , քաղցրութիւն ու սփոփանք չունենար :

\*  
\* \*

Մոլութիւնը կ'ուզէ միշտ ի ցոյց դալ , իսկ  
առաքինութիւնը կը սիրէ ծածկել զինքն :

\*  
\* \*

Առաքինի մարդիկ նման են արեգական , որք  
իրենց բարութեան ճառագայթները կը տարածեն  
ամէնուն վրայ :

\*  
\* \*

Առաքինութիւնը հոգւոյն սնունդն է , որչափ  
հոգին սրբութեամբ զարգանայ , սիրտն ու միտքն  
ալ այնքան կ'ազնուանայ :

\*  
\* \*

Առաքինութեան և բարութեան նշոյլն յաճախ



կը փայլի աղքատութեան յնցոտեաց ներքև՝ քան  
դիւրակեցութեան :

\*  
\* \*

Երանի այն անձին որ առաքինութեան դար-  
նին ի ճակատ կը մտնէ յուսոյ այն որրանին մէջ ,  
զոր մարդիկ գերեզման կ'անուանեն :

\*  
\* \*

Առաքինութիւնը չկայանար գիտնալու և գնա-  
հատելու մէջ ինչ որ բարի է , այլ կը կայանայ  
յօժարակամ անոր հետամուտ ըլլալու մէջ :

\*  
\* \*

Թող չ'ըսէ մէկն որ կ'ուզեմ ու չեմ կրնար  
մոլութեանէ հեռանալ , այլ պէտք է ըսէ . — Կրնամ  
ու չեմ հետեւիլ առաքինութեան :

\*  
\* \*

Առաքինութեամբ օտար մարդը տեղացի կ'ըլ-  
լայ իր բնակած տեղւոյն , իսկ տեղացին օտարա-  
կան կը դառնայ մոլութեամբ :

\*  
\* \*

Գերազանց առաքինութիւնը մարմնաւոր ցա-  
ւերու համբերելը չէ , այլ՝ սրտի վշտերուն :

\*  
\* \*

Մեծախոհ մարդը մէկէն աչքը պատուոյ պէտք  
չէ դարձնէ , այլ առաքինութեան ճամբան փնտռէ ,  
որ իրեն պատիւ կը բերէ :

Ճշմարիտ ձերութիւնը առաքինութիւնն է , չէ  
թէ մագերուն ճերմակութիւնը , վասն զի պատիւը  
առաքինութեան կը տրուի , չէ թէ ճերմակ մա-  
գերուն :

\*  
\* \*

Ոչինչ կայ աւելի պերճախօս յաշխարհի , քան  
առաքինի կեանք :

\*  
\* \*

Առաքինութեան յարմարագոյն եղող կենաց  
ընթացից հետեւէ՛ . թերեւս դաժանագոյնն է այն ,  
բայց սովորութեամբ հաճոյագոյնը կը լինի :

\*  
\* \*

Արդար մարդն ալ կրնայ իյնալ , բայց առա-  
քինութիւնն է միայն որ կրնայ պահպանել զայն  
կամ կանգնել ի գլորմանէ :

\*  
\* \*

Բարի և առաքինի գործի մը պատճառած հա-  
ճութիւնն՝ ուրիշ ամէն գործի պատճառելիք հա-  
ճութեանէն վեր է և գերազանց :

\*  
\* \*

Աւելի լաւ է առաքինի մարդոց հետ անձուկ  
կեանք վարել քան թէ անբարոյական անձանց  
սեղանոյ շուրջ համադամներ վայելել :

\*  
\* \*

Մեղաց և մոլութեանց հետեւէն գալիք չարիք-



ներն ու փորձանքները մտածելով է միայն, որ կրնանք պահել և պահպանել առաքինութիւնը :

\* \* \*

Աստուծոյ բոլոր գործածները բարի են . — երբ մեր վրայ ցաւ կամ դժբաղդութիւն կը զրկէ, այդ օրհնութիւն է մեզ համար, որ զմեզ յառաքինութիւն կը հրաւիրէ :

\* \* \*

Բախտը մարդուս մեծութիւնը կրնայ սկզբունաւորել, բայց անոր առաջ տանողն ու շարունակողն առաքինութիւնն է :

\* \* \*

Անոնք որ մանկութեան ժամանակ առաքինութեան համն առած են հաստատ կը պահեն զայն իրենց բոլոր կենացը մէջ, և կրնամ ըսել թէ բնականաբար միշտ առաքինի կը մնան :

\* \* \*

Աշխարհային բարիք նման են ալեաց, որք կը ծնանին ջուրց վրայ . — երիտասարդութիւնն իբրև ստուեր կ'անցնի, հարստութիւնն զերթ ամպ կը ցրուի, առաքինութիւնը կը մնայ միայն :

\* \* \*

Երբ որ բան մը ընելու ձեռք կը զարնես, քու պատիւդ ու քու պարտքդ կը պահանջեն որ ամէնուն հետ անկեղծութեամբ և առաքինի կերպով գործքդ տեսնես :

Ինչ գեղեցիկ, ինչ աղուոր տեսիլք է, երբոր կը տեսնես մէկը այն ժամանակ յորժամ պատուոյ և փառաց մէջ է՝ միանգամայն առաքինութեամբ ալ զարդարուած :

\* \* \*

Ուրիշ բան մի՛ մտածեր, բայց ներկայ կեանքդ առաքինութեամբ վարել . — անցածը մոռցիր, իսկ ապագայն ամենայն խոնարհութեամբ բոլորովին Աստուածային նախախնամութեանը յանձնէ և զգուշացիր յոռետեսութենէ :

\* \* \*

Շատեր կան, որ առաքինութեան կեղծ ձեւերով կը ներկայանան մեզ, և անմտութեամբ կ'ուզեն խաբել զմեզ, առանց խորհելու թէ առաքինութիւնը կեղծաւորութեան տակ ծնած չէ երբէք :

\* \* \*

Ամէն մանուկ իր սրտին մէջ ունի թէ՛ առաքինութեանց և թէ՛ մոլութեանց սերմերն . — ծնողաց և դաստիարակաց պարտքն է զարգացնել առաջիններն և հեղձուցանել վերջինները :

\* \* \*

Մարդս ի բնութենէ կը բաղձայ վեր ելլել քան թէ վար իջնալ, քանի որ աս ասանկ է, ինչո՞ւ մոլութիւններով նուաստացնենք զմեզ քան զանասունները, երբ որ կրնանք առաքինութիւններով մարդոցմէ վեր լլլալ :



Առաքինի և համեստ կեանք վարելը՝ հանդերձ խոհեմութեամբ և շրջահայեցութեամբ, ճշմարիտ և բարի քաղաքականութիւնն է, և այսպիսի քաղաքականութեամբ վարուիլը՝ միշտ խոհեմութիւնը հետն ունենալով՝ նոյնինքն խիստ զեղեցիկ առաքինի կեանքն է :

\* \*

Առաքինութեան ծաղկաւէտ դաշտէն մուլութեան ճահիճը անցնելու համար կամուրջ մը կայ, որուն բազմաթառ անունն է — « այսչափ փոքրիկ թերութենէն ինչ կ'ըլլայ » :



ՊԼՈՒՍ Պ.

Ի Մ Ս Ս Տ ՈՒ Թ Ի Ի Ն

Մեծութեան և փառաց կեդրոնը իմաստութեան մէջ հաստատուած է :

\* \*

Իմաստուն է նա, որ գիտէ կառավարել իւր կիրքը չափոյ ու սահմանի մէջ :

\* \*

Իմաստունը գիտէ խօսիլ և լռել ի հարկին :

\* \*

Իմաստութեան նշանախեցն իսկ չունի այն, որ ի սրտին չկրկր զերկիւղ Տեառն :

\* \*

Իմաստունն անձին կը վերագրէ իւր թերութեանց պատճառն, անմիտն՝ այլոց :

\* \*

Ոչ ոք կրնայ լաւ խօսիլ, եթէ իմաստութեամբ չխորհի :

\* \*

Ճշմարտապէս իմաստուն մարդը՝ ճշմարտապէս համեստ մարդն է :



Մարդս առհասարակ կը սիրէ գովուիլ , բայց  
իմաստունը կը վախնայ անկէջ :

\* \* \*

Իմաստունը իւր ըսածը գիտէ , բայց ամէն  
գիտցածը չըսեր :

\* \* \*

Երբ իմաստութիւնը և առաքինութիւնը սկսին  
խօսիլ , այն ժամանակ կիրքերը կը հանդարտին :

\* \* \*

Ճշմարիտ ու առաքինի իմաստասէրը պէտք է  
իր գործքովը հաստատէ ինչ որ բերնով կը քարոզէ :

\* \* \*

Իմաստուն մարդոց դէմքին վրայ անդորր  
ժպիտ մը կը փայլի :

\* \* \*

Եթէ իմաստութիւնն Աստուած է , ճշմարիտ  
իմաստասէր է ուրեմն Աստուածասէրն :

\* \* \*

Իմաստուն մարդ մը արժան եղած կարեւո-  
րութիւնը միայն կ'ընծայէ որեւէ բանի մը . — ոչ  
աւելի ոչ պակաս :

\* \* \*

Նա որ չունի իւր հասակին իմաստութիւնը,  
իւր հասակին ամէն աղէտն ունի :

\* \* \*

Թերեւս չէ իմաստուն այն , որ տակաւին չէ  
զգացած կրից թափը . վասն զի ինքն իր վրայ  
կասկածիլ չգիտէր :

\* \* \*

Իմաստունը չայլայլիր և յաջողութեան և ձա-  
խողութեան մէջ . — ոչ առաջնոյն մէջ կը հպար-  
տանայ և ոչ երկրորդին մէջ գլխիկոր կը լինի :

\* \* \*

Չ'անձդ մի կարծեր իմաստուն , եթէ այլք  
զքեզ իմաստուն համարեն , մի լինիր յանձնապաս-  
տան :

\* \* \*

Գիտնոյ մը տեղ կ'անցնի այն անձը , որ ընդ  
միշտ իմաստութիւն որոնելու ետեւէ է , բայց երբ  
կը կարծէ թէ գտած է' . . . յիմար մ'է :

\* \* \*

Մեծ իմաստութիւն է գործերն աճապարելով  
չգործել և իւր կարծեաց վրայ յամառ չկենալ :

\* \* \*

Գեղեցիկ մարդը այն ատեն միայն գեղեցիկ  
է երբ զինքը կը դիտեն . բայց իմաստուն և  
բարի մարդը միշտ գեղեցիկ է :

\* \* \*

Հոգւոյ բոլոր յատկութեանց մէջ ամէնէն գե-  
րազանցն է իմաստութիւն , իսկ ամէնէն օգտա-  
կարը՝ խոհեմութիւն :



Կատարեալ իմաստուն մը չէ այն, որ շատ բան գիտէ, այլ այն է իմաստուն, որ կրից վրայ իշխելով զանոնք կը հնազանդեցնէ իրեն:

\* \* \*

Իմաստունները թէպէտեւ հարցուն իսկ, դժուար բաւ կը պատասխանեն, մինչդեռ տգէտներն առանց հարցնելու ամէն բան կը խօսին:

\* \* \*

Միայն մէկ գործ բաւական է յիմար համարուելու համար, սակայն իննսուն և ինն հազիւ թէ կը բաւեն իմաստունը ճանչցնելու համար:

\* \* \*

Իմաստունը երբ զանազան փորձանքներու մէջ սահի, զինքը ամուր կը բռնէ, որ չիյնայ, բայց տգէտը՝ ամէնափոքր դիպուածի մը պատահած ատեն առանց սահելու ալ կ'իյնայ:

\* \* \*

Ձեր մանկութեան օրերէն աշխատեցէ՛ք իմաստութիւն ստանալու որպէս զի ի ծերութեան մխիթարուիք: Մեծապանծ ճոխութիւն է իմաստութիւնը զոր ոչ ոք կրնայ կորզել ձեր ձեռքէն:

\* \* \*

Իմաստուններուն մէջ աւելի իմաստունն այն է որ բազմագէտ ըլլալով՝ զինքն սակաւագէտ ցոյց կու տայ. իսկ տգէտներուն մէջ աւելի

տգէտը ա'յն է որ սակաւագէտ է ու զինքը բազմագէտ ցոյց կուտայ:

\* \* \*


Շատ անգամ իմաստուն մարդիկ ալ կը սխալին, չէ թէ սխալիլ ուզելով, այլ առջեւի գործերնին անանկ դժուարամարս ըլլալով որ իրենց իմաստութիւնը չհասնիր զանոնք մարտելու ուստի հարկ կ'ըլլայ որ կամքերնին կրթեն, մտքերնին սրեն, յիշողութիւննին արթնցնեն եւ մանաւանդ ատեն ատեն ուրիշ խորհուրդը լսեն:

\* \* \*

Իմաստութեամբ պէտք է մղել չարն դէպ ի բարին, սուտն դէպ ի ճշմարիտն, խաւարն դէպ ի լոյս, տգէտն դէպ ի գիտութիւն, խորթակն դէպ ի խիղճ, վայրենին դէպ ի պատուաւոր ընտանութիւն, դժոխքն դէպ ի երկինք, ոչնչութիւնն դէպ ի Աստուած:

\* \* \*

Ամէն պարագայի մէջ իմաստութիւնը կը պահանջէ որ միշտ կասկածիմք մեր մարդկեղէն, չափաւոր կարողութեան վրայ եւ զգուշանամք չափազանց վստահութենէ անձին: Այս կերպով կարելի է մեր տկարութիւնը փորձող վտանգներէն քիչ շատ պահպանուիլ եւ աղօթքով Աստուծոյ օգնութիւնը ձեռք բերել, որ միակ զօրութիւնն է երկնքի մէջ եւ երկրի վրայ. եւ հրաշքներ կը գործէ ամէնէն տկար արարածի ձեռքով:





ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ

Սուրբ ըլլալը բացառութիւն է, իսկ արդար ըլլալը օրէնք :

Արդարութիւնը կը յաղթէ և միշտ անյաղթելի կը մնայ :

Այն բանը որ մէկը չփափաքիր իրեն համար թող չընէ ուրիշներուն :

Աստուած արդար վարձահատոյց է, մեր մտեցած բարերարութիւնն ալ ինք չմոռնար և կը վարձատրէ ժամանակին :

Արդարասէր մարդու առաջին վարձատրութիւնն է իր խղճին յատուկ վկայութիւնը, որ կ'ըսէ թէ քու գործդ բարի է :



ՀԱՄԱԵՐՈՒԹԻՒՆ

Համբերութիւնը լեզի դեղերու կը նմանի, որոնք սակայն մարդս կ'առողջացնեն :

Համբերութիւն և յաջողութիւն գրեթէ միշտ ի միասին կ'ընթանան :

Ճախճախուտը չորցնել ուզողը, գորտերուն ճոճուալուն պիտի համբերէ :

Ով որ համբերել չգիտեր՝ չէ մեծասիրտ :

Ի՞նչու շատ առատաձեռնութեամբ երբեմն կը հատուցանէ, համբերութեամբ իրեն սպասող մարդկանց :

Մարդիկ միմեանց համար ստեղծուած են, ուղղէ՛ ուրեմն զանոնք կամ համբերէ՛ անոնց թերութեանց :

Պէտք է պատրաստ ըլլանք համբերելու ուրիշներուն և ջանանք անդադար որ քաղցր և փրկաւէտ սովորութիւն մը ըլլայ մեզի համբերելը :



Համբերութիւնը սիրելի է երախայի մէջ , գո-  
վելի է երիտասարդի մէջ եւ ամէն տարիքի մէջ  
նա գեղեցիկ է :

\* \* \*

Ձանա՛ որ ուրիշներուն որ եւ իցէ պակասու-  
թեանց եւ տկարութեանց համբերես . վասն զի  
դուն ալ ունիս շատ բաներ , որոնց համբերելու  
են ուրիշներ :

\* \* \*

Հանճարեղ , իմաստուն եւ բարեկիրթ մարդիկը  
սիրէ , բայց բիրտերու , խենթերու եւ տաղտկա-  
ցնող մարդկանց ալ — որք շատ են ամէն տեղ —  
համբերէ՛ : Մեծ տկարութիւն է չկրնալ համբերել  
ուրիշին տկարութեանցը :

\* \* \*

Համբերութենէ կազմուած են բոլոր խոնարհ  
ու համեստ առաքինութիւնները . — նկարագրի  
համբերութենէն կը բզլտին բարեկիրթութիւնն ու  
հեղաբարոյութիւնը . մտքի համբերութիւնը , յա-  
րատեւութիւն կ'ընծայէ իսկ սրտի համբերութիւնը՝  
համակերպութիւն :

\* \* \*

Թէ որ մենք ուրիշներուն զիջանինք , ուրիշ-  
ներն ալ մեզի կը զիջանին , թէ որ մենք ուրիշ-  
ներուն պակասութեանցը համբերենք , ուրիշներն  
ալ մեր պակասութեանցը կը համբերեն . եւ  
այսու մեր սիրոյ կապը հաստատուն կ'ընեմք , եւ  
հաճոյականն ու դիւրին՝ մեր պարտուց կատարումը :

ՓԼՈՒԽ ԺԲ.

Բ Ա Ր ՈՒ Թ Ի Ն

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԿԱՍԵՐՈՒԹԻՒՆ

Բարիք ըրէ և մի՛ նայիր թէ որո՛ւ կ'ընես :

*alt. A*

\* \* \*

Դէպ ի բարին առաջին քայլն է , դադրել չա-  
րիք ընելէ :

\* \* \*

Ամէնուն բարիք չենք կարող ընել , բայց կա-  
րող ենք ամէնուն բարեացակամ լինել :

\* \* \*

Այն է ճշմարիտ բարեբարութիւնը , որ առանց  
չահու մը ակնկալութեան կ'ընէ մարդս :

\* \* \*

Բարեբարութիւնը բարեկամներ կ'ստանայ և  
թշնամիներն անգամ բարեկամ կ'ընէ :

\* \* \*

Բարիք ըրէ՛ թէ՛ բարեկամներուդ և թէ՛ թշ-  
նամիներուդ . այսպէսով առաջինները կը պահես  
և թերեւս վերջիններուն կը յաղթես :

\* \* \*



կատարեալ բարութեան արմատն է սէր առ Աստուած և սէր առ մեր ընկերն մեր անձին պէս :

\* \*

Մէկ ժամուան մէջ բրած բարիքդ՝ հարիւր տարուան մէջ ըրած ազօթքներէդ աւելի կ'արժէ :

\* \*

Ճշմարտապէս բարեսիրտը այլոց երկայն խրատ չի տար , ինքն ղրարին կը կատարէ , լռիկ մնջիկ , որչափ կրնայ :

\* \*

Ամէնէն մեծ մարդը այն է , որ ամէնէն աւելի ծառայած է մարդկութեան :

\* \*

Մարդասիրութիւնն անբաժանելի յատկութիւն և որոշիչ նշան մ'է մեծութեան :

\* \*

Մարդ իւր բարեգործութեանց արդիւնքը կը կորսնցնէ , երբոր ինքն կ'սկսի զանոնք դրուատել :

\* \*

Մարդիկ պարտին ի մանկութենէ վարժեցնել իրենց անձը արբութեան և բարութեան :

\* \*

Ամէն բանի մէջ կասկածոտ մի' ըլլաք , ձեզ պատահածներէն մեծ մասն ալէկ կողմէն մեկնեցէ՛ք և կը շահիք :

Մարդ կը զղջայ իւր չար գործելուն վրայ . բարի գործ մը ընդհակառակն կը ընու անոր սիրտը քաղցր գոհունակութեամբ մը :

\* \*

Մարդուս կեանքը յուշատետր մ'է , ջանալու է միայն բարի գործեր գրել հոն :

\* \*

Մարդուս բարի ու չար գործերը կենդանի կը մնան , թէպէտև ինքն մեռած դացած ըլլայ :

\* \*

Ո՛րքան բարի գործեր շատ գործենք մեր երիտասարդութեան ժամանակ , ա՛յնքան առատ մխիթարութիւն կը պատրաստենք մեր ծերութեան համար :

\* \*

Հաւատացէ՛ք և համոզուեցէ՛ք թէ ձեր յաջողութեան , ձեր մեծութեան խիստ գեղեցիկ մասը՝ բարի ըլլալ և բարի սիրտ ունենալն է :

\* \*

Աշխարհիս մէջ միակ մէկ նպատակ կայ , որ արժանի է բոլոր մարդոց ջանքերուն . — այն է մարդկութեան բարիքը :

\* \*

Աշխարհիս մէջ սուրբ աշխատութենէ , սուրբ եղբայրսիրութենէ , սուրբ ընկերակցութենէ զատ Աստուածապարգև բարիք չկայ :



Բարերարութիւնը տրուած կարեւոր գումարներէն չառնուր իր նշանակութիւնը, այլ տրուած եղանակէն և նպատակէն :

\* \* \*

Մինակ բարերարելը բաւական չէ, նայելու է նաև թէ ծախսուած դրամն որ աստիճան օգտակար կ'ըլլայ ազգատին :

\* \* \*

Երբոր կ'ուզես ուրիշին բարիք մը ընել, քու երեսդ և քու խօսքդ աւելի շնորհալից ըլլան քան թէ ձեռքերդ :

\* \* \*

Նայեցէ՛ք որ միշտ բարի խօսիք և այն որ բարեգոյնն է զայն ի գործ դնէք : Այնպէս եղէ՛ք, ինչպէս որ ձեզ կը ցուցնէք և միշտ այնպէս ցցուցէ՛ք՝ ինչպէս որ էք :

\* \* \*

Ամէնէն ընդունելի և արժանի բարեգործութիւնը այն է, որ ծածուկ կը կատարուի : Բարիք ընելու մէջ երբ փառասիրութիւն կը մտնէ՝ բարիք ըլլալէ կը դադրի :

\* \* \*

Չկայ գոհունակութիւն մը ա՛յնքան աւելի մեծ, ո՛րքան այն՝ զոր մարդ կ'զգայ ուրիշներու բարիք ընելով և օգտակար ըլլալով :

\* \* \*

Դրացիներու հետ բարութիւն կենցաղավարութեան միակ միջոցն է յիշել զանոնք յաճախ Աս-

տուծոյ առաջ և մոռացութեան տալ նոցա թե-րութիւնները մարդկանց առաջ :

\* \* \*

Մարդասիրութիւնը այնպիսի առաքինութիւն մ'է, որ հարստութենէ աւելի բարեկամներ կը հաւաքէ մեր շուրջը, և յարգ ու պատիւ կը հայթայթէ :

\* \* \*

Հոգեւոր ծուլութիւնն արթուն թմրութիւն է և մօտալուտ մահ : Ամէն ջանք և հոգ ունենալու ենք որ մեր կեանքն ապարդիւն և օրերնիս առանց բարեգործութեան չանցընենք :

\* \* \*

Որպէս զի կարող ըլլանք բարիք ընել այլոց, նախ մենք բարի ըլլալու ենք, և որպէս զի մեր գործերը հաճելի ըլլան Աստուծոյ, նախ մենք արդար ըլլալու ենք :

\* \* \*

Բարի մարդն օգտակար չտեսներ ինչ որ պարկեշտ չէ, և երբէք չգործեր կամ չխորհիր այնպիսի բան մը, զոր անհար լինի համարձակութեամբ յայտնել աշխարհի :

\* \* \*

Եթէ կայ բան մը, որու վրայ կեանքերնուս մէջ բնաւ երբէք չենք զղջար, ապաքէն մեր կատարած մարդասիրական գործերն են :

\* \* \*

Երբ մարդս կը մեռնի, մարդիկ սովորաբար



կը հարցնեն՝ «ի՞նչ կարողութիւն է թողեր»։ Իսկ նորա հոգւոյն հանդիպող հրեշտակները կը հարցնեն երկնքի մէջ . «ի՞նչ բարի գործեր ուղարկեցիր դու այստեղ քեզմէ առաջ» :

\* \* \*

Եթէ հիմա այս աշխարհիս մէջ ընենք մեր ձեռքէն եկածը մեր ընկեր արարածոց բարեւաւու թեան և Աստուծոյ սիրոյն համար, այն ատեն երբ հանդերձեալ աշխարհ անցնինք՝ մեր հետ պիտի տանինք մեր վաստակոց պտուղները :

\* \* \*

Բարութիւնը ընկերոջ վշտին առաջքն առնելու և զայն մեղմացնելու հակում մ'է . սրտի էն գեղեցիկ յատկութիւնն է այն, ամէնէն յորդառատ զգացումը . — բոլոր միւս ձիրքերը անկէ կը ծնին և անով կը մեծնան :

\* \* \*

Չարը բարիով փոխարինեցէք նման խեցեմորթին, որ զինք ջախջախողին մարգարիտ կուտայ, ինչպէս ծառը, որ զինք քարկոծողին առջեւ քաղցրահամ պտուղներ կը թափէ, ինչպէս սանդալի ծառը, որ զինք յերկիր տապալուղ կացինը անուշահոտ կ'ընէ :

\* \* \*

Գութը՝ բոլոր մարդոց բարիքը կամենալու և անոնց տառապանքին վրայ ցաւելու անփոփոխ ու անալլալ զգացումն է : Կրօնքը կ'ուժովցնէ և կը բեղմնաւորէ այդ զգացումը՝ անոր տալով իրրեւ պատճառ եղբայրութիւնը և իրրեւ նպատակ՝ բարեարութիւնը :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ն Ե Ր Ո Ղ Ա Մ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ներումը մեծ հոգիներուն առաքինութիւնն է :

\* \* \*

Անաչառ եղիր քեզի համար և ներողամիտ այլոց համար :

\* \* \*

Բարի և ազնիւ մարդուն կը վայելէ ներողամիտ ըլլալ քան թէ վրէժխնդիր :

\* \* \*

Վրէժխնդրութեան ամէնալաւ կերպը, եղած նախատինքները բանի տեղ չդնելն է :

\* \* \*

Պէտք չէ որ մահկանացու մարդը ունենայ իւր սրտին մէջ անմահ ատելութիւն մը :

\* \* \*

Գթութեան, ներողամտութեան մէջ մեծ քաղցրութիւններ և մեծ մխիթարութիւններ կան :

\* \* \*

Երբ վատասրտին և ապերախտին ներես, այն ժամանակ կը ցուցնես անոր քու անկէց աւելի արժեք :



Երբ որ մինակ ըլլաս պակասութիւններդ մտածէ, իսկ եթէ ընկերութեան մէջ՝ ուրիշներունը մոռցի՛ր :

\* \* \*

Յիշէ՛ ինչ բարիք որ ընդուներ ես ու ջանա՛ մոռնալ ուրիշներուն քեզի ըրած անիրաւութիւնները :

\* \* \*

Ոչ միայն վեհանձնութիւնը, այլ և մեր հոգւոյն հանգստութիւնը կը յորդորէ զմեզ ներողամիտ ըլլալ :

\* \* \*

Ներողամտութիւնը, քաղցրաբարոյութիւնը և փիլիսոփայութիւնը անհրաժեշտ են այն մարդուն համար, որ մարդկանց կը քերտն հանդէպ կը դասուի անընդհատ :

\* \* \*

Թշնամանաց մը վրէժ լուծելը, թշնամւոյն հաւասարիլ է. իսկ նմա ներելը՝ անկէ շատ վեր բարձրանալ է :

\* \* \*

Յիշեցէ՛ք միշտ որ ամէն մարդ իր պակասութիւնները ունի և թէ ընկերութեան մէջ ապրելու համար պէտք է ներեմք փոփոխակի իրարու պակասութեանց :

\* \* \*

Եթէ մէկը թեթեւամտութեամբ խօսի ձեզ, պէտք չէ որ փոյթ ընէք, թէ որ խենդութեամբ խօսի, պէտք է միայն ցաւակից ըլլաք, իսկ թէ որ թշնամանօք խօսի, պէտք է ներէք :

Աւելի պատրաստ եղէք ներելու, քան թէ թշնամութիւնները թշնամութեամբ փոխարինելու : Այն մարդը որ վրէժխնդրութեան կը հետամտի, իւր անձին որոգայթներ կը լարէ և կրկնակի դժբաղդութիւններ կը բերէ իւր գլխոյն :

\* \* \*

Որչափ ալ վրէժխնդրութիւնը քաղցր և ախորժելի երեւնայ մեզի, սակայն երբեմն շատ ծանրագին կ'ըլլայ, և աւելի կը շահիմք զսպելով և նուաճելով մեր ցատումը ներողամտութեամբ, քան թէ անույանելով զայն հոգւով վրէժխնդրութեան :

\* \* \*

Ուրիշները քեզի դէմ գրգռելու առիթ մի տար քնաւ երբէք. իսկ եթէ ինքնին գրգռուին՝ դուն քու կողմէդ համբերող և ներողամիտ եղիր, փորձառուն գիտէ թէ որն է օգտակարը. — ներողամտութիւն թէ վրէժխնդրութիւն :

\* \* \*

Քրիստոս, որ շիւղին ու գերանին հիանալի առակովը պարսաւած էր դատապարտելու ու շարախօսելու սովորութիւնը այնքան տարածուած հրեայ հասարակութեան մէջ, իր օրինակովը կը հասկցնէր ամէն օր հոգեկան այն բարձր գոհունակութիւնը, զոր բացարձակ անյիշաչարութիւն մը և անպայման ներողամտութիւն մը կրնան ազդել մարդուն :

\* \* \*

Որովհետեւ ես ալ շատ պակասութեանց տէր



եմ ուստի ուրիշին պակասութիւնը չեմ դատեր, չեմ ուզեր յանդիմանել ուրիշը այն սխալմունքին համար զոր իմ վրաս ալ կը տեսնեմ: Քարձեալ չեմ ալ կրնար պահանջել իմ ընկերէս, որ բոլորովին կատարեալ ըլլայ, վասն զի զիս ալ կը տեսնեմ որ անանկ չեմ կրնար ըլլալ:

\* \*

Իմաստութիւնը պէտք է յայտնէ մեր աչքին առջեւ մեր պակասութիւնները և սէրը ծածկէ ուրիշներունը: Թէ որ չեմք կրնար չտեսնել ուրիշներուն յայտնի պակասութիւնները, տեսնենք զանոնք անոնցմէ զգուշանալու համար և դարձունենք աչքերնիս մեր պակասութեանցը վրայ, որպէս զի սովորինք ներողամիտ ըլլալ ուրիշներուն:

\* \*

Ներենք անմիտ անձին, տեղի տանք իմաստուն անձին եւ ամէնուն այս պատասխանը տանք. — մարդիկներէն իմաստուններն անգամ յաճախ կը սխալին. չկայ այնպէս աշալուրջ անձ մը, որ բնաւ չքնանայ, չկայ այնպէս խելացի ու հարուածներէն չչիտթուող անձ մը, որ յանկարծ դիպուածէ մը յուզուելով չգրգուի, չկայ մէկու մը վնաս տալէ զգուշացող այնպէս անձ մը, որ խոյս տուած ատեն փորձանքէ չբռնուի:

\* \*

Ներողամտութիւնը ո՛չ թէ միայն առաքինութիւն է, այլ նաեւ պարտաւորութիւն այն մարդուն համար, որ կենաց հակասութիւններուն իրապեկ եղած է:

ԳՆՈՒՆ ԺԳ.

ԽՕՍԻԼ ԵՒ ԼՌԵԼ

Ով որ լուել գիտէ շատ բան գիտէ:

\* \*

Քաղցր խօսքը օձն իւր ծակէն կը հանէ:

\* \*

Քիչ խօսքը, կատարեալ իմաստութեան նշանն է:

\* \*

Մեծագոյն չարիքները լեզուէն յառաջ եկած են:

\* \*

Ով որ իր լեզուն կը զսպէ, իր գլուխը կ'ազատէ:

\* \*

Գէշ խօսքը գէշ սրտի նշանն է:

\* \*

Խօսելէ առաջ խորհէ՛ եւ մի՛ գործեր առանց խորհելու:

\* \*

Լաւ է ոտքով սահիլ քան թէ լեզուով:



Մեծ մտաց յատուկ է շատ խօսք ըսել քիչ բառով :

\*  
\* \*

Սրտին ուղածն ըսողը, սրտին չուղածը կը լսէ :

\*  
\* \*

Չար խօսքի մը վէրքը, հատու սրի վէրքէն աւելի ծանր է :

\*  
\* \*

Եթէ խօսակցութիւնը ժամանակին յարմար չէ, բառ մը իսկ աւելորդ է ըսել :

\*  
\* \*

Ինչու մի' խօսիր այնպիսի խօսքեր որ վնասակար ըլլան քեզի եւ այլոց :

\*  
\* \*

Շատախօս մարդը որչափ աւելի դինքը գովէ, այնչափ ատելի եւ անհաճոյ կ'ըլլայ :

\*  
\* \*

Մարդու վրայ երբէք չարախօսութիւն մի' ընէք եւ ոչ իսկ ձեր թշնամեաց վրայ :

\*  
\* \*

Երբ մեծդ ուրիշի հետ խօսելու լինի, դու լուռ կեցիր եւ մի' ծիծաղիր :

\*  
\* \*

Շատ լսել, շատ մտածել եւ քիչ խօսիլ . — արդարեւ դիւցազնական առաքինութիւն մ'է :

Տէր եղէ՛ք ձեր լեզուին եւ ձեր շրթունքներուն, եւ մի' հանէք ձեր բերնէն աղտոտ եւ անարգ խօսքեր :

\*  
\* \*

Կա՛մ լուեցէք եւ կա՛մ քան զլուելն լաւագոյն բաներ ըսէք :

\*  
\* \*

Կարճաբան եղէք որպէս զի մտքերը չուտով ըմբռնեն եւ հաւատարմութեամբ պահեն ինչ որ կ'ըսէք :

\*  
\* \*

Նա որ կը խօսի առանց մտածելու, կը նմանի այն որսորդին որ հրազէն կ'արձակէ առանց դիտելու :

\*  
\* \*

Ամէն մարդու պատասխան տուէ՛ք քաղցրութեամբ . — Ձեր խօսքերը թող պարզ ըլլան, բայց լի ազիւ շնորհաց :

\*  
\* \*

Սիրտ մը չահելու համար պէտք չկայ մեծ զօրութեան. խօսք մը միայն, շնորհալի ժպիտ մը, ակնարկ մը կը բաւեն :

\*  
\* \*

Լաւ խօսիլ կարելի է սովորիլ, կարդալով այն հեղինակները որոնք լաւ են գրած :

\*  
\* \*

Շատախօսները իրենց անձին յարգանքը կը



կորսնցնեն : Սակաւախօսութենէն աւելի նազելի բան չկայ :

\* \* \*

Ունկնդիրներու մէջ առաջին եղի՛ր, խօսողներու մէջ՝ վերջին :

\* \* \*

Իր պատիւը գիտցող մարդը խօսք մը չհաներ բերնէն, որ ճշմարիտ չըլլալու կասկած տայ :

\* \* \*

Մէկ բարի խօսքը բաւական է երբեմն մարդ մը կորստէ ազատելու համար :

\* \* \*

Չարմանալի է աշխարհքս, այն մարդիկ որ քիչ բան գիտեն, շատ կը խօսին, և անոնք որ շատ գիտեն՝ քիչ կը խօսին :

\* \* \*

Իմաստուն լեզուները չարիքը կը ծածկեն և բարիքը կը խօսին, իսկ չարասիրտները բարիքը կը ծածկեն և չարիքը կը խօսին :

\* \* \*

Սրտի խաղաղութիւնը և հոգւոյ անմեղութիւնը են բարեբախտ ժառանգութիւն անոր որ քիչ կը խօսի :

\* \* \*

Աշխարհքս արձագանք մ'է, որ լսածը կը կրկնէ. ուրիշներուն վրայ լաւ խօսեցէք, եթէ կուզէք որ լաւ խօսին ձեր վրայ :

Բարի խօսքերը շատ արժէք ունին ու քիչ ծախք : Նոյնպէս բարի վարքը շատ արժէք ունի և քիչ ծախք :

\* \* \*

Մարդ պէտք է գիտնայ իր ըսածն երբ կը խօսի, և իր ըրածն՝ երբ կը գործէ :

\* \* \*

Երիտասարդները կը խօսին ինչ որ կ'ընեն, ծերերն՝ ինչ որ ըրած են, իսկ անմիտները՝ ինչ բան որ ընել կը փափաքին :

\* \* \*

Մարդս հաւանական բաները միայն պէտք է խօսի, իսկ անհաւատալիներու վրայէն լուռութեամբ անցնելու է :

\* \* \*

Խօսելէն առաջ մտածեցէ՛ք և յետոյ խօսեցէ՛ք, բառերը շատ շուտ մի թափէ՛ք ձեր բերնէն, այլ պարզ, որոշ և մեկին խօսեցէ՛ք :

\* \* \*

Խօսելու ժամանակ զգուշութեամբ խօսեցէ՛ք, ով ալ լինի ձեր ունկնդիրը, մի նշանաւոր կամ աննշան մարդ :

\* \* \*

Շատախօս մի՛ ըլլաք, խօսքի նիւթէն մի՛ շեղիք և միեւնոյն բանը հազար անգամ մի՛ կրկնէք :

\* \* \*



Երբէք մի՛ մոռնաք որ եթէ խօսելն արծաթի  
գին ունի , լռելն ալ շատ պարագայի մէջ ոսկիի  
արժէք ունի :

\*  
\*  
\*

Մի նետուիք ամէն խօսքի մէջ , եթէ չէք ու-  
զեր ընդունիլ այնպիսի պատասխան , որում չէիք  
սպասեր :

\*  
\*  
\*

Շատախօս մարդը կ'ըսէ ամէն ինչ որ կը մտածէ,  
իսկ պարկեշտ և զգուշաւոր մարդը կը մտածէ  
նոյնիսկ այն ամէն բանի վրայ որ պիտի ըսէ :

\*  
\*  
\*

Կենցաղավարութեանց մէջ ջանացէ՛ք որ միշտ  
զգուշանաք անշահ և անլի կատակներէ , նմանա-  
պէս և անհամ քաղաքավարական խօսքերէ :

\*  
\*  
\*

Չգուշացէ՛ք որ եւ է անձի վրայ չարախօսելէ,  
եթէ չէք ուզեր նոյն իսկ ձեր խօսակցին կասկածն  
հրաւիրել ձեր վրայ :

\*  
\*  
\*

Որչափ որ հանճար և գիտութիւն ունենամք ,  
չեմք կրնար յարգելի ըլլալ , եթէ չեմք գիտեր  
խօսիլ և լռել ըստ պաշտօնի :

\*  
\*  
\*

Ամենեւին մարդու մը վրայ չար մի խօսիք , թէ  
որ այդ բանը բարի մարդու կ'ընէք ամբարշտու-

թիւն է ըրածնիդ . իսկ թէ որ չար մարդու՝ . . .  
բայց փոխանակ չարախօսութեան , կրնայիք աղօ-  
թել անոր համար կամ ուրիշ կերպով այնատիւ  
անոր ուղղութեան :

\*  
\*  
\*

Խօսելու և գրելու աղատութեան մէջ զգու-  
շացէ՛ք չափազանցութենէ . ճանչցէ՛ք ձեր չափը և  
ձեր խելքէն վեր եղած բանին վրայ ոչ խօսեցէ՛ք  
և ոչ ալ գրեցէ՛ք :

\*  
\*  
\*

Անձերնուս վրայ խօսելու ատեն մեր զգացած  
չափազանց հաճոյքն պարտի երկիւղ ազդել մեզ  
թէ մի գուցէ մեր ունկնդիրները բոլորովին գրկենք  
այն հաճոյքէն :

\*  
\*  
\*

Ըսելու և խօսելու մէջ մեծ տարբերութիւն  
կայ . — Մարդկանց մեծագոյն մասը խօսելու հա-  
մար միայն կ'ըսեն , մինչդեռ բան մը ըսելու հա-  
մար խօսողներ շատ քիչ են :

\*  
\*  
\*

Առաքինի ձեւացող բայց իրաւքընէ մոլի մարդ-  
կանց անոյշ խօսքերէն զգուշացէ՛ք . — Մարդիկ-  
ները դատեցէ՛ք իրենց գործերէն և ոչ թէ իրենց  
խօսքերէն :

\*  
\*  
\*

Աւելի մտիկ ըրէ՛ քան խօսէ՛ , որովհետեւ  
լսելը խօսելէ լաւագոյն է : Նուազ խօսէ՛ քան  
աւելի , քիչ խօսէ՛ քան շատ , պէտք եղած ատեն  
խօսէ՛ քան յաճախ :



Սովորատ սահմանեց որ իր վարժարանին մէջ աշակերտներուն առաջին սովորելու բանը երկու տարի չի խօսիլ ըլլայ, վասն զի անկարելի է ազէկ խօսիլ սովորիլ, առանց լռել գիտնալու :

\* \* \*

Թէ որ կուզես քու հանգիստդ, զգուշաւոր եղի՛ր քու խօսքերուդ մէջ, թէ որ կուզես ամէնուն հետ խաղաղութեամբ ապրիլ՝ գիտցի՛ր տէր ըլլալ քու լեզուիդ :

\* \* \*

Կենցաղավարութեան մէջ հաճոյ ըլլալու արհեստը ոչ այնչափ բարակ և խելացի բաներ ըսելուն վրայ է որչափ չըսելու այն բանը, որ ուրիշին անհաճոյ է :

\* \* \*

Գրեթէ միշտ զրուցուած բաներէն աւելի, զանոնք զրուցելու կերպը կ'ազդէ մարդուս, վասն զի ամէն ոք քիչ շատ նոյն գաղափարներն ունի նոյն բանին վրայ, որ ամէնուն սովորական է, բոլոր տարրերութիւնը բացատրութեան կամ ոճոյն մէջ է :

\* \* \*

Լռել գիտնալը գծուարագիւտ կատարելութիւն մ'է և պատուական պարգեւ մը երկնից, որոյ համար կ'ըսէր հեթանոս իմաստուններէն մէկը. — «Մարդիկ կ'ուսուցանեն մեզի խօսիլ, աստուածները՝ լռել» :

\* \* \*

Գործաւորը գործէն ճանչնալու է միշտ և ոչ զէմքէն կամ անունէն. ամէնէն իմաստուն մարդերէն շատ անգամ տղայական խօսքեր կրնան լսուիլ, և այդ խօսքերն իրբեւ պատգամ ընդունուելու չեն իմաստնոյ մը բերնէն ելած ըլլալուն համար :

\* \* \*

Ձեր խօսակցին խօսքին ուշադրութեամբ լսեցէ՛ք և թոյլ տուէ՛ք որ ուրիշներն ալ անոր լսեն. իսկ եթէ նա խօսած ժամանակ շփոթի և կամ շուարի, մի՛ օգնէք անոր, մինչեւ որ նա ինքն չխնդրէ ձեզմէ. — Մի՛ ընդհատէք անոր խօսքը, այլ միայն ըսելիքն աւարտելէ յետոյ պատասխան տուէք :

\* \* \*

Անոնք որ կ'ըսեն մեզ թէ այս գործը պիտի ընեն, այն գործը պիտի ընեն, իրենց դիտարութիւնն է այս բանին նայիլ, այն բանին նայիլ, և յետոյ զայս պիտի ընեն, զայն պիտի ընեն. կըրնանք վստահ ըլլալ թէ նկարագրի տկարութիւն ունին :

\* \* \*

Ոչ ոք պէտք է խօսի իր վրայ ոչ բարի և ոչ չար, վասն զի եթէ բարի խօսի, սովորաբար սնտափառութիւն է, և եթէ չար՝ յիմարութիւն : Բարի խօսիլ մեր անձին վրայ, առանց ստիպող պատճառի մը, անխելքութիւն՝ իսկ գէշ խօսիլն է ընդունայնմտութիւն, և գուցէ այդ գործը արդէն



շատերը կան որ մեզմէ առաջ և մեզմէ աղէկ կը կատարեն :

\* \* \*

Ոչ միայն ընկերներդ, բարեկամներդ ընտրուած պէտք է ըլլան, այլ և քու խօսքերդ, մանաւանդ հարցումներդ. — Որովհետեւ հետաքրքրութիւնդ՝ մտքիդ վիճակը, զբաղումներդ, խորհուրդներդ կը յայտնեն. մէկ խօսքով ո և է բանի մը ունեցած հակումդ : Ընկերներուդ պատասխաններէն աւելի շատ հեշտ է հիմա ճանչնալ մարդը, անոր հոգիին խորը թափանցելով բուն իսկ իր ըրած հարցումներէն :



ԳԼՈՒԽ ԺԵ.

—

ՈՒՍՈՒՄ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Զայս միայն գիտեմ. զի ոչինչ գիտեմ (Սովրատ) :

\* \* \*

Գիտութիւնը հոգեոյն համար նոյնն է, ինչ որ է լոյսն աչաց համար :

\* \* \*

Շատահմտութիւնը գիտութիւնն չէ, ինչպէս որ ատաղձք չիւսուած մի չեն :

\* \* \*

Քիչ բան գիտնալու համար պէտք է շատ բան սովորիլ :

\* \* \*

Ուսում եւ գիտութիւնն եթէ զմեզ առաքինի ընկու չպիտի ծառային, ոչինչ են :

\* \* \*

Գիտութիւնը ամէն վիճակի եւ կացութեան մէջ մեծ գանձ մ'է :

\* \* \*

Մեծ տաղանդ մը ունի այն մարդը, որ գիտէ ջնջել ինչ որ կայ յինքն ուրիշները ճանճրացնող :



Գիտութիւնը ուրիշ բանի չպիտի ծառայէ ,  
բայց մարդուս վարքը ուղղելու ու լեզուն բըռ-  
նելու :

\* \* \*

Գիտունը ըլլալու ամէնէն պարկեշտ եւ ուղիղ  
ճամբան իր տկարութիւնը ճանչնալն է :

\* \* \*

Մեր գիտութեանց եւ ծանօթութեանց ամ-  
բողջութիւնը կղզեակ մ'է , որոյ շուրջ անծայր ու  
անհուն օվկիանոսը կայ դեռ :

\* \* \*

Ինչպէս որ ֆիզիքական գիտութիւնը մար-  
մինները կ'առողջացնէ , նոյնպէս ալ բարոյական  
գիտութիւնը հոգիները կը բժշկէ :

\* \* \*

Ընթերցանութիւնը կը լեցնէ միտքը գիտու-  
թեամբ իսկ մտածութիւնն է որ կարգացածնիւ  
մերը կ'ընէ :

\* \* \*

Ոչ թէ այն որ շատ կ'ընթեռնու , այլ այն որ  
օգտակար ընթերցմամբ կը պարապի, աւելի ուսեալ  
կը համարուի :

\* \* \*

Իսլամական չէ ունենալ . մեծ գիտութիւնն է  
ունեցածն ո՛չ միայն լաւ պահել ու մատակարար-  
բել , այլ եւ արդիւնաւորել գիտնալ :

Տգէտ մարդը մեռեալ մ'է կենդանեաց մէջ .  
իսկ գիտուն մարդն իր մահուընէն վերջն անգամ  
դեռ կ'ապրի :

\* \* \*

Ուսուցանելը դաստիարակել չէ , եւ ասոնք  
իրարմէ այնպէս կը տարբերին ինչպէս կեղեւն մի-  
ջուկէն , երեւոյթն իրականէն , միջոցն նպա-  
տակէն :

\* \* \*

Ես ուսման եւ գիտութեան ա՛յնքան շատ կա-  
րեւորութիւն կուտամ , որ եթէ գիտութիւնը ծա-  
խու առնուելու ըլլար , իմ բոլոր ստացուածքս  
կուտայի զայն գնելու համար :

\* \* \*

Այս աշխարհի վրայ անբարոյական ինչ ինչ  
ասպարէզներ կան որոց անդէտ եւ անտեղեակ  
մնալ լաւագոյն է բարի մարդուն համար . քանզի  
հակառակ պարագային մէջ , անոր երեւակայու-  
թիւնը կ'ապականի եւ անոր կիրքերը կը գրբգ-  
ուլին :

\* \* \*

Խոր տգիտութիւնն է , որ վճռաբար , վար-  
դապետօրէն կը ճառէ . բան մը չգիտցողը իր նոր  
սովորածը այլոց ըսելով զանոնք լուսաւորել կը  
կարծէ , մինչդեռ հմուտ մարդը հազիւ կրնայ մտա-  
ծել թէ՛ ուրիշներ կանգիտանան իր ըսածը , հե-  
տեւաբար անտարբերութեամբ կը խօսի :



Յիշողութիւնը մշակելու եւ սրելու համար պէտք է նախ ջանալ կատարելագոյն հասկնալ ինչ որ կը տեսնուիք, կը լսուիք կամ կը սովորիմք : Հարեւանցի լսած կամ ուսած բաներնիս ինչպէս որ մեր մտաց մէջ չեն տեղաւորուիր, այնպէս ալ չեն արմատանար մեր յիշողութեան մէջ :

\* \* \*

Գիտութեան նպատակն է ճանաչել զճշմարտութիւն, իր զբաղումն է հետազօտել զայն, իր նկարագիրն է սիրել զայն, իսկ զայն ստանալու միջոցներն են ընդդէմ կալ կրից եւ փախչիլ յանգործութենէ եւ ի դանդաղօս մտաց :

\* \* \*

Պատրաստ եղէ՛ք սրբագրել, պարզել, ընդարձակել եւ խորցնել գիտութիւնը, զոր ստացած էք, լաւը լաւագոյնին եւ լաւագոյնը ամէնալաւին հետ փոխանակել, կրկին եւ կրկին բերել Աստուածային օրէնքին ու Քրիստոսի վարդապետութեան քով եւ փորձել ինչ որ գիտէք կամ կը կարծէք թէ գիտէք, եւ ձեր մտածումներուն ու կեանքին մէջ միշտ տիրող ընել հաւատքն ու հնազանդութիւնը :



Գ Լ ՈՒ Խ Ժ Զ.

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ

Սխալը ճանչնալ եւ ուղղել ամօթ չէ, յամառիլն է պարսաւելի եւ միանգամայն ծաղրելի :

\* \* \*

Մարդ մը երբէք չկորսուիր, երբ գիտէ իր սխալները ճանչնալ եւ ինքզինքն ուղղել :

\* \* \*

Փառք համարէ՛ անձիդ ուղիղ մարդ ըսուիլը եւ ըլլալը . հալածէ՛ քեզմէ ամէն նենդութիւն, խորամանկութիւն եւ խորդախութիւն :

\* \* \*

Ուրիշներուն փորձն ու փորձառութիւնը թո՛ղ իմաստացնէ զմեզ եւ անոնց սխալներէն օգտուելով, մեր սխալները ուղղել սովորինք :

\* \* \*

Մի՛ ամչնաք խոստովանիլ ձեր պակասութիւնները . մեծանօգի եւ վեհանձն մարդը չվախնար ճանչնալ եւ ուղղել իր թերութիւնները :

\* \* \*

Գործի մէջ կանոնաւորութիւն, կարգապա-



հութիւն , ուղղութիւն , պարկեշտութիւն եւ  
խոստմնապահութիւն միակ պայմաններ են վստա-  
հութիւն վայելելու :

\* \* \*

Երբ որ բարիք խօսին վրաս եւ ես չիմանամ  
չեմ տհաճիր . բայց թէ որ չբարիք խօսին , կը փա-  
փաքիմ իմանալ , որ զիս ուղղեմ :

\* \* \*

Ուղղութեան գալու համար ոչ երբէք ժամա-  
նակն ուշ է , բայց այսօր աւելի դժուարաւ մարդ  
ինքզինք կ'ուղղէ քան թէ երէկ , եւ վաղը աւելի  
եւս դժուարութեամբ քան թէ այսօր :

\* \* \*

Նկարագիրը ամէնէն աւելի պահանջուած բանն  
է . բարի նկարագիրը կը բաղկանայ ուղղամտութենէ  
եւ ողջմտութենէ :

\* \* \*

Տեղափոխութիւնը չփոխեր եւ չսրբացներ  
զմարդ , երբ յուղղութիւն գալու իղձ ու հակում  
չունենայ : Տեղէ տեղ փոխուիլն յայտարար նշան  
է թոյլ եւ անհաստատ բնաւորութեան :

\* \* \*

Կատարելապէս ուղիղ մարդը , մեծ թէ փոքր,  
որ եւ է գործ ստանձնել չխոստանար , առանց  
նախ բանաւորապէս վստահ ըլլալու թէ կարող է  
ընել զայն : Խոստանալէն ետքն ալ կը ճգնի իր  
խոստումը պահել որ եւ է գնով :

Գիւրակեցիկ եւ բեղմնաւոր կեանք մը ապ-  
րելու միակ երաշխաւորութիւնն է , ուղղել մեր  
բնաւորութեան խոտոր կողմերը :

\* \* \*

Ամբարտաւանութիւն , ազահութիւն , բար-  
կութիւն եւ ձանձրոյթ են ախտք , որք զմարդ  
կ'ընեն չարաբաստիկ . մինչ յարատեւութիւն ,  
հպատակութիւն , բարիս հատուցանել չարեաց  
փոխարէն , սիրել զընկերն , բարեխառնութիւն ի  
բարս եւ ի վարս , ուղղամտութիւն , սրբութիւն ,  
սանձումն կրից եւ զգացմանց , ամուսնական հա-  
ւատարմութիւն , բարութիւն եւ ուսումն Ս. Գրոց  
մարդս կ'ընեն պարկեշտ եւ արժանայարգ :





Ա.Ջ Ն ՈՒ ՈՒ Թ Ի Ի Ն

Ազնուութիւն եւ պարկեշտութիւն կը բարձրացնեն մարդու արժանիքը :

\* \*

Մինակ չեն անոնք, որ ազնուական խորհուրդներ ունին իրենց իբր ընկեր :

\* \*

Ազնուականութեան էութիւնն է քաղաքավար ըլլալ տկարին, աղքատին, անօքին եւ խոնարհին հանդէպ :

\* \*

Ընկերսիրութիւն եւ ազնուամտութիւն միշտ գիրկընդխառն են եւ անբաժան ի միմեանց :

\* \*

Մարդ պարտական չէ լինիլ հարուստ, մեծ կամ գիտուն, բայց ազնիւ լինիլ պարտական է ամէն մարդ :

\* \*

Խաղաղ, համեստ եւ պատուաւոր ապրելու համար, մտքի մշակութիւն եւ սրտի ազնուութիւն պէտք է :

Ամէնուն հետ ազնուարար, բայց քիչերուն հետ ընտանի պէտք է ըլլալ :

\* \*

Ազնիւ մարդը ուրիշի դժբախտութեան համար ցաւ կ'զգայ, իբր թէ այդ բանին համար ինքը եղած ըլլար պատասխանատուն :

\* \*

Վիճակը չէ որ մարդը կ'ազնուացնէ, այլ մարդն՝ որ վիճակին պարտքերն աղէկ ու ճիշտ կատարելով, զայն կ'ազնուացնէ :

\* \*

Ո՛չ յաջողութիւնք մշտատեւ են եւ ո՛չ ձախորդութիւնք. առաջնոյն ենթակայք ազնուութեամբ՝ երկրորդին ենթակայք խոհեմութեամբ պարտին դործել :

\* \*

Ազնիւ անձը միշտ անկեղծ կ'ըլլայ, իր գիտցածը ամէնուն կը հաղորդէ, երբ ինքը զատէ որ անոնք բարի եւ օգտակար են :

\* \*

Ազնիւ մարդիկներու գլխաւոր յատկանիշը սա է, որ անոնք բարի բանը չէ թէ միայն իրենց համար կը ցանկան, այլ եւ ուրիշներու համար :

\* \*

Խնչ է ազնուութիւնը.— եթէ ոչ ուղիւ ըլլալ,



խոհեմ, առատաձեռն եւ իմաստուն, եւ այս բո-  
լոր յատկութիւններն ունենալով, զանոնք ամէնէն  
շնորհալի կերպով ի գործ դնել :

\* \*

Ճշմարիտ ազնուականութիւնը ծնունդի մէջ  
չէ անպատճառ, այլ կրթութեան, բարքի ու  
վարքի մէջ, եւ թէ մարդ ինքն իրմով կրնայ  
հիմնել ազնուականութեան տիպար մը, ազնուա-  
կանութեան ճշմարիտ անուն մը եւ անկորուստ  
տիրուցոս մը :

\* \*

Աննշան հակառակութիւն մը, անձնական ոխ  
մը լուծելու համար շատեր կը ջանան չարախո-  
սութեամբ անուանարկել իրենց թշնամի նկա-  
տածն, եւ կը կարծեն այդպէսով լուծել իրենց  
վրէժն. ինչ որ շիտակ չէ, վասն զի այդ վարմուն-  
քով, որ յատուկ է ստորին ու անկիրթ էակայ,  
մարդ վեհանձնութեան ու ազնուութեան դէմ մե-  
ղանշած կըլլայ :

\* \*

Տո՛ւր ինձ, Տէ՛ր Աստուած, սրտի այնպիսի  
ազնուութիւն, որ անմատչելի դառնայ երկրաւոր  
հակումներուն :



ՔԼՈՒԽ ՓԸ.

—

ԵՈՂՅԵՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԵՍՈՂՅԵՄՈՒԹԻՒՆ

Խոհեմութիւն է անանկ բան մը չընել, որուն  
վրայ ետքը պիտի զղջանք :

\* \*

Մեծ խոհեմութիւն է տեսնել բանին սկիզբէն  
անոր վախճանը :

\* \*

Խոհեմ մարդը աւելի պէտք է լուէ, քան թէ  
խօսի :

\* \*

Ամէնամեծ խոհեմութիւնը ուրիշներուն գոր-  
ծին միջամուխ չըլլալն է :

\* \*

Խոհեմութեամբ իր պաշտօնին մէջ յարատե-  
ւողը կը յարգուի միշտ :

\* \*

Խոհականութեամբ ոչ ոք կը զեղծանի, բայց  
առանց անոր ամէն բանով կը զեղծանի մարդս :

\* \*

Ամէն լսած բանիդ մի՛ հաւատար :



Բան մը ընելէդ առաջ ինքնիրենդ հարցուր թէ «սա բանը ի՞նչ օգուտ ունի» :

\* \* \*

Աւելի լաւ է խելացի մարդուն հետ քար կրել , քան թէ անխելքին հետ սեղան հասիլ :

\* \* \*

Աճապարանօք եւ անխորհուրդ եղած որոշումները գրեթէ միշտ վտանգաւոր եւ վնասակար եղած են :

\* \* \*

Խոհական մարդը գործուած յանցանաց համար չէ որ կը պատժէ , այլ դալիքին առաջքն առնելու համար :

\* \* \*

Մարդատեցութեամբ չհեռանանք , չփախչինք մարդիկներէն , այլ խոհեմութեամբ զգուշանանք անոնցմէ :

\* \* \*

Բաւականութիւնն ու խոհեմութիւնը պէտք է հաշտեցնել մեր բնածին հպարտութեան եւ օրինաւոր բաղձանքներուն հետ :

\* \* \*

Խոհեմ մարդը եթէ ժամ մը խորհի իր խօսելիքին վրայ , պէտք է տասն ժամ մտածէ ընելիքին վրայ :

\* \* \*

Առ հասարակ աւելի օգտաւէտ է խոհեմարար

վերջ դնել թշնամութեան , քան թէ գրգռել եւ մտունդ տալ անոր :

\* \* \*

Մեծ խոհեմութիւն է պատասխան չտալ ցած մարդու խօսքին ու չպատժել , ինչու որ ազնուականութեան չի վայլեր իշխալ անանկ մարդու հետ :

\* \* \*

Խոհեմութիւն ըլլայ ձեր առաջին պահապանը եւ շուտով մէկէն չհաւատալն ըլլայ ձեր առաջին խելքը :

\* \* \*

Խոհեմ մարդը մեղմարար կը խօսի , կը շարժի , կը գործէ , եւ կրքի ու ժգնութեամբ բան մը չընէր : Իր գործերուն մէջ ոչ զիւրորոջ է եւ ոչ ալ զիւրափօփոխ :

\* \* \*

Խոհեմ եւ իմաստուն մարդիկ ուրիշի կրած վնասէն դաս կ'առնեն եւ խելք կը սովորին . իսկ անխոհեմ եւ յիմար մարդիկ իրենց կրած վնասով ալ չեն խելամախիր եւ չեն օգտուիր :

\* \* \*

Ճշմարիտ խորագիտութիւնը ուրիշ բան չէ , եթէ ոչ կանոնաւոր խոհեմութիւն մը , որով անկեղծ կ'ըլլանք առանց միամիտ ըլլալու , ճարտար՝ առանց խաբեբայ լինելու :

\* \* \*

Հանդարտ մտքով կարդացէ՛ք , յուզեալ սրտով



գրեցէ՛ք, պաղարիւնութեամբ խօսեցէ՛ք, միամտութեամբ աղօթեցէ՛ք, լրջութեամբ խորհեցէ՛ք եւ խոհեմութեամբ գործեցէ՛ք :

\* \* \*

Սոհեմութիւն չէ ոչինչ ցաւի համար ահոայ քաշել եւ փառած գերանի մը համար սունը քանդել, մին գարմանելու եւ միւսն նորոգելու է :

\* \* \*

Մարդկային խոհականութեան ամէնարարձր կատարն ելած կ'ըլլանք, երբ կը սովորինք մեզի հանդիպած ամէն անհաճոյ բաներէն եւ նոյն իսկ ամէնամեծ ձախողանքներէն ամէն կարելի օգուտը քաղել :



—

**ՓՈՐՃՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈՐՃԱՌՈՒԹԻՒՆ**

Փորձառութեան դասերը ընտիր դասեր են :

\* \* \*

Փորձութիւնը ըստ ինքեան մեղք չէ, բայց հետեւիլը կ'ըլլայ մեղք :

\* \* \*

Բոլոր ծայրահեղութիւնք չարիքներ են, որոնցմէ զգուշանալ սովորեցնելու էր փորձառութիւնը :

\* \* \*

Մտիկ ըրէք կործանած խեղճ մարդու մը խրատին, որ է՝ քննաւ չղիջանիլ առաջին փորձութեան :

\* \* \*

Փորձանքը հուր փորձող է, որ կը փորձէ թէ ո՛վ մաքուր ոսկի է եւ ո՛վ երկաթ ժանգաճար :

\* \* \*

Երբ Աստուած մեր վրայ փորձանքներ կը զրկէ նպատակ ունի զգուշացնել զմեզ աւելի մեծագոյն փորձանքներէ :



Կեանքի մէջ յաջողութեան զլխաւոր պայ-  
մաններէն մին է, նիւթապէս եւ բարոյապէս օգուտ  
քաղել ուրիշներու փորձառութենէն :

\* \* \*

Մաստիկ փորձանք ոսկւոյ պէս կը զտեն  
զՔրիստոնեայս : Եթէ հնոցը եօթնապատիկ աւելի  
սաստիկ է, եօթնապատիկ աւելի մաքուր կ'ընէ  
զմեղ եւ քաջ հասկցած եմ թէ երբեմն ինծի շատ  
խիտ երեւցող փորձութիւնները վերջապէս իմ  
բարւոյս եւ օգտիս ծառայած են :

\* \* \*

Մարդուն համար ամէնէն յարմարագոյն գործն  
ու վիճակը՝ սրտի հանդարտութիւն եւ մաքի յըս-  
տակութիւնն է, եթէ ասոնք ունի, յաղթած է աշ-  
խարհային ամէն տեսակ փորձութեանց :

\* \* \*

Կ'ըսուի թէ զժրագլու է ով որ բանի մը փորձն  
չէ առած . բայց դուն մի' ուզեր ամէն բանի փորձն  
առնուլ . միթէ Աստուած պարտ'պ տեղ ուրիշնե-  
րուն գլուխը փորձանք կը բերէ :

\* \* \*

Եթէ մօտ ես փորձութեան, խոյս տուր . եթէ  
հեռու ես՝ մի մօտենար . աչքէդ միշտ զգուշա-  
ցի'ր, որ սրտիդ մէջ վատ կրքերու տեղի չտաս :

\* \* \*

Աշխարհս այսպէս է, եղբայր, եթէ փորձանքի

մը-եկար խորհուրդ հարցուր որքան կ'ուզես, ում  
կ'ուզես, ամէն մարդէ հազար խրատ կը լսես,  
բայց թէ խնդրես որ լինին քեզ օգնական՝ խօսոյն  
ամէնքը խուլ ու մուռլ կը դառնան :

\* \* \*

Մարդ մինչեւ կեանքին վերջը ուշադրութիւն  
ընելու է այս կէտին : — Սխալին զգալուն պէս,  
ջանալու է կարելի եղածին չափ շուտով դարմա-  
նել զայն : Աշխարհի մէջ ամէնալաւ ուսուցիչը  
փորձառութիւնն է : Կ'ընդունիմ որ սխալիլը մարդ-  
կային տկարութիւն մ'է . բայց նորէն չսխալելու  
ջանալ մեր պարտականութիւնը պէտք է ըլլայ :  
Մարդ միայն խրատներով չկատարելագործուիր,  
հարկ է որ սխալի եւ փորձութեան ենթարկուի :









Թիւն կը գտնես եւ թէ՛ ուրիշներուն կը պատճառես ցնծութիւն :

\* \* \*

Վիճարանութիւնը , որ եւ է մարդու հետ , եթէ պատշաճ քաղաքավարութեամբ չըլլայ , գրեթէ միշտ վնասակար է քան թէ օգտակար :

\* \* \*

Եթէ մենք մեր զաւակաց տէրն եմք , պարտիւք զանոնք երջանիկ ընել բարի կրթութեամբ եւ համեստ դաստիարակութեամբ :

\* \* \*

Կ'անգնէ քեզմէ մեծին հանդիպած ատենդ եւ ճանաչար՝ տուր անոր , մանաւանդ երբ նա մի դրան կամ նեղ անցքի մէջ պատահի :

\* \* \*

Ամենեւին բան մը կարող չէ այնպէս կրթել մեր սիրտն ու միտքը , ինչպէս ազնիւ օրինակները եւ խրատական խօսակցութիւնները :

\* \* \*

Մի՛ քնանար երբ ուրիշներ կը խօսին , մի՛ կանգնիր երբ ուրիշներ նստած են , մի՛ խօսիր երբ հարկ է լռել , մի՛ շտապեր դէպ յառաջ , երբ ուրիշներ կեցած են :

\* \* \*

Լաւագոյն քաղաքավարութիւնը պարզութիւնն է . պարզերեսն ընաւ չչառագունիր , իսկ

ստախօսն երբ նշաւակի , ամօթալի անուն մը կը թողու ընդ միշտ :

\* \* \*

Եթէ կ'ուզէ՛ք որ ձեր զաւակները լինին ճշմարտապէս բարեկիրթ եւ քաղաքավար անհատներ , զարգացուցէ՛ք զանոնք բարոյապէս եւ մտաւորապէս :

\* \* \*

Մարդու իր մեծաւորաց հնազանդիլը պէտք մ'է , իր հաւատարմներուն խոնարհիլը՝ մարդավարութիւն , իսկ իրմէ վարիմներուն՝ ազնուակասնութիւն :

\* \* \*

Չկայ բան մը , որ այնչափ մեծ համարմունք քեզի վասակցնէ , որչափ խոնարհ սրտիւ վարմունք մը եւ քաղցր ու սիրելի կերպ մը :

\* \* \*

Միշտ շնորհալի կերպ մը ունեցէ՛ք , եւ ձեր բացասարութիւնները թո՛ղ միշտ քաղաքավար ըլլան . զիտցէ՛ք որ այս է գեղեցիկ գաղտնիք մը ինքզինքը ամէնուն սիրելի ընելու :

\* \* \*

Ինչ ալ պատահի սեղանին գլուխը , մի նեղանաք , ալ զսպեցէ՛ք ձեր բարկութիւնը եւ զուարթ կեցէ՛ք , մանաւանդ երբ հիւրեր ըլլան ձեր տան մէջ , որովհետեւ լաւ է ունենաք ուրախ եւ շէն սիրտ , քան թէ փարթամ ճաշ :



Այն ծնողք, որ իրենց զաւակները մատաղ հասակին մէջ կը կրթեն Աւետարանի սկզբունքով, կը նմանին այն իմաստուն պարտիզպանին, որ իր ծառերը նոր անկուած ժամանակին կը պատուաստէ ամէնէն ընտիր պտղոց տեսակներէն :

\* \* \*

Խորհուրդ մի՛ տար եւ քու կարծիքդ մի՛ ըսեր, քանի որ քեզի չեն հարցուցած, այդ բանը տեսակ մը յանդիմանութիւն է ուրիշներուն, որպէս թէ ասէտ են, եւ անոնց հասկցնել մ'է թէ դուն զքեզ անոնցմէ շատ վեր կը սեպես :

\* \* \*

Որչափ աւելի սիրելի, եւ մեծերուն աչքին լոյսն ըլլաս, այնչափ ալ աւելի նայէ որ անուշ ըլլայ բարքդ ամէնուն հետ, եւ այնպիսի վարմունք մը ունենաս որ դիւրաւ քեզի մօտենան ուզողները :

\* \* \*

Քարեբարոյ մարդու մը հարցուցին թէ մարդավարութիւնը ո՞ւր սորվեցար. — «Շատ կոշտ եւ անմարդավար մարդոց մէջ, անոնց վրայ տեսած եւ ինձ անհաճոյ թուած վարմանց հակառակն ընելովս» ըսաւ :

\* \* \*

Քաղաքավարութեան ոգի ըսելով կը հասկընանք մի տեսակ մասնաւոր ուշադրութիւն խօսքերու եւ կերպերու զոր կ'ընենք որպէս զի ուրիշներ գոհ ըլլան թէ՛ մեզմէ եւ թէ՛ իրենք իրենցմէ :

Նթէ քաղաքավարութիւնը միշտ չնորոշներ բարութիւն, արդարասիրութիւն, կամարարութիւն եւ երախտագիտութիւն, դոնէ անոնց երեւոյթը կուտայ, եւ մարդը այնպէս ցոյց կուտայ դուրսէն, ինչպէս որ իրօք պէտք էր ըլլալ ներսէն :

\* \* \*

Ո՛վ դուք, որ կը ցանկայք սիրելի ըլլալ մարդկանց, ջանացէ՛ք ըլլալ մարդասէր. դիւրամտոյց եւ քաղաքավար, այնպէս վարուեցէ՛ք, որ ձեզի հետ խօսող մարդիկ գոհութեամբ բաժնուն ձեզմէ :

\* \* \*

Սիրելի ըլլալը կախում ունի գլխաւորապէս մեր խօսուածքէն եւ վարմունքէն : Աղէկ ծառայութիւններ եւ առատաձեռն պարգեւներ շատ անգամ ուրիշին սիրտը այնչափ չեն շահիր, որչափ քաղաքավար եւ քաղցր խօսքեր :

\* \* \*

Մարդ իրաւունք չունի անվայել խօսք մը ըսելու ինչպէս իրաւունք չունի անվայել գործ մը եւ կամ կոշտ բան մը ընելու :

\* \* \*

Աստիճանաւոր եւ պաշտօնատար մարդիկներուն ամէն տեղ կը վայելէ բարձ եւ պատիւ. բայց եթէ նոքա երիտասարդ են, պէտք է որ իրենք մեծարանք չնորհեն այնպիսի անձերու որոնք թէեւ պաշտօնատար չեն, սակայն պատուելի են ծագմամբ եւ ազնիւ ընաւորութեամբ :



Եթէ կ'ուզես որ աշխարհ զքեզ սիրէ եւ յարգէ, ամէնուն հետ քաղաքավարութեամբ քաղցրութեամբ եւ մարդասիրութեամբ վարուէ : Իսկ եթէ ընդհակառակն խիստ եւ ամբարտաւան կերպերով անտանելի ըլլաս որոնց հետ որ կը վարուիս, ատելի կ'ըլլաս ստորնագունից, արհամարհելի մեծերուն եւ ծաղրելի բոլոր աշխարհքին :

\* \*

Սիանի-Սմիթ կը սիրուէր անոր համար, որ ատանց զգալու կը վարուէր հարուստին եւ ազքատին հետ, իր ծառաներուն եւ ազնուական այցելուներուն հետ, նոյն քաղաքավարութիւնով, նոյն յարգանքով, նոյն սիրով եւ նոյն զուարթութիւնով, օրհնութիւն սփռելով եւ օրհնութիւն քաղելով ուր որ երթար :

\* \*

Մի' ամէնար ճանչնալու քու պակասութիւնդ եւ հատուցում մը ընելու այն անձին, որոյ սիրտը վիրաւորեցիր, եւ դարմանելու քու սխալդ, ներում խնդրելով անուշ եւ քաղաքավարական խօսքերով : Այն ժամանակ չէ թէ արհամարհելի կ'ըլլաս, այլ մանաւանդ գովելի եւ ամէն բարի մարդիկ կը հաւնին քեզի :

\* \*

Պէտք է աշխատինք ազքատ, մեզմէ փոքր եւ նուաստ համարուած մարդկանց հետ ալ քաղաքավարութեամբ եւ յարգանօք վարուելու. այս երկու օգուտ ունի, մին՝ ամէն դասակարգի մարդ-

կանց առջեւ յարգի եւ պատուաւոր կը լինինք, եւ երկրորդ՝ մեր դէպ ի մեզմէ մեծերն ըրած քաղաքավարական վարմունքը կեղծաւորութիւն չհամարուիր :

\* \*

Աղքատ ծնիլ ու ապրիլ ոչ նախատինք է եւ ոչ ամօթ, բայց երբ լուսոյ եւ յառաջդիմութեան համար ծնած մարդը սոխութեան խաւարին մէջ կը խարխափէ գիտակցարար եւ չընդգրկեր ուսումն ու բարեկրթութիւնը եւ անով չլուսաւորեր մտաց հորիզոնը, ամէն նախատանաց եւ արհամարհանաց արժանի է այնպիսին :





ՆԵՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՎՇՏԱԿՐՈՒԹԻՒՆ

Բնաւ վիշտ չունենալը շուայտել կու տայ .  
իսկ մեծ վիշտ՝ տուայտել կուտայ . ուստի փոքր  
վիշտը Աստուծոյ պարգեւն է :

\* \* \*

Ցաւը հուր է որուն մէջ հոգին , ոսկւոյ պէս  
մարդկային տկարութեանց կղկղանքներէն կը  
սրբուի եւ կը մաքրուի :

\* \* \*

Բարի մարդիկ կը նմանին անուշահոտ տուն-  
կերու , որոնք որքան որ փչրուին , այնքան աւելի  
իրենց անուշահոտութիւնը կ'արտաբուրեն :

\* \* \*

Երբ անյաջողութեամբ եւ ձախողուածով  
նեղուիս եւ տառապիս , գիտցած եղիբ , որ՝ յատ-  
կապէս Բարձրելոյն թոյլտուութեամբ է , զի այնու  
կը սրբիս ի մեղաց եւ կ'արիանաս յառաքինու-  
թեան :

\* \* \*

Թշուառութիւնը թէեւ փոթորիկ է , որ կը  
խորտակէ , հով մէ որ կը փչէ . բայց նաեւ այն

բովն է , ուսկից գուրս կուգայ հոգին աւելի փայ-  
լուն , աւելի գեղեցկացած :

\* \* \*

Մեր կենացը մէջ պատահած ձախողութիւն-  
ներ տեսակ մը կրթութիւն են մեզի համար եւ  
խրատ՝ որ մենք զմեզ ուղղենք եւ թէ որ ճամբէ  
գուրս ելեր ենք՝ խելքերնիս գլուխնիս ժողվենք :

\* \* \*

Աղէտները մարդուս աւելի օգտակար են քան  
յաջողութիւնները . քանզի աղէտներ մարդուս  
ինքզինքը ճանչցնել կու տան . մինչդեռ յաջողու-  
թիւններ շատ անգամ զմեզ հպարտացնելու եւ  
մոլորեցնելու կը ծառայեն :

\* \* \*

Ինչպէս բնութեան եւ արուեստից , նոյնպէս  
չնորհաց մէջ խստութիւնն է որ կուտայ , ինչպէս  
քարին , նոյնպէս հողոյն , իր փայլը : Որչափ  
աւելի կը գործուի ազամանդն , այնչափ աւելի կը  
շողշողայ . նոյնպէս երբ Աստուած նեղութիւններ  
կու տայ , նպատակն ուրիշ բան չէ , եթէ ոչ կա-  
տարեալ ընել զմեզ :





ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԴՍՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Աշխատութիւնը ճամբայ մ'է դէպ ի առաքի-  
նութիւն :

\* \* \*

Աշխատութեան պտուղը հաճոյից քաղցրա-  
գոյնն է :

\* \* \*

Բոլոր չար մտածութեանց սկիզբը դատար-  
կութիւնն է :

\* \* \*

Մարդ ամէն բանէն կը ձանձրանայ բաց ի  
աշխատանքէն :

\* \* \*

Լաւ մարդկանց մեծ նշանը պարապ չկենալն է :

\* \* \*

Ամէն դատարկագորտ մարդ չարագործ մ'է :

\* \* \*

Չկայ տարիք մը որ յուսահատութիւն պատ-  
ճառէ աշխատիլ ուղողին :

\* \* \*

Մարդ ըլլալու աշխատինք և մենք հրեշտակ  
պիտի ըլլանք :

Աշխատութիւն և ժուժկալութիւն երկու լա-  
ւագոյն և յաջողակ բժիշկներ են :

\* \* \*

Աշխատանքով միայն ձանձրութեան , ախտից  
և կարօտութեան առջեւը կ'առնուի :

\* \* \*

Բռնադատեցէ՛ք զմարդիկ յաշխատութիւն ,  
և պարկեշտ ու պատուաւոր պիտի ընէ՛ք զանոնք :

\* \* \*

Ո՛վ որ բան մը չի գործեր , անշուշտ չարու-  
թիւն կը գործէ , կ'ըսեն Ամերիկացիք :

\* \* \*

Աշխատութենէ մի՛ հրժարիք երբէք , եթէ  
ըլլաք իսկ յոյժ մեծատուն և հարուստ :

\* \* \*

Աշխատութիւնը օրէնք է , ով որ չաշխատիր  
ձանձրանալով , պիտի աշխատի տանջուելով :

\* \* \*

Աշխատութիւնը մոլութեան դեղթափ , բա-  
րեկեցութեան պատճառ և երջանկութեան գոր-  
ծիքն է :

\* \* \*

Աշխատութիւնը իրեն հետ կը բերէ դիւրակե-  
ցութիւն , առատութիւն , գոհունակութիւն և  
պատիւ :



Մարդս աւելորդ փափկութիւններով կը հիւ-  
ւանդանայ, իսկ չափաւոր աշխատանք առողջ  
կը մնայ :

\* \* \*

Ձեռքը երբ օգտակար գործերով զբաղի,  
միտքն ալ ունայն մտածմունքներու չերթար :

\* \* \*

Աշխատասէր մարդուն դռնէն կը հայի անօ-  
թութիւն, բայց ներս չի համարձակիր մտնալ :

\* \* \*

Այնպէս աշխատէ՛ որ իբր թէ յաւիտեան պիտի  
ապրիս, այնպէս աղօթէ՛, որ իբր թէ այսօր իսկ  
պիտի մեռնիս :

\* \* \*

Ծուլութեան դէմ՝ աստին անարգ . — Լաւ  
հասկնանք, մէկ հատիկ դեղ կայ աշխատանք :

\* \* \*

Աշխատեցէք ունենալ գերազանց սրբութիւն  
սրտի, վեհագոյն արիութիւն հոգւոյ և մեծափառ  
ազնուականութիւն մտաց և մարմնոյ :

\* \* \*

Կենաց ամէն շրջանին մէջ աշխատութիւն ու  
ուսումնասիրութիւն գեղեցիկ են և օգտակար :

\* \* \*

Անգործութիւն և ծուլութիւն կը նմանին

ժանգի, որոնք աւելի կը մաշեցնեն քան թէ աշ-  
խատութիւնը :

\* \* \*

Առողջութիւն, հոգւոյ կորուլութիւն և սրտի  
խաղաղութիւն, աշխատութեան անդրանիկ պտուղ-  
ներն են :

\* \* \*

Սատանան կարող է միշտ չար գործ մը գրա-  
նալ այն ձեռքերուն համար, որոնք չեն ուզեր  
գործել :

\* \* \*

Բնաւ պարապ մի՛ կենաք, այլ կարդացէ՛ք,  
գրեցէ՛ք, աղօթեցէ՛ք և հասարակութեան օգտա-  
կար բանի՛ մը աշխատեցէ՛ք .

\* \* \*

Մի՛ մոռնաք ընաւ որ կեանքի մէջ մարդ իւր  
երջանկութիւնը իւր աշխատութեան մէջ փնտռե-  
լու է և ոչ թէ բաղդին :

\* \* \*

Աշխատութիւնն է այն ոսկեղէն բանալին, որ  
պիտի բանայ ձեր առջեւ ամէն բարեաց գանձա-  
բանները :

\* \* \*

Մարդ մը պարտի աշխատիլ իւր երիտասար-  
դութեան ատեն, իրաւունք ունենալու համար  
չաշխատիլ իւր ծերութեան ժամանակ :



Մարդու մարմնոյ և հոգւոյ պահպանիչն՝ օգտակար աշխատութիւնն է, իսկ հոգեկան անկման պատճառը՝ դատարկութիւնը :

\* \* \*

Դատարկացորտ, ուրեմն և անօգուտ մարդը, որքան ալ երկար ապրի, ապրած չլինիր, այլ միայն խօսած կամ անած :

\* \* \*

Թշուառութեան սիրտումը չէ թէ խօսքի, ունայն խօսքի ու խրատի մէջ է, այլ անձնական աշխատութեան, յարատեւութեան և տնտեսութեան մէջ :

\* \* \*

Առ հասարակ ողջխոհ կեանք և անարատ վարք ունեցողներ, կերակուրներու մէջ չչափազանցողներ և կանոնաւոր աշխատողներ երկայնակեաց կ'ըլլան :

\* \* \*

Շահաւէտ զբաղմունք մը չունեցող մարդուն գլուխը վատ խորհուրդներու օթեւան է, որով և կը ճմարտուի այս առածը թէ. «Ծուլութիւն է մայր ամենայն չարեաց :»

\* \* \*

Ով որ իր ատենը օգտակար բաներով կ'անցընէ, ամէն մարդ զանի աղէկ մարդու տեղ կը դնէ, իսկ պարապ կեցողը աղէկ մարդ չի սեպուիր :

Կը կարծէք թէ ծուլութեամբ աւելի քաղցր կեանք կը վարէք քան թէ աշխատութեամբ : — Ո՛չ . — Որովհետեւ դատարկացորտ ծուլութենէն շատ վշտեր կը ծագին և անօգուտ հանգստութենէն դառն հոգեր :

\* \* \*

Շատեր կը գանգատին աշխատութեան համար, բայց պէտք է գիտնան թէ կեանքը առանց աշխատութեան, տխուր և տաղտկալի կ'ըլլայ, թէ ամէնադժուարին աշխատութիւնը՝ ծուլութեան հետ բաղդատուելով, քաղցր և դիւրատար է մարդու :

\* \* \*

Աշխատանքը հիւանդութիւնը եւ ձանձրոյթը կը հեռացնէ, ախորժակ կը բանայ, քուն կուտայ, կը զուարթացնէ եւ գոհ կ'ընէ զմարդ : Աշխատանքի վարժուող մարդուն մեծ պատիժ է անգործ մնալը :

\* \* \*

Անոնք որ անգործ կ'սպասեն իրենց բախտին բացուելուն, ապահով թող ըլլան թէ աղքատութեան դուռը միայն պիտի բացուի իրենց առջեւ :

\* \* \*

Չկայ մոլութիւն մը, որ տղոց սրտին մէջ ապականութեան կրակը այնչափ հրահրէ, ինչպէս դատարկակեցութիւնը . չկայ մոլութիւն մը որ այնչափ խռովութիւններ հանէ, որչափ պարապ կենալը :





Ջ Պ Ո Ւ Ե Ո Ւ Թ Ւ Ի Ն

Մարդկային բնութիւնը զգուշութիւններով միայն կրնայ պաշտպանուիլ :

\* \*

Ձգուշացէ՛ք կեղծաւոր մարդէն, փախէ՛ք բարկացոտ մարդէն :

\* \*

Վատ կնիկէն զգուշացէ՛ք, բարի կնկան աշ շատ մի՛ հաւատաք :

\* \*

Ձգուշացէ՛ք որ վիրաւորիչ խօսք և հայհոյանք չի սպորդի ձեր շրթունքներէն :

\* \*

Ձգուշացէ՛ք անոնցմէ, որոնք իրենց շահը ընկերին մնաստուն մէջ կը փնտռեն :

\* \*

Երկու անարգանաց արժանի ծայրայեղութեանէն շատ զգուշանալու է. — այսինքն իւր անձը գովելէն և ուրիշը վար զարնելէն :

\* \*

Նայէ՛, աչքդ բաց. — չափդ գիտցի՛ր, զգոյշ

կա՛ց. — ձեռք մի՛ զարնէր այն բանին, որ քեզի համար չդրին :

\* \*

Հեռացէ՛ք, խսպառ հեռացէ՛ք այն մարդէն որ ուրիշին համբաւը կարատաւորէ :

\* \*

Ձգուշ կացէ՛ք մանր ծախքերէն, երբեմն հերիք է մի փոքրիկ ծակ, որ մի մեծ նաւ երթայ ծովի տակ :

\* \*

Ձգուշացէ՛ք ընդվայրաքննին մարդիկներէն, որոնք իրենց չվերաբերած բաներուն կը հետաքրքրուին :

\* \*

Այլոց թերութիւնները դիտելէ և քննադատելէ առաջ, զգուշանանք որ մենք եւս նոյն թերութիւնները չունենանք :

\* \*

Պէտք է զգուշանալ քալելու և գրելու ժամանակ, որպէս զի ոտք և գրիչ խելքէ առաջ չքալին :

\* \*

Ձգուշացէ՛ք այն մարդէն, որ իւր բացակայ բարեկամին վրայ կը չարախօսէ, կամ չպաշտպաներ զայն, երբ այլք կը չարախօսեն :

\* \*

Ձգուշացէ՛ք ձեր կինը գովելէ կամ նախա-



տելէ օտարաց առջև, որովհետև առաջին պարագան տկարութիւն է իսկ երկրորդն՝ անմտութիւն:

\* \* \*

Չարք կռիւ կը սիրեն, ինչպէս ճանճք՝ վերքը. պարկեշտ մարդը պէտք է զգուշանայ կռիւէ, իբր մահաբեր նետէ մը:

\* \* \*

Կենցաղավարութեան մէջ նայեցէ՛ք որ միշտ զգուշանաք անշահ և անլի կատակներէն, նմանապէս և անհամ քաղաքավարական խօսքերէն:

\* \* \*

Պէտք է զգուշանալ այն անմեղ հաճոյքներէն որոնք գայթակղութիւն կը պատճառեն ուրիշներուն:

\* \* \*

Վարդը առնելու պահուն զգուշանալու է փուշերէն և մեղուի նման, ո՛չ միայն վայելելու է ծաղկին գոյնը և հոտը, այլ և օգտակար մեղր հանելու է անկէ:

\* \* \*

Յատակը չտեսնուած փոսին մէջ մի՛ կոխէք վասն զի խորութիւնը չէք գիտեր:

\* \* \*

Ամէն կրցած բանդ մի՛ ըներ, ամէն ունեցածդ մի՛ մսխեր, ամէն լսած բանիդ մի՛ հաւատար և ամէն լսածներդ ալ մի՛ ըներ. — ինչ որ ըսել է թէ «ամէն պարագայի մէջ զգուշաւոր մարդ եղի՛ր»:

Պէտք է լինիք միշտ ճիշտ, զգուշաւոր և կատարեալ, մեծ կամ փոքր ամէն գործի մէջ:

\* \* \*

Զգուշացէ՛ք այն ծառայէն որ ուրիշներու մոլութեան կամ թերութեան լուրերն իր տիրոջը կը հասցնէ, որովհետև այնպիսին իւր տիրոջ գէշ լուրերն ալ ուրիշներուն ականջը կը հասցնէ:

\* \* \*

Քաղաքավարներու դասին մէջ պատուաւոր դիրք ունեցողները իրենց յարգը կը կորսնցնեն եթէ անխտիր տեսութիւն ընեն ստորին մարդոց հետ. պէտք է զգուշութեամբ ընդունիլ տունդ եկողը. — ինչպէս որ ջերմութիւնը կը նուազի երբ ցուրտ մարմիններու մօտի, նոյնպէս և համարումը կը նուազի երբ վարնոց մարդերու մօտենայ:

\* \* \*

Զգոյշ կեցէ՛ք, չըջահայեաց եղէ՛ք ամէն բանի մէջ որ կը խօսիք, որ կը գործէք. այս զգուշաւորութիւնը կը վառէ ձեր սրտին մէջ այնպիսի գեղեցիկ յօթարութիւն մը, որով ամէն կարելի միջոցներով կը ջանաք ձեր անկարգ կիրքերը զսպել ու չափի մէջ դնել. նաև կը լեցնէ ձեր հոգին տեսակ տեսակ օգտակար և հաստատուն խորհուրդներով և առաքինական առաջադրութիւններով, և համեստ մարդու կեանք մը վարել կուտայ ձեզի:





ՊԼՈՒԽ ԻԳ.

Գ Ա Ղ Ց Ն Ս Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ի Ն

Բնաւ թոյլ բերան մի՛ ըլլաք :

\* \*

Աշխատեցէ՛ք որ քիչ խօսիլ և լռել սորվիք :

\* \*

Սիրտը չունի գաղտնիք մը , որ մարդուս ընթացքովը չյայտնուի :

\* \*

Երկու հոգւոյ գիտցածը Աստուած միայն գիտէ , երեք հոգւոյ գիտցածը , ամէն մարդ գիտէ :

\* \*

Գաղտնապահ և ներողամիտ եղէ՛ք այլոց թեւութեանց , եթէ կը ցանկաք լաւ ընդունելութիւն գտնել ամէն ուրեք :

\* \*

Բաց բերան և անխոհեմ մարդը նման է կնիքը բացուած նամակի , զոր ամէն մարդ կրնայ կարդալ :

\* \*

Պէտք չէ չփոթել անխորհրդապահութիւնը

անկեղծութեան հետ և թերութիւն մը բարեմասնութիւն համարել :

\* \*

Ուրիշին գաղտնիքը իմանալու հետամուտ մի՛ ըլլաք , չափազանց հետաքրքրութիւնը մեծ անբաղաքալարութիւն է , և շատ անգամ նշան անխոհեմութեան :





ԲԱՐԵԿԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Բարեկամ մը մեր մի ուրիշ անձն է :

\* \* \*

Բարեկամիդ պատիւը քուկդ ալ է :

\* \* \*

Անկեղծ բարեկամութիւնը երկնային ուրախութեանց նախաշաւիղն է :

\* \* \*

Բարեկամութեան առաջին կանոնն է պիտանի ըլլալ :

\* \* \*

Կեղծաւոր բարեկամին կորուստը մեծ գիւտ է :

\* \* \*

Երբ անվստահութիւնը հասնի , բարեկամութիւնը կ'անհետանայ :

\* \* \*

Բարեկամութիւնը կրակի պէս կը մարի , թէ որ չարծարծեմք :

\* \* \*

Կրնամք ապրիլ առանց ծնողքի , բայց ոչ առանց բարեկամի :

Հայրը գանձ , եղբայրը մխիթարիչ , իսկ բարեկամը՝ երկուքն ալ է :

\* \* \*

Մեր ցաւերը նուազուցած կ'ըլլանք , եթէ զանոնք մեր բարեկամաց հաղորդենք :

\* \* \*

Ով որ առանց պակասութեան բարեկամ կը փնտռէ առանց բարեկամի կը մնայ :

\* \* \*

Մեր երջանկութիւնը կրկնապատկած կ'ըլլանք եթէ բարեկամ մ'ալ անոր մասնակից ընենք :

\* \* \*

Ով որ բնաւ չկրնար զիջում ընել բարեկամութեան մէջ , չկրնար նաեւ լինել բարեկամ :

\* \* \*

Առանձնութիւնը թշուառ կ'ընէ զմարդ : Ամէնէն մեծ չարիքն է չունենալ բարեկամներ :

\* \* \*

Եթէ կ'ուզէք գիտնալ թէ ո՛վ է ձեր ամէնէն թանկագին եւ անկեղծ բարեկամը . . . հայելիի մը մէջ նայեցէք :

\* \* \*

Բարեկամ մը որ բարիք չըներ , այնչափ կ'արժէ , որչափ կ'արժէ թշնամին որ չ'ըլլասեր :



Առաքինական բարեկամութիւնք՝ քաղցրագոյն պտուղներն են իմաստութեան :

\* \* \*

Յաջողութիւնը բարեկամներ ձեռք կը ձգէ , իսկ ձախորդութիւնը կը փորձէ դանոնք :

\* \* \*

Քիչ բարեկամ կայ մարդուս անձին եւ արժանեաց , բարեկամ շատ կայ մարդուս բաղդին եւ յաջողութեան :

\* \* \*

Նա որ յաճախ կը փոխէ իր բարեկամները չկրնար ունենալ ճշմարիտ բարեկամ մը :

\* \* \*

Լաւագոյն է մարդ խելացի թշնամի ունենայ քան թէ անխելք բարեկամ :

\* \* \*

Ով որ գործքով կրնայ եւ խօսքով միայն կը մխիթարէ , սրտանց չէ անոր բարեկամութիւնը :

\* \* \*

Փոխանակ կեղծաւոր բարեկամի երես տալու , լաւագոյն է իրաւախոհ ըլլալ անկեղծ թըշնամւոյն հետ :

\* \* \*

Բարեկամութիւնը հոգի մ'է , որ երկու մարմնոյ մէջ կը բնակի , և սիրտ մը որ երկու հոգւոյ մէջ կը հանգչի :

Կեղծ բարեկամը արեւու ժամացոյցի շուքին կը նմանի , երբ օդը պայծառ է կը տեսնուի , երբ ամպոտ է կը ծածկուի :

\* \* \*

Բարեկամներդ ինչ վիճակի մէջ ալ ըլլան — յաջող թէ ձախորդ — դուն միեւնոյն աչքով նայէ անոնց վրայ :

\* \* \*

Բարեկամաց պէտք է աւելի յաճախ այցելել իրենց դժբաղդութեան ժամանակ , քան թէ ի յաջողութեան :

\* \* \*

Ձեր բարեկամաց անունն ու համբաւը արատող շուտափոյթ լուրերուն հաւատալու մասին մի' լինիք փութկոտ :

\* \* \*

Բարեկամութիւնը արուեցաւ մեզ իբրեւ օգնական առաքինութեանց , եւ ոչ երբէք իբրեւ ընկեր մոլութեանց :

\* \* \*

Եթէ յայտնես ինձ թէ որոնց հետ կը տեսնուիս , կրնամ ըսել քեզ թէ ինչ կարգի մարդ ես դուն :

\* \* \*

Ով որ իր բարեկամին թշնամւոյն մտերմութիւն կը ցուցնէ , բարեկամը լքանելու մտադրութիւնը կը յայտնէ :



Բարեկամութիւն կապելու մէջ դժուարահաճ  
եղէք, բայց անգամ մը որ հաստատէք ամուր պա-  
հեցէք :

\* \* \*

Այն ատենը միայն կրնանք ըսել որ կ'ապ-  
րինք, երբ Աստուծոյ ծառայելով եւ բարեկամաց  
հետ կենցաղավարելով կ'անցընենք ժամանակնիս :

\* \* \*

Ամէնամեծ բարիքը, որ բարեկամ բարեկամի  
կրնայ ընել, հարկաւոր եւ դժուար ատեն իրեն  
խորհուրդ տալն է :

\* \* \*

Բարեկամութիւնը երկու անհատներու համար,  
պէտք է հիմնուած ըլլայ փոխադարձ ակնածանաց  
եւ յարգանքի վրայ :

\* \* \*

Մեր ամէնաբարի բարեկամը այն է, որ մեր  
պակասութիւնները երեսնուս կու տայ, եւ մեր  
ուղղութեան համար ճանապարհ կը ցուցնէ :

\* \* \*

Կեղծաւոր բարեկամը յոյժ մը սասկար է քան  
բացարձակ թշնամին : Բարեկամ ստանալու հա-  
մար երկար ընտրութիւն ընելու եմք :

\* \* \*

Ինչպէս որ աղբիւրի ջրոյն յարգը ծարաւու-  
թեան մէջ կը ճանչցուի, այնպէս ալ ճշմարիտ բարե-  
կամները՝ աղէտից եւ ձախորդութեան ժամանակ :

Մտերիմ բարեկամութիւնը ուրիշ բանի վրայ  
կեցած չէ բայց եթէ բարեկամներուն իրարու սրտեր-  
նին բանալու եւ մէկմէկու հետ հաղորդակցու-  
թիւն ունենալու վրայ :

\* \* \*

Ճշմարիտ, ուղղամիտ եւ իմաստուն բարե-  
կամը ծանրագին դանձ մ'է, մինչդեռ մոլի եւ ան-  
պիտան շողոքորթը անյագ եւ անտանելի ցեց է  
մեր բարելաւութեանց :

\* \* \*

Ապահով բարեկամ համարէ քեզ այն անկեղծ  
անձը որ թերութիւններդ կը յայտնէ քեզի, քան  
թէ զայն, որ կը դրուատէ ամէն ինչ որ կ'ընես :

\* \* \*

Եթէ ջանայինք մեր պակասութիւններն ուղ-  
ղել եւ ուրիշներուն պակասութեանց աչք գոցել,  
յայնժամ սէրն ու բարեկամութիւնը յաւիտենական  
կ'ըլլային :

\* \* \*

Երբոր բարեկամս իմ ցաւս կը զգայ եւ ինծի  
հետ կու լայ, սիրտս կը թեթեւայ, կարծես թէ  
ամէն բեռ իր վրայ կ'առնէ :

\* \* \*

Ճշմարիտ բարեկամներ կը սպասեն որ յաջո-  
ղութեան ատեն զիրենք կանչենք, իսկ ձախոր-  
դութեան ժամանակ առանց կանչուելու, իրենք  
իրենցմէ կուգան :



Ձեր բարեկամաց հետ ալ աչալուրջ եւ խոհական զգուշութեամբ վարուեցէք :

\* \* \*

Երկու հոգւոյ բարեկամութենէն ետ կեցեր եմ մէյմէկ պատճառաւ , վասն զի մէկը ոչ երբէք իր վրայ բան մը խօսած էր ինձի , միւսն ալ իմ վրաս երբէք բան մը չէր ըսած ինձ :

\* \* \*

Ազնիւ եւ բարեբարոյ մարդիկներու հետ միայն բարեկամ եղէ՛ք , եթէ կ'ուզէք յարգել ձեր պատիւը . որովհետեւ լաւ է բոլորովին մինակ մնալ , քան թէ վատերու ընկերութեան մէջ մտնալ :

\* \* \*

Անկեղծ բարեկամի մը յիշատակն իսկ այնչափ քաղցր է որ անոր մահէն յետոյ ալ կը տեւէ : Այսպիսի բարեկամութեան կապն անքակտելի է եւ արտաքին ձեռք մը երբէք չկրնար քակել այդ կապը :

\* \* \*

Այն օրը , յորում մեր բարեկամն ուրիշի մը կը գանդատի մեր պակասութեանց համար , փոխանակ զանոնք մեզի զգացնելու , այն օրէն սկսեալ այդ բարեկամը այլ եւս չսիրեր զմեզ :

\* \* \*

Ամէն բնաւորութենէ յոռի է ծաղրող մարդուն բնաւորութիւնը , որովհետեւ շատ թշնամի կ'ունենայ , իսկ բարեկամ եւ ոչ մի , մանաւանդ

թէ շատ անգամ անհաշտ թշնամի կը դարձնէ ընտիր բարեկամները :

\* \* \*

Շատ աւելի օգտակար է թշնամւոյ մը խիստ յանդիմանութիւնը , քան թէ ներող բարեկամի մը շողոքորթութիւնը . վասն զի առաջինը յաճախ ճշմարտութիւնը կ'ըսէ մեզի , երկրորդը՝ ոչ երբէք :

\* \* \*

Ամէն բանէ վեր է հաւատարիմ բարեկամը , որ ի բոլոր սրտէ իր ճշմարիտ բարեկամութիւնը կը յայտնէ աւելի ձախորդութեան մէջ : Այս պատճառաւ կ'ըսուի թէ «ով որ ճշմարիտ բարեկամ մը գտաւ անգին գանձ գտաւ» :

\* \* \*

Հոն է ճշմարիտ բարեկամութիւնը , ուր երկու այլ եւ այլ մարմիններու սիրտը մէկ է . եւ այն բարեկամութիւնը երեսանց է , ուր երկու մարմիններու հեռաւորութեան համեմատ սրտերնին ալ իրարմէ հեռու է :

\* \* \*

Ձգուչացէ՛ք փոփոխամիտ բարեկամէն , որ դիւրաշրջիկ ըլլալով , ըստ թելադրութեան իր անձնական օգտին եւ շահուն , երբեմն անկեղծ բարեկամ կը ձեւանայ եւ երբեմն թշնամեաց պարագլուխը կը դառնայ :

\* \* \*

Ճշմարիտ բարեկամ մը՝ ուրիշներէն տարբեր



սիրտ եւ բնաւորութիւն ունի : Ուրիշներ չտեսնելու կը զարնեն մեր պակասութիւնները , կամ նըշմարել կու տան չարասրտութեամբ : Բարեկամ մը դիտել կուտայ մեզ մեր պակասութիւնը՝ առանց զմեզ վիրաւորելու , եւ մարդկանց մէջ նա միայն գիտէ զանոնք ներել :

\* \* \*

Ընդ երկար ի միասին ընակող երկու բարեկամք գործոյ պատճառաւ հեռացած ի միմեանց , յետ ժամանակաց քաղաքի մը մէջ հանդիպեցան իրարու . սակայն ասոնցմէ եւ ոչ մին ճանչցաւ միւսը . զի մին ոսկի ակնոց էր դրած եւ միւսը առ վշտայն եւ տառապանաց , իր տեսութիւնն ալ կորսնցուցած :

\* \* \*

Բարեկամութեան գլխաւոր պարտքերէն եւ մեծագոյն բարերարութիւններէն մէկն է՝ իմացնել բարեկամին իր պակասութիւնը , որպէս զի զգուշանայ ու չընէ նորէն , ճանչցնել իրեն պակասութիւն ըլլալը , զոր ինքը չգիտեր , կամ թերեւս անձնասիրութեամբ առաքինութիւն կը համարի : Բայց անկեղծութիւնը որ պէտք է ըլլայ բարեկամութեան հոգին , շատ անգամ անոր կորստեանը պատճառ կ'ըլլայ :

\* \* \*

Մարդկային բարեկամութենէն աւելի անստոյգ եւ դիւրբարեկ բան չկայ . — զայն հաստատելու համար տարիներու պէտք ունինք , մինչդեռ զայն

կործանելու համար — երբեմն — մէկ վայրկեանն ալ բաւական է : Եւ երբ մէկ վայրկեանը զայն կործանէ , դար մը իսկ չկրնար զայն վերականգնել : — Պատուոյ եւ առաքինութեան վրայ հաստատուած բարեկամութիւնները ընդունակ չեն այնպիսի անպատեհութեանց :





ՓԼՈՒԽ ԻԶ.

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Առողջութեան առաջին պայմանը մաքրութիւնն է :

\* \* \*

Առողջութիւնը՝ պարկեշտութեան վկայագիրն է :

\* \* \*

Բարոյական օրէնքը առողջութեան հիմն է :

\* \* \*

Դուն պահէ առողջութիւնդ, և առողջութիւնդ պիտի պահէ զքեզ :

\* \* \*

Մտքի առողջութիւնը պահելու համար, մարմնոյ առողջութեան նախ խնամք տանելու է :

\* \* \*

Մարդ մը երբ իւր հիւանդութիւնը կամ ախտը կը ճանչնայ և կ'ըզգայ՝ կ'իստովին առողջացած կը համարուի :

\* \* \*

Առողջութիւնը մի մեծ գանձ է և մաքրութիւնը՝ հիւանդութեանց դէմ պահպանողական զօրութիւն մը :

Միայնութիւն ու ձանձրութիւն երկու որդեր են որ ամէն բանէ աւելի կը մաշեցնեն մեր կեանքն ու առողջութիւնը :

\* \* \*

Ողջախոհութիւնը ինչպէս որ մաքուր և անարատ վարուց մայրն, այնպէս ալ անցաւ և անտրտում առողջութեան պատճառն է :

\* \* \*

Ինչպէս որ առողջութիւնը ժուժկալութեան ետեւէն կ'երթայ, անանկ ալ հիւանդութիւնը որկրամոլութեան կը հետեւի :

\* \* \*

Ամէն խելացի մարդ, որ իւր առողջութեան արժէքը գիտէ, պարտաւոր է հիւանդութիւններէ զերծ մնալու պայմանները գիտնալ :

\* \* \*

Առողջութեան և երկարակեցութեան դադարները ստամոքսին և կոշիկին մէջն է. — առաջինը պէտք է քիչ մաշեցնել և երկրորդը շատ :

\* \* \*

Շատ աւելի աղէկ, դիւրին և աժան է առողջութիւնը պահելու համար դեղ առնելը, քան թէ հիւանդութիւնը առողջացնելու համար :

\* \* \*

Մարդ մը առանց առողջութեան չկրնար եր-



ջանիկ ըլլալ. — առողջ չէ այն մարդը որուն ցանկալի կը թուին մլասակար բաները, լաւագոյն բաներուն պէս :

\* \* \*

Իմաստուն և անշահախնդիր բժիշկ մը կ'ըսէր իւր հիւանդներուն. — «բարեխառն կեանք վարեցէ՛ք, և երբէք ինձ դիմելու պէտք չպիտի ունենաք : »

\* \* \*

Դեղն ի՞նչ է. — գլխաւոր դեղը՝ առողջապահական պատուէրներու ճշմարիտ գործադրութիւնն է : Ի՞նչ հարկ կայ ստամոքսը լեցնել կարգ մը թունաւոր և յաճախ մլասակար դեղերով :

\* \* \*

Մարմնոյ շարժունութեան պէտքը ա՛յնչափ կարեւոր զգացում մ'է, որչափ քաղցն ու ծարաւը եթէ այս պէտքը գոհացում չունենայ, կը ծնի անհանգստութիւն, որուն անմիջական արդիւնքն է գրգռումն ու ջղայնութիւն. . . . Շարժումով մարմնոյն բոլոր մասնիկները կը վերածնին, իսկ անշարժութեամբ կը վատթարանան ու կը հիւանդանան : Անշարժութիւնը տանջանք է. վախնանք և զգուշանանք ուրիմն նստուկ և անշարժ կեանքէ :



ԳԼՈՒԽ ԻԷ.

ՄԵՂՔ ԵՒ ՄՈՒՈՒԹԻՒՆ.

Ով որ շատ մոլութիւններ ունի, շատ տէրեր ունի :

\* \* \*

Գինին այնքան մարդ խղճած է, որքան ծովը չէ ընկղմած :

\* \* \*

Մոլութեան ուրիշ կերպով չենք կրնար յաղթել, բայց միայն անկէ փախչելով :

\* \* \*

Տղայոց մոլութեան մէջ ինչալուն մեծ և գլխաւոր պատճառը ծնողաց անհոգութիւնն է :

\* \* \*

Մոլութեան համար ներումը, առաքինութեան դէմ դաւաճանութիւն է :

\* \* \*

Աստուծոյ ամէն բան տեսնելուն հաւատացող մարդը ոչ ծածուկ և ոչ հրապարակաւ կրնայ մեղանչել :

\* \* \*

Փոքր մեղքի մը տեղի տալը, կը պատրաստէ զմեզ զիջանիլ մեծամեծներուն ալ :



Միմիայն ապահով ճամբայ մեղքէն ազատ  
ըլլալու մեղաց սկզբան դէմ դնելն է :

\*  
\*  
\*

Մուլութեանց դէմ մաքառելը ամէնադժուար  
պայքարն է . մուլութեանց յաղթելը՝ ամէնագեղե-  
ցիկ յաղթութիւնն է :

\*  
\*  
\*

Ձգուիլ պէտք է մեղքէն, անիծել՝ անոր ամէն  
հրապոյրներն և հոգւով ծարաւիլ սրբութեան :

\*  
\*  
\*

Սոսկանք մեր բարձրագոյն բնութիւնը մեր  
ստորնագոյն բնութեան հպատակեցնելու անքա-  
ւելի մեղքէն :

\*  
\*  
\*

Չարագործաց գթութիւն ընելը , հասարակաց  
բարւոյն վնասել և առ բարեգործս անգթութիւն  
է : Մուլութիւնը չպատժել , զայն սիրել կը նշանակէ :

\*  
\*  
\*

Մարդիկ միշտ ինքզինքնին կը խաբեն , իրենց  
ընկերին վրայ միայն տեսնելով այն մուլութիւնը ,  
որով իրենք ալ վարակուած են :

\*  
\*  
\*

Առաքինութեան դիմակին տակ սոսկալի մո-  
լութիւններ կը գործուին , գառնուկներու զգես-  
տին տակ գայլեր կան պահուած և ծաղիկներուն  
մէջ օձեր :

Մուլութիւնը կը չլացնէ մեր միտքը և կը խան-  
գարէ մեր խորհուրդները , և խիղճը մեր յանցա-  
ւորութեան պատճառաւ տանջուելով՝ չկրնար խո-  
հական հանճարով դործել :

\*  
\*  
\*

Մարդէ մը չկրնար պահանջուիլ , որ յանցանք  
չգործէ երբէք . բայց կրնայ պահանջուիլ որ փոր-  
ձառութիւններէ օգտուի , նոր մուլութեանց առաջին  
առնելու համար :

\*  
\*  
\*

Տղայութեան ժամանակ ստացուած չար մո-  
լութիւնները կը նմանին պզտիկ ծառի մը կեղեւին  
վրայ փորագրուած գրերուն , որոնք ծառին հետ  
միատեղ կը մեծնան և իբր թէ անոր մէկ մասը կը  
լինին :

\*  
\*  
\*

Ուրիշ ամէն վնասներու ճար կ'ըլլայ , բայց  
երբ որ մարդուս բանականութիւնը մէյ մը խաւարի  
մուլութիւններով , խիստ դժուար է ճար ընելը , ոչ  
դեղով և ոչ խրատով կը բժշկուի :

\*  
\*  
\*

Եթէ անգամ մը թողունք սանձը մեր մոլի  
միտմանց , չենք կրնար այլ եւս զսպել զանոնք և  
վարել ըստ կամաց , դիւրին է չար գործի մը չսկսիլ ,  
քան թէ սկսելէ վերջ ետ կենալ :

\*  
\*  
\*

Փրկութիւնը ոչ թէ աշխարհէն հրաժարելուն՝



այլ մեղքէն հրաժարելուն մէջն է : Տեղափոխութիւնը չէ որ մարդս կ'արդարացնէ , այլ գործին փոփոխութիւնն է որ զմոլին առաքինի կ'ընէ :

\* \* \*

Չարերը խիստ յաջողակ են , իրենց մեղքերը ծածկելու համար , իրաւունք փաստաբանել այնպիսի ճարտարութեամբ , որով շատ անգամ բարիներն անգամ կը խաբուին անոնց դիւթիչ լեզուներէն :

\* \* \*

Հեշտութիւնները , ախորժելի ըլլալով մեր մարմնոյն , կը խաբեն զմեզ որ մեղի հետ պիտի կենան . բայց կ'անցնին կ'երթան , և կը թողուն հիւանդութիւն ու տառապանք որոնք հոգինիս կը մաշեցնեն :

\* \* \*

Մեղքէ աւելի կարեւոր է հաւատոյ , արդարութեան և փրկութեան մասին խօսիլը . և աւելի կարեւորն է Աստուծոյ այնքան մօտ պրկելը , որ մեղքը մեղի ի սրտէ օտար , ատելի և զզուելի լինի :

\* \* \*

Մոլութիւնը սոսկալի կերպարանքով ճիւղաւ մ'է . ատելի ըլլալու համար բաւական է որ լոկ տեսնուի : Բայց եթէ յաճախ տեսնուի իր ընտանի դէմքով , նախ կը հանդուրժենք , ապա կ'արգահատինք և յետոյ զայն կը գրկենք :

\* \* \*

Մոլութեան ախտերը լիրբ են . եթէ առաջին

անգամ չպատժենք , յետ այնու անկարելի է զանոնք զգաստութեան բերել . վասն զի ունակալայէն յետոյ ո՛չ կը պատկառին և ո՛չ կը վախնան :

\* \* \*

Աշխարհային կամ մարմնաւոր մոլութիւններ կը փորձեն զմեզ , քաղցը , ծարաւը կը գրգռեն մեղապարտ կիրքեր , որոնց եթէ անձնատուր ըլլանք , ցոյց տուած չենք ըլլար մեծութիւնը Յիսուսի հոգիին , որ մեր ներսիդին ալ պէտք է գործէ :

\* \* \*

Չար և ախտաւոր մարդիկ կ'ըսեն թէ՛ խիստ զուարճալի է իրենց զբօսանաց ու հեշտութեանց մէջ ապրիլը . բայց ես հազար փաստերով համոզուած եմ որ իրենց մոլութիւններովը զուարճացողներէն մէկը չէ եղած որ ետքը անոնցմէ մեծագոյն վիշտ ունեցած չըլլայ :

\* \* \*

Մոլութիւնը զմեզ կը հրապուրէ այնքան նենգաւոր ճարտարամտութեամբ , յինքն կը ձգէ զմեզ այնքան հրապոյրներով , և այնքան ուղիներէ կուգայ կը հասնի մեզ որ անպատճառ անհուն կանխատեսութիւն , անսահման զօրութիւն , և հանապազօրեայ նեցուկ մը պէտք է մեզ , անոր որոգայթներէն զերծ մնալու համար :

\* \* \*

Ուզեցի կենացս մէջ աշխարհիս ամէն մոլութիւնները փորձել , հասկնալու համար թէ արդեօք



մարդս անոնցմով կրնա՞յ դո՞ ըլլալ . բայց տեսայ որ որչափ ուտեմ, աւելի կ'անօթեանամ, որչափ խմեմ աւելի կը ծարաւնամ, որչափ զուարճանամ աւելի զուարճանալ կ'ուզեմ, որչափ հարստանամ աւելի կ'ազահանամ, որչափ փնտռեմ աւելի քիչ կ'երեւնայ գտածս :

\* \* \*

Ով որ տղայութեան ժամանակ իւր չար կիրքերը չաշխատիր սանձելու, որոնք այն ատեն կայծերու կը նմանին որ կարելի է դիւրաւ մարել, կամ առիւծի կորիւններու սրոնք դիւրութեամբ կը նուաճին և մինչև իսկ մարդ կրնայ զանոնք իրեն ընտանեցնել, և թող կուտայ դժբաղդաբար որ սրտերու մէջ մնալով՝ ոյժ առնուն և մեծնան, գէշ հրդեհ մը կը ձգեն սրտերու մէջ, և քիչ ժամանակէն կատաղած առիւծներու նման կը պատառեն զայն :

\* \* \*

Մոլիները ջնջել, մոլութիւնը բառնալ չհամարուիր, այլ մոլութիւնները իմաստութեան հատու սրով արմատախիլ ընելու է մարդկանց սրտի մէջէն : Զեղծումները ջնջել բաւական չէ, այլ մարդկանց բարքն ու բնաւորութիւնը դէպ ի լաւն առաջնորդելու է : Զեղծումները չեն մեռնիր . երբ հալածուին՝ առժամանակեայ կերպով կրից մոխրոյն տակ ծածկուած կը մնան, յետոյ աւելի զօրաւոր կերպով երեւան կուզան և զօրեղապէս կը ներգործեն :

\* \* \*

Մեղքը ձգողութիւն մ'է և խիստ դժուարին է անկէ զերծ մնալ, բայց կարելի եղածին չափ քիչ մեղանչելն ու անկէ զգուշանալը արժանապատուութեան վրայ հաստատուած պարտականութիւն մ'է : Երբէք չմեղանչել հրեշտակային երազ մը, սուրբ լինելը բացառութիւն մը, իսկ արդար լինելը մարդու մը համար ձգմարիտ և անխուսափելի օրէնք մ'է : Մարդիկ թէ՛ թափառին և թէ՛ մեղանչեն պէտք է որ ետ դառնան և արդարութեան օրէնքը յարգեն :





ԶՈՒՍՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՈՒՍՐՃՈՒԹԻՒՆ

Բարի մարդուն դէմքին վրայ զուարթութիւն կը փայլի :

\* \*

Ձեր զուարճութիւնները արիական թող ըլլան բայց անարատ :

\* \*

Չուարթաբարոյ մարդը կը պահէ առողջութիւնը եւ կ'ուրախացնէ բարեկամները :

\* \*

Մառայնք մարդկութեան, ճշմարիտ ու զուարթ սիրով մը լցուած ամէնուն համար :

\* \*

Ձանք ըրէք, որ ձեր բարքն ու բնաւորութիւնը միշտ զուարթ ըլլայ, եւ ձեր վարմունքը միշտ անոյշ եւ հանդարտ :

\* \*

Դժգոհութեան զգացմունք կը կարճեցնեն մարդկային կեանքը, ընդհակառակն ուրախ եւ զուարթսիրտը՝ օգտակար դեղի պէս կարեւոր է :

Չուարթութիւն ամէնէն աւելի դիւրահաղորդ կ'ընէ զմեզ եւ տրամութիւնն է միայն, որ մեր մէջ, մեր առանձնութեան մէջ, ամփոփուելու կը մղէ զմեզ :

\* \*

Ձեր երկիւղը յաւիտեան փարատելու միակ կերպն է լոկ խօսական երեւոյթ համարել զայն անիրական, անգոյ և ողջատութեամբ և զուարթութեամբ արհամարհել զայն քաջաբար :

\* \*

Չուարթութիւնը հոգւոյն առողջութիւնն է, ինչպէս որ տխրութիւնը՝ անոր թոյնը : Հոգւոյն զուարթութիւնը մարմինը կը դալարեցնէ, իսկ սրտին տրամութիւնը ոսկորներն անգամ կը ցամաքեցնէ :

\* \*

Թէ արեւ ծագի, թէ անձրեւ տեղայ, ուրախ զուարթ դէմք մը ցոլցնէք ձեր ընկերներուն :

\* \*

Աշխատեցէ՛ք որ մեկամաղձոտ բնաւորութիւն մը չտիրէ ձեր վրան, մինչև իսկ շատ ձախորդութիւններու մէջ ալ ըլլաք, ձեր բանին գործին մէջ միշտ եղանակ մը բռնեցէք զուարթ եւ ախորժելի :

\* \*

Յիրաւի բազմաւոր են այն տղաքները որ իրենց մանկութեան ժամանակ կը սովորին իրենք զիրենք զուարթ պահել : Որչափ կանուխ սովորին այս դասը, այնչափ աղէկ է եւ օգտակար :



Որպէս զի զուարթութիւնը անարատ ըլլայ եւ հաստատուն , պէտք է որ մարդուս սիրտը զոհ ըլլայ միշտ , եւ խղճմտանքը հանդարտ : Բարի վարքն , է մայր ուրախութեան եւ ուրախութիւնն՝ մայր առողջութեան :

\* \* \*

Շատեր զուարթամիտ ըլլալ ուզելով՝ թեթեւամիտ եղած են : Առանց տխուր ըլլալու լուրջ ըլլալ , առանց թեթեւ ըլլալու զուարթ ըլլալ , բաղձալի եւ հաղուազիւտ բան է :

\* \* \*

Ճգնաւորաց դարն անցած է եւ արդի Քրիստոնէութեան ոգին եւ նպատակն է մարմինը որչափ կարելի է զուարթ պահել այս աշխարհի մէջ եւ միեւնոյն ժամանակ հոգին պատրաստել հանդերձեալին համար :

\* \* \*

Մի՛ լինիք արհամարհող եւ սոնդացող , այլ մարդասէր եւ հեղահամբոյր , մի՛ լինիք յարաբերութենէ քաշուող , աչքն ու քիթը կախ , խոժոռադէմ եւ ստեցող , այլ ամէնուն առջեւ զուարթադէմ , ամէն դիտողի օգնելու պատրաստակամ :

\* \* \*

Կրթեցէք ձեր խելքը , բանեցուցէք ձեր հոգւոյ կարողութիւնները , ձեր միտքը առաքինութեան վարժեցուցէք եւ միշտ սիրահար եղէք բարեգործութիւններ ընելու . այսպէսով ձեր սիրտը պիտի

զուարճանայ եւ դուք միշտ ուրախութեան մէջ պիտի ըլլաք :

\* \* \*

Չուարճութեանց հրապոյրն՝ անմատչելի , դժխեմ եւ դաժան բարքերէ կը զգուշացնէ զմեզ , ու փոխադարձ վատահոլութեան , անկեղծիկ գորովանքի անուշ վայելմամբ . սիրելի կ'ընծայէ զմեզ իրարու որ ապրելու ամէնէն օգտակար միջոցն ու պայմանն է :

\* \* \*

Այն որ իրեն եւ ուրիշներու կ'ըսէ թէ հիւանդ է , իրօք հիւանդ է . բայց այն որ այսպէս չընդունիր թէ հիւանդ է , եւ զուարթութեամբ կը շարժի որպէս թէ առողջ ըլլար , կը յողթէ շատ տկարութիւններու որոնք կրնային ծանրանալ եթէ ինք տեղի տար անոնց : Չուարթութիւնը առողջութեան նախնական դաղտնիքն է . առողջ կը պահէ մարդը : Յաւտենական երիտասարդութեան դաղտնիքներէն մին է զուարթութիւնը :

\* \* \*

Ով որ զուարթ ոգի մը կը կրէ՝ օրհնութիւն կը տանի , ուր որ երթայ : Իրաւունք չունիմք մեր զանգատներով եւ տրտունջներով մարդոց մէջ երթալու :

\* \* \*

Մեր ընկերսիրութեան պարտքին մէկ մասն է միշտ մեր լաւագոյն բաները տանիլ մեր ընկերներուն . զուարթութիւն , սէր եւ խնդութիւն , փոխանակ տիրութեան , դաժանութեան եւ վհա-



տութեան : Մեզի պատուիրուած է լոյս ըլլալ աշխարհի , այնպէս փայլեցնել մեր լոյսը մարդոց առջեւ , որ անոնք տեսնեն մեր բարի գործերը և փառաւորեն մեր Հայրը որ երկինքն է : Դժգոհութիւն , գանգատ և տխրութիւն լոյս չունին : Եւ մեր կեանքերուն կոչումը , այն որ Աստուծմէ սահմանուած է երբէք չիրագործուիր , եթէ թոյլ տանք որ տխրութիւն պատէ մեզ :

\* \* \*

Այն որ կը յաջողի զուարթութիւն ազդել իր նմաններուն ու ծիծաղեցնել զանոնք , կեանքն ու աշխարհը հաճելի կ'ընծայէ զինքը լսողներուն : Զուարթութիւնը աւելցնելու կարողութիւնը ունեցողը՝ արժանի համարուելու է մարդկութեան բարերարներուն կարգը դասուելու : Չկայ բան մը որ երկու անձի մէջ այնքան զօրաւոր առիթ մը ըլլայ համակրանքի՝ որքան կեանքի զուարթ կողմերը մէկտեղ գնահատած , այսինքն միասին ծիծաղած ըլլալը : Պատուոյ եւ համեստութեան պայմաններուն մէջ տեղի ունեցող ծիծաղը կը նմանի գթութեան , որ օրհնութիւն մ'է ոչ միայն տուողին այլ և ընդունողին համար ա'լ . կեանքի նուազներուն համեմատ թրթռացող սիրտ մը , եթէ խորտակի , ծիծաղը կրնայ վերանորոգել զայն իր շինիչ ու կազդուրիչ ազդեցութիւնով :



ՔԼՈՒՆ ԻԹ.

—

ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՂԾԱՆՈՐՈՒԹԻՒՆ.

Եթէ մենք զմեզ չչողօքորթեմք , այլոց շողօքորթութիւնները չեն կարող զմեզ վնասել :

\* \* \*

Անմեղութիւնը թող ցոլայ ձեր աչքերուն մէջ և անկեղծութիւնը թրթռայ ձեր շրթունքներուն վրայ :

\* \* \*

Կեղծաւորները , մեղուներու նման , մեղրունին իրենց շրթունքներուն վրայ և թաքուն խայթոց :

\* \* \*

Կեղծաւորը մերթ դառնուկ հեզ և մերթ գայլ գիշատիչ առ երեսս կը չողօքորթէ և ի թիկանց կը պատառէ :

\* \* \*

Մարդոց հաճելի երեւնալու համար երբ կեղծաւորութեան կ'ապաւինիք , գիտցած ըլլաք որ ապագային խայտառակութեան առջեւ կը ծռի ձեր գլուխը :

\* \* \*

Վեհանձն և պատուասէր անձանց համար.



չատ անվայել բան է կեղծաւորութիւնը , քանզի առաքինութեան պատրուակ , սրբութեան ցեց եւ ստութեան խառնուրդ է :

\* \* \*

Այն որ գգուելով սիրելով կը խայթէ , շատ աւելի խոր կը խոցէ քան այն , որ հայհոյելով , սպառնալով կը հարուածէ :

\* \* \*

Կեղծաւորութիւնն ամօթալի մոլութիւն մ'է : Մի' նուաստանաք երբէք ըսելու ինչ որ չէք մտածեր , և մի' ընէք երբէք գործ մը , որ սրտերնիդ չընդունիր :

\* \* \*

Պօսքի եւ գրութեան մէջ՝ ուղիղ բացատրութեան հիմը , եւ լաւ , ընտիր ու շնորհալի շարագրութեան էական պայմանն է անկեղծութիւնը :

\* \* \*

Ողորմելի մա'րդ , այն ջանքը , որ ի գործ կը դնես քու ներքին մարդդ ծածկելու համար , շատ և շատ աւելի է քան այն ջանքը , որ պէտք էիր ունենալ , իսկապէս ըլլալու համար այն , ինչ որ կ'ուզես երեւնալ :

\* \* \*

Ձանացէ՛ք այնպէս անկեղծօրէն վարուիլ և այնպէս խորհիլ , որպէս թէ բոլոր աշխարհք կը դիտէ ձեր վարքը և կը կարդայ ձեր խորհուրդները , քանզի ինչ օգուտ գաղտնի պահել ընկերէն

ինչ որ արդէն բացայայտ է սրտագէտ Սասունժոյ :

\* \* \*

Շողոքորթները կ'օգտուին հարուստներու քով , ինչպէս կ'օգտուին բժիշկները երեւակայական հիւանդներու մօտ : — Ասոնք կը վճարեն իրենց չունեցած հիւանդութեանց համար , իսկա նոնք այնպիսի առաքինութեանց համար , զորս պարտաւոր էին ունենալ :

\* \* \*

Անմեղութիւնը կը ներփակի նկարագրի կատարելութեան գաղափարին մէջ , Այսինքն «կատարեալ» պիտի չըլլանք , մինչեւ որ ա'լ չմեղանչենք , մինչեւ որ ա'լ ծուռ գործերը չընենք բարկացոտ , պիղծ եւ ծանր խօսքեր չխօսինք , մինչեւ որ մեր խորհուրդներն ու երեւակայութիւնները չմաքրուին եւ չսրբուին , մինչեւ որ ա'լ նախանձ , հպարտութիւն , կեղծաւորութիւն եւ կեղծիք չը մնան մեր մէջ եւ փառասիրական ձգտումներու կեդրոն չըլլայ մեր անձը :

\* \* \*

Կան մարդիկ — եւ չեն սակաւ այսպիսիք , — որոնք խօսակցութեան մէջ յայտնապէս , բայց ակամայ կ'իմայնեն իրենց խօսակցին թէ իրենց խօսքերն տարբեր եւ հակառակ են իրենց մտքին ու համոզման : Սակայն ինչ հարկ այսպիսի կեղծ ու պատիր ձեւերու եւ շինծու խօսքերու : Անկեղծ մարդը պէտք է մտածէ միշտ թէ իր խօսակիցը կարողութիւն ունի իրեն ոգին թափանցելու եւ



իր ներքին մարդն ուսումնասիրելու : Հետեւաբար  
լաւագոյն է միշտ եւ օգտակար՝ մեր համոզում-  
ները սրտայայտել անկեղծօրէն եւ ջանալ որ  
միշտ հաշտ ընթանայ մեր խօսակցութիւնը , մեր  
մտքին եւ մեր համոզման հետ :

\*  
\* \*

Հետաքրքրական բան պիտի ըլլար եւ շատ  
զարմանալի եթէ յանկարձ Յիսուս երեւէր մեր  
մէջ եւ ընտրութիւն ընէր իր ճշմարիտ հետեւո-  
ղաց : Ինչ գայթակղութիւն , քանի՛ Աստուծոյ  
տաճարէն դուրս չելնող ու անոր պատկերներուն  
առջեւ ամէն օր մոմ վառող մարդիկ , քանի՛ Յի-  
սուսի անունը բերնէ չձգող ու Աւետարանի տու-  
ները բերնուց գիտցող անձինք , քանի՛ քանի՛  
կրօնի վարդապետք եւ եկեղեցւոյ իշխանք դուրս  
պիտի մնային այն ճշմարիտ հաւատացելոց խըմ-  
բէն , զոր Նա պիտի կազմէր : «Սակայն , ո՛վ  
Տէր , ո՛չ ապաքէն քու սուրբ տաճարիդ պատերն  
երկիւղածութեամբ կը համբուրէի ամէն օր եւ  
նուիրական սալաքարերու փոշւոյն խոնարհու-  
թեամբ կը կցէի ճակատս . . . » : Ի բաց , պիտի  
գոչէր Յիսուս այն զայրոյթով՝ որով կը գոռարնա  
Փարիսեցւոց դէմ , ի բաց , կեղծաւոր , տաճարին  
մէջ կը խոնարհէիր առջեւս , իսկ դուրսը , աղքա-  
տին , այրիին եւ որբին անձին վրայ ոտնակոխ  
կ'ընէիր զիս . . . ի բաց :



Պ Ա Ռ Ն Ծ Ա .

**Ե Ր Ի Տ Ա Ս Ս Ե Ր Գ Ո Ի Թ Ի Ի Ն**

Առաքինի երիտասարդութենէ՛ աւելի գեղե-  
ցիկ բան չկայ աշխարհիս վրայ :

\*  
\* \*

Անգործութիւնը եւ ծուլութիւնը երիտասար-  
դին ժանգն է , եւ զայն կը մաշեցնէ :

\*  
\* \*

Անգործ երիտասարդութեան վերջը կարօտ  
ծերութիւն է :

\*  
\* \*

Սրտի մաքրութիւնը , երիտասարդութեան  
պարտէզին ամէնէն գեղեցիկ ծաղիկն է :

\*  
\* \*

Հարուստ եւ տգէտ երիտասարդն ոսկիէ շին-  
ուած շարժական արձան է :

\*  
\* \*

Ժրութիւն , աշխատութիւն եւ հնազանդու-  
թիւն՝ երիտասարդաց գլխաւոր պարտականու-  
թիւններն են :

\*  
\* \*

Պարնան առաջին օրերն նուազ շնորհալից են ,



քան զառաքինութիւնս զեռահաս երիտասարդին :

\* \* \*

Երանի՛ր այն տղայոց եւ երիտասարդաց , որք իրենց մատաղ հասակէն կը սկսին առաքինական սովորութեանց հետեւիլ :

\* \* \*

Հարստութիւնը շատ անգամ աղետալի կը դառնայ շատերու , եւ մանաւանդ երիտասարդ եւ անփորձ ձեռքերու մէջ :

\* \* \*

Իմաստուն երիտասարդը խորարմատ ծառի կը նմանի , զոր թէպէտեւ կրնան շարժել փորձութեանց հողմերը , բայց չեն կրնար տապալել :

\* \* \*

Ահաւասիկ երեք չքնաղ զարդք երիտասարդութեանց . գրուի՛ս՝ որ գիտէ խորհիլ , յեզու՝ որ գիտէ ի չափու գալ , դիմի՛ որ գիտէ շիկնիլ :

\* \* \*

Առաքինի երիտասարդաց պարտքն է յարգել իմաստուն ծերերը , ինչպէս որ իմաստուն ծերերուն ալ պարտքն է խրատել անփորձ երիտասարդները :

\* \* \*

Մարդու մը բովանդակ կեանքը , ինչ որ ալ ըլլայ անոր ընկերային կամ նիւթական վիճակը ,

կախում ունի այն կերպէն որով ապրած է իր երիտասարդութեան ժամանակ :

\* \* \*

Այն երիտասարդը , որ իր ստացուածքը եւ ինքզինքը կանոնաւորապէս կը նուիրէ Աստուծոյ ծառայութեան , այս կեանքին մէջ հարիւրապատիկ կը ստանայ աւելի բարձր նկարագիր եւ աւելի զօրութիւն ձեռք կը բերէ :

\* \* \*

Քու աչքիդ պէս գուրգուրայ քու պատիւիդ վրայ , ո՛վ երիտասարդ : Քու շուրջդ բարի համբաւի մը կազմուելուն հոգ տար քու հոգւոյդ չափ :

\* \* \*

Հիփեսոսեայ (կրակի Աստուած եւ Սրամազդայ դարբինը՝ ըստ դիցաբանից) դարբնոցը , Յոնա եւ Վեսուլ հրաբուխները այնչափ աւելի բոցով չեն բռնկիր որչափ այն երիտասարդներ , որք կը յղփանան գէր եւ պարարտ ուտելիքներով եւ կը զմայլին ոգելից ըմպելիքներով :

\* \* \*

Երանի՛ր այն երիտասարդներուն , որք գիտեն դրամի եւ առողջութեան յարգն եւ չլատնելով յուժմպետս , կը զործածեն զանոնք իրենց եւ իրեններուն բարւոյն եւ զարգացման . բան մը որ ա՛լ աւելի երջանիկ կ'ընէ զիրենք քան շուայտութեան խարուսիկ եւ սպաննիչ վայրկեանները եւ



զերծ կը մնան զղջումի ու խայթի զարհուրելի վայրկեաններէն :

\* \* \*

Մեր երիտասարդները , կեանքի ունէ ասպարէզի մէջ մտնելէ առաջ , լրջօրէն պէտք է խորհրդածեն անոր վրայ , իրենք իրենց մէջ ամփոփուած քննեն իրենց հակամիտութիւնները , յատկութիւնները , հասկնալու համար թէ ի վիճակի՞ են գոհացնելու այդ ասպարէզին բոլոր պահանջումները : Շատ անգամ մեր նորահասներուն այս կամ այն գործին մէջ չյաջողելուն գլխաւոր պատճառն այս կէտին նախապէս ուշադրութիւն ընծայած չըլլալնին է :

\* \* \*

Ի՞նչ գեղեցիկ են կեանքերն անոնց , որոնց սրտերուն մէջ Աստուծոյ բարի սերմը ցանուած է իրենց տղայութեան ժամանակ , եւ որոնք իրենց բոլոր օրերուն մէջ Աստուծոյ ծառայութեան կը նուիրեն իրենք զիրենք : Ի՞նչ երանելի բան է ստեղծիչը յիշել երիտասարդութեան օրերուն մէջ երբ դեռ չար օրերը չեն հասած , եւ այսպէս Աստուծոյ նուիրել երիտասարդութեան թարմութիւնը , փոխանակ սպասելու մինչեւ որ մեղքը , ցաւը եւ հիւանդութիւնը իրենց աւերիչ գործը կատարած ըլլան :

\* \* \*

Երիտասարդներ , խոյս տուէք յոռի օրինակի ազդեցութիւններէն , եւ եթէ երբէք ամօթապարտ փափաքներ յարձակին ձեր վրայ , ձեր գի-

տակցութենէն ու ձեր կամքէն պիտի ստանաք անոնց դէմ մաքառելու զօրութիւնը : Պէտք չէ գոհացում տալ անխտիր ամէն տեսակ փափաքներու . այլ անոնց դէմ պայքար մղելով կարելի է կորով ստանալ , ձեր բարոյական մակարդակը բարձրացնել , ինքնայարգութեան արժանանալու հրճուանքը զգալ ու մարդ ըլլալու նախապատրաստուիլ : Չկան աւելի օգտակար եւ աւելի գեղեցիկ յաղթանակներ՝ քան անոնք զորս մեր անձին վրայ կը տանինք , ասոնց կը պարտինք մեր կարողութեան ու մեր արժանապատուութեան մասին մեր ներքին զգացումը : Կը հաւաստեմ զձեզ թէ այդ գոհունակութեան հետ չկրնար համեմատիլ ոչ մէկը այն հաճոյքներէն , որոնցմէ հրաժարած պիտի ըլլաք կանխառ :

\* \* \*

Անփորձ պատանիք , միշտ օգտակար սեպեցէ՛ք ձերոց քով գտնուիլ , բան հարցնել , լսել եւ հնազանդիլ , վասն զի ամէնէն մեծ վարժապետը ժամանակն է :





ԳԼՈՒԽ ԼԱ.

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ

Երջանիկ է այն, որ ունի ճշմարիտ բարեկամներ :

\* \* \*

Մարդ մը երջանիկ ընել՝ երջանիկ ըլլալու արժանանալ է :

\* \* \*

Մեծ հոգիները միայն գիտեն թէ որչափ երջանիկ է մարդ, երբ բարի լինի :

\* \* \*

Հանդարտ սրտով խրճիթի մէջ ապրողը, մտատանջ մեծատունէ աւելի երջանիկ է :

\* \* \*

Երջանկութիւնը մարդուս խելք կու տայ, դժբաղդութիւնը եթէ քիչ մ'ալ խելք ունիս, կ'առնէ կը տանի :

\* \* \*

Մարդուս երջանկութիւնը կամ դժբաղդութիւնը միայն իւր բաղդէն կախում չունի, այլ նաեւ ընաւորութենէն :

\* \* \*

Քանի՛ քանի՛ անգամներ երջանկութեան աղ-

բիւր եւ պատճառ կը լինի այն բանը, զոր մենք դժբաղդութիւն կը համարինք :

\* \* \*

Մի՛ խօսիք ձեր առողջութեանը վրայ հիւանդի մը առջեւ, ոչ ալ ձեր երջանկութեան վրայ թշուառի մը առջեւ :

\* \* \*

Ոչ մէկ երջանկութիւն անվտանգ է եւ տեւաւիան, եթէ իրեն իբր խարխիս չունի կեանքի անսրատութիւնը :

\* \* \*

Որպիսի մեծ բերկրալից ուրախութիւն և երջանկութիւն է մարդու մը համար տեսնել այն մարդոց երջանկութիւնը, որոց ինքը պատճառ եղած է :

\* \* \*

Երջանիկ ըլլալու համար պէտք է ապրիլ առաքինութեան և անմեղութեան մէջ, և խորշիկ ամէն տեսակ մեղքերէ և մոլութիւններէ :

\* \* \*

Աստուած իմ, իր յոյսն ու հաւատքը Քու վրադ դնողը երբէք ապերջանիկ չըլլար, իր նեղ օրերուն մէջ քու օժանդակութիւնդ կը վայելէ :

\* \* \*

Թէ որ այնչափ երջանիկ չես որչափ որ կը բաղձաս, պէտք է նորէն գո՛հ ըլլաս, որ այնչափ ապերջանիկ և թշուառ ալ չես՝ որչափ որ գուցէ արժանի էիր :



Երջանիկ ըլլալու էական պայմաններն են առողջ մարմին, գոհ և մաքուր սիրտ, անվրդով և ազատ միտք և խաղաղ խիղճ ունենալ, որք արդէն կապուած են միմեանց :

\* \* \*

Երջանիկ մարդը այն չէ որ բանի մը կարօտութիւն չունենար, այլ այն որ առանց ուզածը ունենալու ալ կրնայ ապրիլ և կարօտութիւն չքաշեր :

\* \* \*

Երջանկութիւնը խոյս կուտայ զայն փնտռող ամէն մարդէ, և երկնից մեղմ ցօղին նման կ'իջնէ միայն անոր վրայ, որ կ'աշխատի ուրիշներու ծառայել և բարեգործել :

\* \* \*

Ամէն պարագայի մէջ հանդարտութիւնը պահելը մեծ գիտութիւն մ'է. — և ահաւասիկ այս գիտութեան կը վերաբերի բոլոր մեր կենաց երջանկութիւնը :

\* \* \*

Ո՛վ տէր, անմեղ սիրտը թէեւ անապատին մէջ ըլլայ, արքայութեան մէջ կը կարծէ զինքը, և զքեզ սիրող ու միշտ իր սրտին մէջ ունեցող անձը՝ փորձութեանց մէջ իսկ երկնային երջանկութիւն մը կ'զգայ :

\* \* \*

Բաւական է որ խղճմտանքդ քու պարտքերուդ մէջը մաքուր ըլլայ, մտածմունքդ և խոր-

հուրդներդ բարի ըլլան և գործերդ առաքինի, — ա՛լ անկից ետքը դուն զքեզ աւելի երջանիկ կըրնաս սեպել քան աշխարհիս փարթամ հարուստները :

\* \* \*

Երանի անոնց, որոնք հաւատարիմ մնալով բարոյական կեանքի բարձրագոյն նպատակին, իրենց փառքը՝ սրտի գոհունակութեան և խաղաղութեան մէջ կը փնտռեն. իսկ երջանկութիւնը՝ պարտքերու կատարման ու խղճի հանգստութեան մէջ :

\* \* \*

Մարդու խաղաղութեան և երջանկութեան գաղտնիքը կը կայանայ իւր էութեան բոլոր մասերուն ներդաշնակ գործողութեան մէջ. իսկ երբ Աստուծոյ հետ անոր յարաբերութիւնն ալ ի հաշիւ առնուի կը կայանայ անոր ամբողջովին Աստուծոյ նուիրուելուն մէջ :

\* \* \*

Մարդս երջանիկ չէ ոչ իւր բաղդով, ոչ իւր արժանաւորութիւններով, ոչ իւր գիտութեամբ, ոչ աշխարհային հաճոյքներով, ոչ առանձնութեամբ, այլ երջանիկ է միայն անստգիւտ խղճմտանքով, հոն է որ կը գտնուի խաղաղութիւն, հոգւոյ հաստատուն զուարճութիւն, որ է երջանկութիւն :

\* \* \*

Կ'ուզե՞ս որ չունենաս խղճի խայթ, կ'ուզե՞ս որ սիրտդ հանգիստ և հոգիդ ըլլայ խաղաղ, յա-



ջողութիւնդ ուրիշին ձախորդութեան մէջ մի՛  
 փնտուեր: Ձեմ կրնար երեւակայել երանութիւն մը  
 երկնային, երջանկութիւն մը հոգեկան, որ այն-  
 քան անուշ, այնքան խաղաղ ըլլայ, քան այն  
 երանութիւնը, որ կու գայ կը ծաւալի խղճի աշ-  
 խարհէն մեր սրտերուն և մեր հոգիներուն վրայ:  
 Ձեմ կարծեր որ նոյն իսկ երկնքի մէջ պահուած  
 արքայութիւնը ըլլայ այնքան երջանկաւէտ, քան  
 այն արքայութիւնը, որ մեր հոգիին մէջէն կ'սկսի  
 դնել իր հիմերը, մեր խղճի խաղաղութեան և  
 սրտի անդորրութեան վրայ:

\* \*

Գնա՛, գնա՛, հանգիստ քնացիր ով հաւա-  
 տացեալ՝ հոգ չէ որ աղքատիկ ըլլաս. հոգ չէ որ  
 ցաւած գլուխդ դրած ըլլաս քարէ կամ խոտէ  
 բարձի մը վրայ. հերի՛ք է որ սիրտդ հանգիստ,  
 միտքդ հանդարտ և խիղճդ խաղաղ է: Ա՛հ, այդ  
 քունը անմեղներու քունն է, հրեշտակներու  
 նինջը:

\* \*

Կ'ուզէ՞ք լինիլ երջանիկ,  
 երջանկութեան այս է գաղտնիք.  
 Խնչ վիճակի մէջ ալ լինիք  
 «Գոհ եղիք»:



# ՅԱԻԵԼՈՒԱԾ

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

1.

### ԿՈՆՖԵՍԻՍԻՈՍԻ ԾՐԱԳԻՐԸ

Ձինական կրօնի հիմնադիր Կոնֆուցիոսի վար-  
 դապետութեան ծուծը կը կազմեն հետեւեալ հինգ  
 բարձրագոյն առաքինութիւնները:

Ա. — Մարդասիրութիւն այսինքն սէր և կա-  
 րեկցութիւն դէպ ի մեր նմանները. — առանց  
 խարութեան:

Բ. — Արդարադատութիւն կամ հատուցումն  
 իւրաքանչիւրին ըստ արժանւոյն. — առանց կեղ-  
 ծաւորութեան:

Գ. — Հնազանդութիւն գործադրուող օրէնք-  
 ներու և կատարումն, տիրապետող կրօնքէն հաս-  
 տատուած, ձէսերու:

Դ. — Ճշմարտասիրութիւն, այսինքն արտա-  
 յայտել կատարեալ զգուանք դէպ ի կեղծն ու  
 ստութիւնը:

Ե. — Վերջապէս ճշմարտութիւն և ազնուու-  
 թիւն միշտ և ամէն բանի մէջ:



2.

ՌՈՉԻԼՏԻ ԾՐԱԳԻՐԸ

Պ. Ռոչիլտ հետեւեալ պայմանները կը դնէ գործի մէջ յաջողութիւն գտնելու համար :

1. — Գործերուդ մանր մասերուն անգամ զգուշութեամբ հոգ տար :

2. — Ամէն բանի մէջ (բացի կարեւոր խընդիրներու որոշումէն) փութկոտ և փր եղիր :

3. — Նեղութեանց համբերէ :

4. — Գործի մէջ ուղղութիւնը նուիրական ըլլայ քեզի :

5. — Ուրիշներու գործին կամ համբաւին մի՛ մնասեր երբէք :

6. — Առաքինի մարդոց հետ միայն ընկեր եղիր :

7. — Չար խորհուրդներէ միտքդ հեռու պահէ :

8. — Որեւիցէ նպատակաւ բնաւ սուտ մի՛ խօսիր :

9. — Քիչերը քեզի մտերիմ ըրէ :

10. — Երբէք մի՛ ջանար երեւիլ ինչ որ չես :

11. — Միշտ քաղաքավարութեամբ վարուէ :

12. — Պարտքդ շուտ տուր :

13. — Մի՛ ճաշակեր, մի՛ գործածեր երբէք ոգելից ըմպելիք :

14. — Եռանդեամբ աշխատէ այն բանին համար որ ուզիդ է :

Եւ ստուգիւ յաջողութիւն կը գտնես :

3.

ՇՈՐ ԴԵՂ ՄԸ

Օր մը հարցուցին մարդու մը թէ ի՞նչ կ'ընէ որ բնաւ հիւանդ չըլլար :

— Է՛հ, ինչ պիտի ընեմ, ըսաւ, սովորական ատենին ճաշ կ'ընեմ, որչափ կարելի է քիչ կ'ուտեմ, ժամանակին կը պառկիմ, ժամանակին կ'արթննամ և անմիջապէս կ'ելլամ անկողնէն, ուրիշի գործի բնաւ չեմ խառնուիր, միայն իմ գործիս կը պարապիմ, ո՛չ ուրիշի գաղտնիք կը հաղորդեմ, ո՛չ ալ ուրիշի գաղտնիքը իմանալու հետաքրքիր կ'ըլլամ, ուրիշը չեմ բամբասեր, եթէ այլք բամբասեն զիս՝ բնաւ հոգ չեմ ըներ, եթէ իմ վրաս պարսաւանաց արժանի բան մը չունիմ. իսկ եթէ ունիմ, անոնց բամբասանքէն օգտուելով, պակասութիւններս կ'ուղղեմ :

Կարողութիւնս կը ճանչնամ, չափէս աւելի ծախք չեմ ըներ, պարտք բնաւ չեմ ըներ, հարուստ ըլլալու համար ալ միտքս չեմ յոգնեցնէր եւ փոխանակ շատ ունենալով քիչով գո՛հ ըլլալու եւ կամ բնաւ գո՛հ չըլլալու, ինքզինքս վարժեցուցած եմ քիչով շատ գո՛հ ըլլալու :

Ահաւասիկ այս է իմ կեանքիս կանոնը, որուն անվրէպ հետեւելով անհանգստութեան պատճառ ունեցած եւ կամ հիւանդ եղած չեմ :



4.

Յ Բ Ա Ն Կ Լ Ի Ն Ի Պ Բ Ա Գ Ի Բ Ը

Բենիամինն Յրանկլինն, բարոյական կեանքի մը ձգտելու, իր թերութիւններն ուղղելու, բարի սովորութիւններու մէջ ինքն իրեն ամրացնելու եւ առաքինի կեանք վարելու դիտաւորութեամբ, բարի յատկութիւններու ցուցակ մը շինեց, որ է հետեւեալը .

1. Ժուժկալութիւն . — Մի՛ ուտեր այնքան, որ անասուն դառնաս . այնքան ալ մի՛ խմեր, որ գլուխդ բորբոքի :

2. Լռութիւն . — Միայն այն ատեն խօսէ՛, երբ որ քեզ եւ ուրիշներուն օգտակար է :

3. Կարգապահութիւն . — Ամէն մի բանի որոշ տեղ տուր, ամէն մի գործիդ՝ որոշ ժամանակ :

4. Վճուականութիւն . — Վճուէ՛ կատարել ինչ որ պիտի ընես եւ կատարէ ինչ որ վճուած ես :

5. Սակաւապետութիւն . — Անօգուտ ծախք մի՛ ընէր ոչ քեզ եւ ոչ ալ ուրիշներու համար . ըսել է թէ մի լինիր վատնող :

6. Ձանաւորութիւն . — Ժամանակդ երբէք մի կորսնցնէր միշտ օգտաւէտ գործով զբաղիր, ըրէ՛ ինչ որ միայն կարեւոր է :

7. Անկեղծութիւն . — Մի՛ ընտրեր խտտորնակ ձանաղարհներ եւ փոյթ տար որ միայն անկեղծութիւնն եւ պարզութիւնը մտքիդ առաջնորդ լինին :

8. Արդարութիւն . — Ոչ ոքի դէմ անիրա-

ւութիւն մի գործեր, ե ըրէ՛ ուրիշներուն ինչ որ անոնք իրաւունք ունին քեզմէ սպասելու :

9. Երկայնամտութիւն . — Չգուշացիր ծայրահեղութենէն եւ վրէժխնդիր մի՛ լինիր քեզ վիրաւորողներէն, թէպէտ եւ կարծէիր թէ անոնք արժանի են ատոր :

10. Մաքրասիրութիւն . — Ո՛չ մարմնոյդ վրայ կեղտ ունեցիր, ո՛չ շորերուդ վրայ, ոչ ա՛լ բնակարանիդ մէջ :

12. Ողջախոնքութիւն . — Անբիծ եւ մաքուր կեանք վարէ՛, որպէս զի ոչ քու հանգստութիւնդ եւ բարի համբաւդ մնաստի, ոչ ալ ուրիշինը :

13. Խոնարհութիւն . — Նմանէ՛ Յիսուսին եւ Սոկրատէսին :

5.

ՈՒՐԻՇԻՆ ԽԲԱՏ ՏԱԼՈՒ ԿԵՐՂԸ

1. — Բու ուրիշին տուած խրատդ՝ ամէնէն անաջ դուն խօսքովդ եւ վարմունքովդ ի գործ դրած պիտի ըլլաս :

2. — Ըսած խօսքերդ իմաստալից, համառօտ եւ ազդու պիտի լինին, մանաւանդ խելացի անձի մը առջեւ :

3. — Պէտք է որ այն մարդուն առջեւ համարմունք ունեցած եւ սիրելի եղած լինիս :

4. — Խրատեալն պէտք է զիտնայ թէ դուն իրեն բարեկամաբար եւ բարերարելու համար կը խօսիս :

5. — Եթէ խրատեալն աստիճանաւ եւ պատ-



ուով քեզի հաւասար է, իբրև սրտակից և ցաւակից բարեկամ, ոչ թէ իբրև խրատ, այլ խորհուրդ տալու եղանակաւ մտերմութեամբ և քաղաքավարութեամբ պէտք է խօսիս և եթէ քեզմէ ստոր է, խիստ սիրով, յարգութեամբ և ուրախութեամբ խրատելու ես :

6. — Հեզ և խոնարհ պէտք է ըլլաս և խօսակցութեանդ եղանակը մեղմ և առանց կրից լինելու է :

7. — Խրատուաւն, այդպիսի խրատներն ու ազդարարութիւնները սիրով լինելդ և անոնք հասկըցած լինելուդ համար խօսիլդ՝ կերպով մը զգացած լինելու է :

8. — Խրատելոյն խրատ տալու պատեհութիւն ունենալդ պատիւ անձին համարելու չես . ապա թէ ոչ այդ կերպով զայն խրատելու անարժան մէկը եղած լինելդ իմացնելով, նորա անձնասիրութեանը դպած կը լինիս, և տուած խրատդ յօդս կը ցնդի :

9. — Առանձին պէտք է խօսիս, ապա թէ ոչ բազմութեան մէջ խրատելը՝ զայն թշնամանել և նախատել է :

10. — Որև իցէ աստիճանաւ և պատուով քեզմէ վեր եզող անձի մը խրատ տալը մեծ տարբերութիւն է . — միայն թէ՛ թէ որ ինքն իւր խոնարհամտութեամբը քեզի արտօնութիւն տալու ըլլայ, պէտք է իբրև ո՛չ թէ խրատատու, այլ և ամենայն քաղաքավարութեամբ, ազնուութեամբ և ծանրութեամբ, իրեն խորհրդական և յիշեցուցիչ մը լինիս :

Ահա այս ամէն կերպով ամէնուն առջև յարգելի, սիրելի և ակնածելի կ'ըլլաս :

6.

ԽՐԱՏ ՄԸ ԵՐԻՏԱՍԵՐԳԱՑ

Թէև խրատներն այնքան ազդեցութիւն կ'ընեն որքան բժիշկներուն զեղերը . բայց կը գրեմ այս քանի մը տողերը՝ այն յուսով որ գոնէ երբեք տասարդի մը ազդեն : — Այս խրատներ չեն բղիթի անկէ, որ կեանքը սեռականապէս միայն ուսումնասիրած է, և որուն կենաց նաւը յաջող և անպատուար հողմերու հանդիպած է, այլ անկէ որ անընդհատ ալիքներու հետ մարտնչած, և կեանքը գործնականապէս ուսումնասիրած է :

1. Առանց անողջութեան՝ կենաց մէջ ոչ մի բան նշանակութիւն և արժէք ունի, և անողջ ըլլալու համար անհրաժեշտ է բարոյական վարժութիւն, ոչ թէ վարդապետութիւն : Մարդիկ չեն զեկավարութիւնը գաղափարներով, այլ վարժութիւնով : Կրքերու և մտլութիւններու աշխարհին մէջ, լոկ վարժութիւնը բարիին և օգտակարին աւելի ապահով առաջնորդ մըն է, քան ուրիշ վարդապետութիւն, սեւէ գաղափար եւ սեւէ գիտութիւն :

2. Անողջութենէն յետոյ, զրամը էն կարևոր բանն է կենաց մէջ . նա իր արժէքը չդիտողները չսիրեր, իսոյս կու տայ անոնցմէ, ոչ ալ կ'ախորժի զինք պաշտօններէն, կը զրկէ զանոնք ամէն վայելքէ : Բարեկամ է միայն անոնց, որք կը ձանչնան իր արժէքը և չարաչար չեն դարձածեր զայն :

3. Է՛ն պատուաւոր արհեստը կամ պաշտօնը



այն չէ որ շատ շահ կը բերէ . ոչ ալ այն որ մեծ պատիւ կը վայելէ , այլ այն է որ արգար վաստակ կը բերէ եւ ի վնաս ուրիշին չէ :

4. Ճշմարիտ քաղաքավարութիւնն անբաժանելի է վեհանձնութենէ եւ գթութենէ , եւ առանց անոնց՝ քաղաքավարութիւնը նշանակութիւն չունի :

5. Կոնջ հետ շատ մտերմութիւն մի ընէք , եւ ոչ ալ սիրային յարարերութիւն , մինչեւ որ չամուսնանաք :

6. Լաւագոյնը մի փնտտէք սրպէսզի յոռեգոյնին չհանդիպիք :

7.

**Մ Ա Ր Դ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն**

Աւետարանի պատուէրներէն է՝ նուիրականն է «սիրեցէ՛ք զմիմեանս», որուն վրայ հիմնուած է քրիստոնէական կրօնքը՝ իր բովանդակ ամբողջութեամբ :

Թէ ինչ կը բովանդակէ այս պատուիրանքը, բարոյախօսներն ու կրօնախօսները կարեն բացատրութիւնները տուած ու մեկնաբանութիւններ գրած են :

Սոյն պատուէրին մէկ հետեւութիւնն է մարդավարութիւնը : Գիտենք թէ կարենոր անդ մը ունի մարդավարութիւնը աշխարհիս մէջ եւ թէ մարդիկ իրարու հետ շարունակ չփման մէջ են նոյն մարդավարական կապերով , եւ կ'արժէ որ մարդավարութիւն ունենանք, մարդու հետ վարուիլ գիտանանք , ճանչելով որ մեր կենցաղին մէջ չկայ վայրկեան մը որ պէտք չունենանք մար-

դավարական կանոններուն : Մարդավարութիւնը ոմանց ըմբռնածին պէս կենցաղագիտութիւն մը , անկարենոր վիճակ մը չէ , որչափ կ'ըմբռնենք թէ ուսումը , գիտութիւնը ու արուեստները անհրաժեշտ կարենորութիւն մը ունին մարդոց մտաւորական ու նիւթական յոռաշղիմութեան ու զարգացումին համար , նոյնչափ պէտք է համոզումն ունենանք թէ մարդավարութիւնը սասարմ'է մեր զարգացման , մեր ազեղ բարքերու ազնուացման համար : Ընթերցողը իր կեանքին մէջ պատահած է անշուշտ բարեկիրթ ու մարդավար անձերու , գիտէ՛ թէ որքան քաղցր սպաւորութիւն մը թողած են իր վրայ , սիրած եւ համակրած է անոնց . միշտ վառ ու անշլինջ կը մնայ այդպիսիներու տեսութիւնը եւ կը յիշուին անոնց խօսակցութիւնները , անմեղ ժպիտները , կը համակրինք այդպիսի կրթուած ու պատշաճից օրէնքը յարգող մարդոց ո՛չ միայն մարդավարութեանը , այլ նաեւ անոնց հագուստին , կապուստին եւ ծայրատիճան մաքրութեան : Մարդավարութիւն կամ բարեկիրթութիւն չունենալը ազիտութենէ յոռաշղ կուգայ . բարեկիրթութիւնն ալ տարբեր գիտութիւն մ'է , ինչպէս անհրաժեշտ է մեզ համար գրականութիւն , ուսողութիւն , լեզուագիտութիւն , բնական գիտութիւն եւ այլն սովորիլ , նոյնպէս կարի իմն անհրաժեշտ է այս գիտութիւններու հետ սովորիլ նաեւ մարդավարութիւնը , եւ առանց իւրացնելու շողաքորթներու շողումիչ լեզուն եւ կեղծ ու պատիր ձևերը պէտք է կատարելապէս հմտանալ բարեկիրթութեան կանոններուն եւ



գործադրել զանոնք : Մենք մեր մասին քերականք որ մեր դպրոցականները քիչ շատ ուսումնական պաշարով մը ընթացաւարտ կ'ըլլան . բայց շատերը թողունք որ զուրկ են բարոյական կըրթութենէն, մարդավարութիւն ու բարեկրթութիւն չունին բնաւ, բնաւորութեամբ վէս ու կոշտ կը մնան, ուսումը չէ յղկած, կոկած անոնց անտաշութիւնները եւ չկրնար յղկել : Կրթական յարկեր կան որ մեծ կարեւորութիւն տուած են այս մասին, եւ դիտելի է որ այդ դպրոցներէն ելլողները աւելի բարեկիրթ եւ աւելի վարուիչ գիտցողներ կ'ըլլան, փափկութեամբ կը խօսակցին եւ չեն թերանար քաղաքավարութեան կանոններու մէջ . բայց ցաւալի է ըսել թէ ունինք կրթական յարկեր, որ բնաւ կարեւորութիւն տուած չեն տղոց ուսուցանել մարդավարութիւնը : Տղայ մը բառին բովանդակ նշանակութեամբը մարդ շինելու համար չեն բաւեր գիտութիւնները, ուսումները որ կ'աւանդուին, անոնք կ'ընդարձակեն տղուն միտքը, բան կը սորվեցնեն, սակայն անոր սիրտը ազնուացնելու համար բարոյական դաստիարակութիւնն է որ ստիպողական պէտք է ընել, եւ տղուն բնութիւնը, գէշ ունակութիւնները տաշելու համար անհրաժեշտ են նաեւ մարդավարութեան դասերը : Դպրոցական մը որ մարդավարութիւն չունի օգտակար չկրնար ըլլալ իր ընտանեաց ու իր նմաններուն : Մարդավարութիւնը ամէն կարգէ եւ երկու սեռէ մարդոց համար ստիպողական կանոն մ'է . պզտիկ տղաքները աւելի ընդունակ են իւրացնելու համար բարեկրթութեան կանոնները,

եւ անոնց մատուցելու միտքերը շուտով կ'ընդօրինակեն իրենց ծնողաց եւ ուսուցիչներուն բնաւորութիւնը . ուստի պէտք է որ ծնողք բարեկիրթ ըլլան ու ոչ միայն իրենց տուներուն մէջ տղոց խօսին մարդավարութեան կանոններուն վրայ, այլ նաեւ անձին օրինակաւ մղեն տղաքները բարեբարոյութեան ու բարեկրթութեան սահմանին մէջ : Ի՞նչ կ'ըլլայ այն տղեկը, որ կը յանձնուի կոպիտ, տմարդի եւ անբարեկիրթ ուսուցչի մը խնամոց . ի՞նչ կ'ըլլայ կ'ըսեմ, այդ խմորը կոշտ մասններու տակ . տափակ ու այլանդակ զանգուած մը . ուրեմն հարկ է զգուշանալ այնպիսիներէ, որոնք բնաւ հոգ չունին տղոց բարեկրթութեան մասին : Բայց ծնողք եւ դպրոցական վարչութիւնք շատ անգամ ոչ միայն այս կէտը ուշադրութեան չեն առներ, այլ նաեւ տեղի կու տան որ բարոյական կրթութիւն չունեցող անուղղայ ուսուցիչներ պաշտօն ունենան վարժարանաց մէջ ի վնաս անմեղ մանուկներու . աւելի լաւ է տղաքները իրենք իրենց թողուլ, քան թէ այդպիսիներու յանձնել զանոնք : Մենք որ հիմակ ամէն ժամանակէ աւելի խնամ տանիլ կ'ուզենք մեր վարժարաններուն ու մեր տղաքները գիտական, գրական կուռ ծանօթութիւններով եւ մեր ծրագիրները շատ մը ուսումներով կը ծանրարեւենք, կ'արժէ նաեւ որ չմոռնանք մեր տղոց սովորեցնել մարդավարութիւնը, զգուշացնելով այն անկիրթ ու կոպիտ ուսուցիչներէն, որոնք ի զուր կը վատնեն մեր տղոց թանկագին ժամերը :

Մ. Կ. ԱՂԱԿՆՈՒՆԻ

Վ Ե Ր Ձ







թ. 116

2226

« Ազգային գրադարան



NL0028862



19

Per

2168